Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
1404

1 9 99

43816-Ա-Ե.

ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆՔ
ՄՈԼԻԷՐԻ

# ԹԱՐԹԻՒՖ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ
Ա. Կ. ՏԷՏԷԵԱՆ

1874
28278-62

*ԶՄԻՒՌՆԻԱ*
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ
1874

Հք. 1406
1404-40
Գ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ*

Ահաւասիկ Թատրերգութիւն մ'որ շատ աղմուկ հանեց եւ որ երկար ժամանակ հալածանք կրեց. մէջի դերակատարները աղէկ ցուցուցին որ աւելի կարողացող են Գաղղիոյ մէջ բան զամեն անոնք՝ զորս մինչեւ ցայժմ խաղցուցած եմ: Մարքիզները, պչրասիրուհիները, այրեդցիները եւ բժիշկները ինքզինքնին ներկայացուած տեսնելով՝ լռութեամբ համբերեցին եւ այնպէս մը կեղծեցին թէ երբ իրենց նկարապատկերը ներկայացուած տեսան, հասարակութեան հետ՝ զուարճութիւն կ'ըզգան. բայց կեղծաւորները չկրցան այս կատակը կլնել, նախ՝ խրտչելու պէս ըրին, եւ տարօրինակ համարեցան թէ ինտոր յանդգնած եմ իրենց կեղծուպատիր բնաւորութիւնները ներկայացնել եւ աղարտել ուզել արհեստ մը՝ որու մէջ այնքան պարկեշտ մարդիկ կը միջամտեն: Այս յանցանքիս չուզեցին երբէք ներել, եւ ամենքը զարհուրելի կատաղութեամբ իմ կատակերգութեան դէմ զինեցան: Հոգ չունեցան որ զիրենք վիրաւորող կողմէն յարձակմունք ընեն, այս բանիս համար իրենք շատ քաղաքագէտ են, եւ շատ աղէկ գիտեն այնպիսի կերպով վարուիլ որ իրենց սրտին խորը երեւան հանեն: Իրենց գովելի սովորութեան համեմատ՝ Աստուծոյ դատովը ծածկեցին իրենց շահօգուտները. եւ Թարթիւֆը՝ իրենց բերնին մէջ, այնպիսի զուանդերգութիւն մ'է որ բարեպաշտութեան վնաս կը բերէ: Մէկ ծայրէն մինչեւ միւսը նողկալի զարշութեամբ լեցուն է, եւ մէջը բան մը չկայ որ հրոյ արժանի չըլլայ: Մէջ գտնուած բոլոր վանկերը հակակրօն են. շարժմունքն իսկ յանցական. եւ աչաց ամենափոքր թարթը, եւ գլխոյ ամենափոքր երերումը, յաջ եւ յահեակ առնուած ամենափոքր քայլը գաղտնիք կը ծածկեն, զորս 'ի վնաս իմ մեկնելու միջոց կը գտնեն:

Շատ աշխատեցայ որ իմ բարեկամաց լրջամտութեան, եւ հասարակութեան քննադատութեան ենթարկեմ զայն. կրցածիս չափ անոր մէջ մտցուցած ուղղագրութիւնքս, թագաւորին ու թագուհւոյն դատողութիւնը որ զայն տեսան. մեծափառ իշխաններու եւ պատուամեծար նախարարներու հաւանութիւնը, զոր իրենց ներկայութեամբ պատուեցին, բարեպաշտ անձանց վըկայութիւնը զոր օգտակար գտան, այս ամենը ոչինչ օգուտ չըրաւ: Անկարելի է որ իրենց նպատակէն կասին, եւ դեռ ամեն օր հասարակութեան մէջ շաղփաղփախօս եռանդնոտներ յաչաղախօսել կը տան, որոնք ջերմեռանդաբար կը նախատեն ու գթասրտաբար կը դատապարտեն զիս:

Իրենց ամեն ըսելու կարող եղած բաներուն վրայ շատ քիչ հոգ ունենալու էի, թէ որ իրենց բանեցուցած մեքենայութեամբք՝ իմ պատուած անձինքը ինձ թշնամի չընէին եւ իրենց կողմ չդարձնէին ճշմարիտ բարեպաշտներ՝ ո-

*Այս յառաջաբանը՝ Թարթիւֆի առաջին տպագրութեան համար գրած էր Մոլիէր, որ 1669էն 'ի վեր ընդունուեցաւ, Բոլէօյի Բերտոնին վրայ երեւցած ներկայացմանը՝ հանդէպ մ'արգելման ու առաջինները՝ երեւան դուրս եկաւ:

րոնց ուղղամտութիւնը կը խանգարեն, եւ որոնք երկնից շահօգտից վրայ ունեցած ջերմեռանդութիւննին դիւրահամոզ են իրենց տալ ուզուած տպաւորութիւնները ընդունելու: Ահա՛ ինչ բան կը պարտաւորէ զիս որ ինքզինքս պաշտպանեմ: Ճշմարիտ բարեկրօններու առջեւ միայն կ'ուզեմ որ ինքզինքս ամեն տեղ արդարացնեմ իմ կատակերգութեանս ընթացավարութեան վրայ. եւ բոլոր սրտօքս, կ'երդմնեցնեմ զիրենք որ երբէք բան մը չդատապարտեն՝ զայն տեսնելէ առաջ, ամեն կանխազգեցութիւններէ հեռի կենան, եւ իրենց ձեռք գործիք չընեն այնպիսի մարդոց կիրքերը՝ որոնց կեղծակերպութիւնները զիրենք կ'անպատուեն:

Թէ որ մէկն իմ կատակերգութիւնս ուղղամտութեամբ քննելու աշխատութիւնն առնելու ըլլայ, պիտի տեսնէ, անշուշտ, որ նոյնի մէջ իմ դիտաւորութիւններս յամենայն ուրեք անմեղ են, եւ ոչ եւ կերպով խիք կը հեգնէ այն բաները զորս պարտինք պատուել. եւ նիւթին փափկանկատութեան պահանջած ամեն շրջահայեցութեամբը յարդարած եմ. եւ ձեռքէս եկածին չափ աշխատած եմ որ բոլոր ճարտարութիւնս ու խնամքս բանեցնեմ որպէս զի որոշել տամ կեղծապաշտ անձը ճշմարիտ բարեպաշտէ: Այս բանիս համար երկու բովանդակ արարուածներ 'ի կիր արկի որպէս զի խիկարիս գալուստը պատրաստեմ: Ունկնդիրը՝ վայրկեան մ'իսկ երկուանաց մէջ չմնար. արդէն իրեն տրուած նշաններէն կը ճանչցուի. եւ մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը, խօսք մը չըսեր ու գործ մը չըներ, որով չար մարդու մը բնաւորութիւնը չը նկարագրէ հանդիսականնաց, եւ ակն յանդիման չհանէ ճշմարիտ բարեկրօնի մը բնութիւնները որու հանդէպ կը կացուցանեմ:

Գիտեմ աղէկ, որ 'ի պատասխանի, այն պարոնները կ'աշխատին առարկելու թէ այսպիսի նիւթերու վրայ խօսելու տեղը՝ բնաւ թէատրոնը չէ. բայց ես, իրենց ներողամտութիւնը խնդրելով, կը հարցնեմ թէ այս սկրան սկըզբունքը ինչ բանի վրայ կը հիմնեն: Այս այնպիսի առաջարկութիւն մ'է զոր իբր թուխք կ'ընեն, եւ ոչ մէկ կերպով կ'ապացուցանեն. եւ, անտարակոյս, դժուարին բան չէ իրենց ցուցնելը թէ կատակերգութիւնը՝ նախնեաց մէջ՝ իր սկիզբը կրօնքէն առաւ, եւ իրենց գաղտնեաց մէկ մասը կը կազմէր. եւ մեր դրացի Սպանիացիք, գրեթէ հանդէս մը չեն տօնախմբեր ուր կատակերգութիւն խառնուած չըլլայ. եւ, նոյն իսկ մեր մէջ, իր սկզբնաւորութը հոգեւոր եղբայրակցութեան մը պարտաւոր է որու կը պատկանի դեռ այսօրուան օր Պուրկօնեի ապարանքը. եւ որ վայր մ'է որ տրուեցաւ որպէս զի հոն մեր հաւատքին ամենէ կարեւոր գաղտնիքը ներկայացուին. եւ դեռ կը տեսնուին կոթական գրերով տպուած կատակերգութիւններ՝ Սորպոնի վարդապետի անուամբ. եւ առանց այնքան հեռի երթալ փնտռելու, մեր ժամանակներն իսկ, Պ. Քորնէյլի սրբազան կտորները ներկայացուած են, որոնք բոլոր Գաղղիոյ հիացումը գրաւած են:

Թէ որ կատակերգութեան 'ի գործ դրուիլը մարդոց մոլութիւնները ուղղել է, պատճառ մը չեմ տեսներ թէ ինչու համար առանձնաշնորհեալներ ըլլալու են: Այս՝ Պետութեան մէջ, բոլոր միւսներէն աւելի վտանգաւոր հետեւութիւններ ունի. եւ տեսանք ալ որ թէատրոնը ուղղարկելու մեծ առաքի-



նութիւնն ունի: Ծանրաբարոյ բարոյականի մ'ամենէ վարպետօրէն հարուածները՝ ըստ մեծի մասին, նուազ զօրաւոր են, քան երգիծանութեան տուածներէն. եւ բան մ'այնքան աւելի չդպչիր մարդոց մեծագոյն մասին՝ որքան իրենց պակասութեանց նկարագիրը: Մոլութեանց մեծ հարուած մի տալ է, երբ զանոնք ամեն մարդոց առջեւ նշաւակութեան կը հանուի: Եպերանաց՝ դիւրութեամբ կը համբերուի, բայց հեգնութեան՝ բնաւ չհամբերուիր: Մարդս՝ չար կ'ուզէ ըլլալ, բայց երբէք չուզեր ծաղրարժան ըլլալ:

Զիս կը պախարակեն թէ իմ խարդախիս բերանը բարեպաշտութեան խօսքեր դրած եմ: Ի՞նչ ընէի, կրնայի՞ ուրիշ կերպ ընել որպէս զի կեղծաւորի մը բնութիւնը լաւ մը նկարագրեմ: Բաւական էր որ ըստ կարծեացս, ճանաչցնել տայի յանցաւոր առիթները որք զինք խօսեցնել կը տան ամեն բան, եւ նուազեցնէի նուիրական բառերը, որոնցմով ամեն մարդ դժուարաւ լսելու էր զինք թէ 'ի չարն գործ կ'ածէ: — Բայց ինք չորրորդ արարուածին մէջ չարակամ բարոյականով մը սկիզբ կ'ընէ: — Բայց այս բարոյականը է՞ այնպիսի բան մի որմէ ամեն մարդու ականջները չձանձրանայ: Իմ կատակերգութեանս մէջ նոր բան մի կ'ըսէ՞: Եւ կրնա՞յ վախցուիլ որ այսքան ընդհանրապէս անարգուած բաները մարդոց մտքին վրայ տպաւորութիւն մ'ընեն. զանոնք թէատրոնին վրայ ցուցնելով վտանգաւոր երեւցնեմ. չարագործի մը բերնէ ելած հեղինակութիւն մ'ընդունին: Աւանիկ բան մի բնաւին չնշմարուիր. եւ Թ—րթէ—ֆի կատակերգութիւնը պէտք է հաւանութիւն գտնէ, եթէ ոչ՝ ամեն կատակերգութիւնները պէտք է ընդհանրապէս դատապարտուին:

Ահա՛ ինչ բանի ետեւէ ինկած են կատաղաբար ատենէ մ'ի վեր. եւ երբէք այսքան բռնութեամբ յարձակումն եղած չէ թէատրոնի վրայ: Չեմ կըրնար ուրանալ թէ եղած են Եկեղեցւոյ Հայրապետք որք դատապարտած են զկատակերգութիւն. բայց եւ այնպէս մարդ մի չկրնար ուրանալ ինձ թէ անոնցմէ եղած են ոմանք որ քիչ մ'աւելի մեղմօրէն հաշտախօսած են: Այս կերպով, վկայութիւնը՝ որու բնադատութեան կռթնելու կը յաւակնին, յայտ մասին ջնջուած է. եւ բոլոր հետեւութիւնը՝ որ նոյն հանճարի տէր լուսաւորեալ մտաց այս կարծիքներուն զանազանութենէ կրնայ քաղուիլ, սա է որ կատակերգութիւնը տարբեր կերպով ըմբռնած են, ոմանք զայն իր անմեղութեան մէջ համարած են, մինչդեռ այլք զայն իր խանգարման մէջ սեպած են, եւ շփոթած են այն ամեն կոպիտ տեսարաններու հետ՝ զորս խայտառակութեան տեսարան անուանելու իրաւունք ունեցած են շատեր:

Եւ արդարեւ, ըստ որում իրողութեանց վրայ բանախօսելու է եւ ոչ թէ բառերու, եւ հակառակութեանց մեծագոյն մասն ալ իրարու խօսք չհասկընալէ, եւ հակառակ բաները միեւնոյն խօսքի մէջ ամփոփելէ առաջ կը գան, երկդիմութեան քօղը միայն վերցնել պէտք է, եւ նայիլ թէ ինչ է կատակերգութիւնը ըստ ինքեան, տեսնելու համար որ դատապարտելի՞ բան է: Անշուշտ պիտի ճանչցուի, թէ ուրիշ բան մի չըլլալով այլ միայն հանճարահնար բանաստեղծութիւն մի, որ, իր զուարճալի դասերովը մարդոց թերութիւնները կը պախարակէ, առանց անիրաւութեան չպիտի կարենան զայն բնադատելու. եւ թէ որ այս նիւթիս վրայօք նախնեաց վկայութիւնը լսել ուզենք, մեզ

պիտ՝ ըսէ թէ իր ամենէ երեւելի փիլիսոփաները գովութիւն տուած են կատակերգութեան, իրենք՝ որ խստապահանջ իմաստութիւն կը վարդապետէին, եւ որք դեռ կը հաւատան իրենց դարուն մոլութեանց: Այն պիտի ցուցնէ մեզ թէ Արիստոտել երեւոյթներ զոհաբերած է թէատրոնի մէջ, եւ խնամք ունեցած է որ կատակերգութիւն շինելու արուեստին կանոնները սահմանէ: Մեզ պիտի ուսուցնէ թէ իր մարդոց ամենէ երեւելիները, նոյն իսկ արժանաւորագոյներէ առաջինները՝ փառք ստացան թատրերգութիւններ հեղինակելով. եւ ուրիշներ ալ գտնուեցան որ իրենց հեղինակած կտորները՝ հասարակութեան առջեւ բերնուց խօսիլը չարհամարհեցին. թէ Յունաստան այս արուեստով իր պատիւն արտերեւեց, թէ փառաւոր մրցանակներով եւ թէ շքեղակառոյց թէատրոններով որոնցմով ուզեց որ պատուէ զայն. եւ թէ հուսկ ուրեմն Հռովմի մէջ, սոյն այս արուեստը տարօրինակ պատիւներ ստացաւ, չեմ ըսեր ցոփակեաց Հռովմի եւ Կայսերաց խառնակեցութեանց ժամանակները, այլ բարեկիրթ Հռովմի մէջ, հիւպատոսաց իմաստութեամբ կառավարութեան, եւ հռովմէական առաքինութեան ուժգրութեան ժամանակները:

Կը խոստովանիմ որ եղան ժամանակներ ուր կատակերգութիւնը աղճատեցաւ: Եւ ի՞նչ բան աշխարհի մէջ ամեն օր չաղճատիր բնաւ: Այնքան անմեղ բան չգտնուիր, որու մէջ մարդիկ մեղք չմուծեն. օգտակար արուեստ մը չգտնուիր, որու նպատակները յեղաշրջելու կարող չըլլան. ինքնիրեն բարի բան մը չգտնուիր, զոր 'ի վատթարս գործածման դարձնելու չկարենան: Բժշկութիւնը շահաբեր արհեստ մի է, եւ ամենայն որ անկէ կը պատկառի իբր մեր ունեցած բաներէն ամենէ գերազանցերէն մին. այսու ամենայնիւ ատեն եղաւ որ մարդոց ատելի եղաւ, եւ շատ անգամ մարդիկը թիւնաւորելու արուեստ սեպուեցաւ: Փիլիսոփայութիւնը՝ երկնից պարգեւ մի է. այն տրուեցաւ մեզ, որպէս զի բնութեան մէջ եղած հրաշալի բաները նկատելով՝ խելքերնիս՝ Աստուած մը ճանչնելու միտեցնենք. բայց սակայն անծանօթ բան չէ որ յաճախ անոր պաշտօնը շեղեցին, եւ հրապարակաւ ամբարշտութիւն գործելու պնդեցան: Ամենէ սրբազան բաներն իսկ մարդոց խանգարմունքներէն զերծ չեն, եւ կը տեսնենք ամեն օր անօրէն մարդիկ, որ բարեպաշտութիւնը կը զեղծանեն եւ զայն ամենէ մեծ մեղաց չարաչար գործ կ'ածեն: Բայց այս բանիս համար թոյլ տալ պէտք չէ որ հարկ եղած խտրութիւններն ըլլուին: Խանգարիչներու չարութեամբը խանգարուած իրաց լաւութիւնը կեղծ հետեւութեան մը մէջ պատրուակելու չէ: Զարաչար գործածութիւնը արուեստին դիտաւորութիւններէն զատելու է. եւ ըստ որում միտքերնէս իսկ չանցնիր թէ արգիլելու է բժշկութիւնը, Հռովմայէ վտարուած ըլլալուն, եւ ոչ փիլիսոփայութիւնը, Աթէնքի մէջ հրապարակաւ դատապարտուած ըլլալուն համար, նոյնպէս ալ արգելք դնել ուզելու չէ կատակերգութեան՝ ատեն ատեն դատապարտուած ըլլալուն համար: Այս քննադատութիւնը իր առիթներն ունէր, որոնք հոս ենթակայութիւն չունին բնաւ: Այն՝ իր տեսնելու կարող եղածին մէջ պարփակեցաւ. պէտք չենք որ զայն իր կոպարներէն արտասահման ընենք, հարկ եղածէն անդին ձիգ ձգել քնենք, եւ անմեղը՝ յանցաւորին հետ ընդգրկել տանք իրեն: Այն կատակերգութիւնը որու վրայ յարձակելու մտադիր էր, բնաւին մեր արգիլել ուզած կատակերգութիւնը չէ: Աղէկ զգուշանալու է զայն՝ ատոր հետ շփոթելէ: Ասոնք երկու անձեր են որոնց բնաւորութիւնը համայնովին իրարու հակառակ են: Մէկը միւսին հետ ուրիշ առնչութիւն մի չունի, բայց եթէ անուան նմանութեամբ. եւ սոսկալի անիրաւութիւն մի եղած պիտի ըլլար դատապարտել ուզելը Օլիմպիէն՝ որ բարեպաշտուհի մի էր, վասն զի Օլիմպիէ մի ալ կայ՝ որ ցոփակեցուհի մի էր: Այսպիսի դատակնիք, անշուշտ, աշխարհի մէջ մեծ անկարգութիւն պիտի պատճառէին: Այսու եղանակաւ բան մը չպիտի մնար որ դատապարտուած չըլլայ. եւ ըստ որում այս անաչառութիւնը չպահուիր ուրիշ այնքան բաներու որոնց զեղծմունք կ'ըլլայ ամեն օր, նոյն ներողամտութիւնը պէտք էր նաեւ կատակերգութեան ալ ըլլուէր, ու հաւանութիւն տրուէր խաղուց թէատրոնի՝ որու մէջ կրթութեան ու համեստութեան տիրելը պիտի տեսնուի:



Գիտեմ որ կը գտնուին այնպիսի մարդիկ որոնց դիւրազգացութիւնը չկրնար տանիլ որեւիցէ կատակերգութեան, որոնք կ'ըսեն թէ ամենէ համեստ խաղերը ամենէ վտանգաւորներն են. թէ անոնց մէջ նկարագրուած կիրքերը որքան որ առաքինութեամբ զեղուն՝ այնքան ալ սրտաշարժ են, եւ թէ սրտերը կըզգածուին այս տեսակ ներկայացմամբը: Խելքս չհասնիր թէ ի՛նչ մեծ մեղք կրնայ համարուիլ պարկեշտ կիրք մը տեսնելով սրտի շարժիլը. եւ առաքինութեան բարձր աստիճան մ'է այն կատարեալ անզգայութիւնը՝ ուր որ մեր սիրտը բարձրացնել կ'ուզեն: Կը տարակուսիմ որ այսպիսի մեծ կատարելութիւն մի մարդուս բնութեանը կարողութեան մէջ կարենայ գտնուիլ. եւ չեմ գիտեր թէ աւելի աղէկ չըլլար որ ջանացուի որ մարդոց կիրքերը ուղղուին եւ մեղմանան, քան թէ ուզել որ անոնք բոլորովին անհետանան: Կը խոստովանիմ որ կան վայրեր ուր յաճախելը թէատրոն երթալէ աւելի լաւ է, եւ թէ որ պարսաւել ուզուի այն ամեն բաները որոնք ուղղակի կերպով Աստուծոյ եւ մեր փրկութեան չեն նկատիր, հաստատ է որ թատրերգութիւնն ալ ըլլալ պէտք է, եւ զէշ չեմ գտներ որ բոլոր մնացորդ բաներուն հետ դատապարտուի. սակայն ենթադրելով, ինչպէս որ ճշմարիտ է, թէ բարեպաշտութեան գործադրութիւնները ժամընդմէջներ շնորհեն մեզ, եւ մարդիկ զբօսնլոյ պէտք զգան, կը պնդեմ որ թատրերգութենէ անմեղ զուարճութիւն մը չկրնար գտնուիլ: Քիչ մը երկար բարակ խօսեցայ. ալ վերջացնեմ մեծ իշխանի* մը մէկ խօսքովը՝ Թարթիւֆի կատակերգութեան վրայ:

Այս խաղին արգիլմանէն ութ օր ետք, արքունեաց առջեւ ներկայացուցին խաղ մը [illegible] անունով. Թագաւորը՝ արձակման ատեն ըսաւ մեծ իշխանին. [illegible] որու կը պատասխանէ իշխանը. [illegible]

*Մեծն Գօնտէ:

## ԱՌԱՋԻՆ ԱՂԵՐՍԱԳԻՐ

Ներկայացուած արքային, 'ի վերայ կատակերգութեան Թարթիւֆի՝ հասա-
րակութեան առջեւ ներկայացուելէն առաջ:

Վեհափառ Տէր,

Թատրերգութեան պարտքը՝ զմարդիկ զուարճացնելով զանոնք յուղղութիւն
ածել ըլլալով, իմ գտնուած պաշտօնիս մէջ՝ կարծեցի, որ ծիծաղելի նկարա-
գրութեամբք, իմ դարուս մոլութեանց վրայ յարձակում ընելէ աւելի լաւ բան
չունիմ ընելու. և ինչպէս որ անտարակոյս կեղծաւորութիւնը անոնց ամենէ
գործածական, ամենէ տաղտկալի և ամենէ վտանգաւորներէն մին է, երեւակայեցի,
Վեհափառ Տէր, որ Ձեր թագաւորութեան բոլոր պարկեշտ մարդոց պզտիկ
ծառայութիւն մի ըրած չըլլալ ըլլայի, թէ որ չինէի կատակերգութիւն մ'որ
կեղծաւորներն անուանարկէր, և ինչպէս որ պէտք է երեւան հանէր անհնարա-
ճիգ բարեպաշտներու իրենց սովորութիւն ըրած բոլոր կեղծկերպութիւնները
և 'ի կրօնապաշտութեան այն դրամանենգներու բոլոր գաղտնածածուկ նենգու-
թիւնները, որք խարդախ ջերմեռանդութեամբ և իմաստակական զեղծարու-
թեամբ մը մարդիկը ծուղակել կ'ուզեն,

Ես ըրի, Վեհափառ Տէր, այդ թատրերգութիւնը, ըստ կարծեացս, այն
ամեն հոգածութեամբ ու շրջահայեցութեամբ որ նիւթին փափկապահանջու-
թիւնը կրնար խնդրել. և որպէս զի լաւ ևս պաշտպանեմ այն յարգանքն ու
պատիւը զոր պարտիմք առ անկեղծ բարեպաշտներ, ընտրութիւն ըրի, որ-
չափ որ կրցայ այն բնաւորութեան՝ որու դպչելու էի. երկիմաստ բան մը չթո-
ղուցի. կրճատեցի այն բաները որ կրնային բարին՝ չարին հետ շփոթել, և այս
նկարագրութեան մէջ՝ միայն արտաքին գոյներ և խակական բառեր գործածե-
ցի, որք խկոյն ճանաչեցնել կը տան ճշմարիտ և հարազատ կեղծաւորը.

Այսու ամենայնիւ իմ ամեն զգուշութիւններս անօգուտ եղան: Հաւատոյ
նիւթոց մասին Ձեր սրտին փափկազգացութենէ օգուտ քաղեցին, Վեհափառ
Տէր, և այն կողմէ միայն կրցան ըմբռնել զՁեզ ուրկէ կրնայիք բռնուիլ, ը-
սել կ'ուզեմ նուիրական բաներու պատկառանաց կողմէ: Կեղծաւորները՝ ձեռ-
քի տակէ, Ձեր Վեհափառութեան քով շնորհք գտնելու ճարպիկութիւնն ու-
նեցան. այս պղնդակ մարդիկ օրինակս խափանել տուին, թէև ինքնին անմեղ
էր, ու թէև յարացոյց ալ գտած էին:

Այս երկասիրութեանս խափանումը թէև ինծ զգալի հարուած մի էր, այլ
զմբաղդութիւնս թեթեւցաւ Ձեր Վեհափառութեան այս խնդրութեան վրայօք
տուած լուսաբանութենէ. և հաւատացի, Վեհափառ Տէր, թէ տրտնջելու ա-
ղի մը չունէի, երբ բարութիւն ունեցաք արտայայտելու թէ բան մի չունիք ը-
սելու այս կատակերգութեան՝ զոր արգիլած էիք հրապարակելու:

Բայց, ակամայ աշխարհի ամենէ մեծ և լուսաւորեալ արքային այն յաղթա-
կան արտայայտութեան, դարձեալ՝ ակամայ Սրբազան Գաւառապետին և մեր Ա-



ռաջնորդաց մեծագոյն մասին հաւանութեան, որոնց ամենը՝ որոնց առջև մաս-
նաւորապէս ընթերցայ աշխատասիրութիւնս, Ձեր Վեհափառութեան զգաց-
մանց հետ համաձայն գտնուեցան. ակամայ ամեն ասոնց, կ'ըսեմ, . . . ի ժողո-
վրդապետէն շարադրուած գիրք մը կը տեսնուի, որ այս բոլոր օգոստափառ վը-
կայութիւնները բացարձակապէս կը հերքէ: Ձեր Վեհափառութիւնը ինչ որ
ուզէ թող խօսի. Ս. Գաւառապետը և Ս. Առաջնորդները ինչ վճիռ որ ու-
զեն թող արձակեն. կատակերգութիւնս՝ իրենց տեսնելէն առաջ սատանայական
է, սատանայական է նաև ուղեղս. ես մազզեաց և մարդու հագուստով դև մի
եմ, անառակ մի, ամբարիշտ մի օրինակական տանջանաց արժանաւոր: Վնասաբե-
րութիւնս՝ 'ի հրապարակի կրակով քաւուիլը բաւական չէ, ես այս կերպով շատ
աժան պրծած կ'ըլլայի. այն բարի նենգաւորին զթասէր ջերմեռանդութիւնը
այն տեղ կանգ առնելու հոգ չըներ. չուզեր որ Աստուծոյ գթարութեանն
արժանանամ, այլ կ'ուզէ որ 'ի հարկէ դատապարտուիմ, ասիկա վճռուած խըն-
դիր մի է: Այս գրքոյկը, Վեհափառ Տէր, ներկայացուեցաւ Ձեր Վեհափա-
ռութեան. և անտարակոյս Դուք ինքնին կրնաք դատել թէ ինծի համար որ-
քան վշտացուցիչ բան է որ այս պարոնայց նախատանաց առարկայն ըլլամ ամեն
օր. այսպիսի զրպարտութիւնները աշխարհի մէջ ո՛րքան վնաս կրնան հասցնել,
թէ որ թոյլատրուին. և վերջապէս ինչ շահօգուտ կ'ունենամ իր բարուրանք-
ներէն ինքզինքս անբասիր կացուցանելու, և ժողովրդեան ցուցնելու թէ կատակ-
երգութիւնս ուրիշ բան չէ բայց եթէ ինչ որ կը պահանջուի որ ըլլայ: Չպի-
տի ըսեմ, Վեհափառ Տէր, թէ ինչ կրնայի խնդրել պատւոյս համար և եր-
կասիրութեանս անմեղութիւնը բոլոր հասարակութեան առջև արդարացնելու
համար. Ձեզի պէս լուսաւորեալ թագաւորները պէտք չունին որ նշանակուի
իրենց թէ ինչ բան կը բաղձացուի. կը տեսնեն, Աստուծոյ պէս, մեր պիտոյքն
ու կարիքը, և գիտեն, մեզմէ աղէկ, մեզ ինչ շնորհել պէտք են: Բաւ է ինծ
որ իմ շահօգուտները Ձեր Վեհափառութեան ձեռաց մէջ դնեմ, և ակնածա-
նօք սպասեմ Իրմէ, ինչ որ տար վրայօք հրամայելու պիտի բարեհաճի:

## ԵՐԿՐՈՐԴ ԱՂԵՐՍԱԳԻՐ*)

*Ներկայացուած արքային՝ իր բանակին մէջ, Փլանդրիոյ Լիլ քաղաքին առջև, 'ի Պարոնայց Լա Թօրլիէր եւ Լա Կրանժ, կատակերգակք Նորին Վեհափառութեան, եւ Թատրընկերք Պ. Մոլիէրի, վասն արգիլման ներկայացման Թարթիւֆի որ դրուեցաւ 'ի 6 օգոստոսի 1667, մինչ 'ի նոր արտօնութիւն Նորին Վեհափառութեան :*

Վեհափառ Տէր,

Իմ կողմէս մեծ յանդգնութիւն մի է գալ ձանձրացնել մեծ թագաւոր մը իր փառաւոր աշխարհակալութեանց մէջ. բայց այս իմ եղած վիճակիս մէջ, ուր տեղ երթամ, Վեհափառ Տէր, պաշտպանութիւն գտնեմ, բացի այն տեղէ ուրկէ կը հայցեմ. և զիս ընկճող տէրութեան իշխանութիւնին դէմ՝ որու կրնամ թախանձել, բացի տէրութեան և իշխանութեան աղբիւրէն, բացի բացարձակ հրամանաց արդար բաշխիչէն, բացի ամեն բանի տէր և դատաւոր վեհապետէն:

Հոս իմ կատակերգութիւնս, Վեհափառ Տէր, չկրցաւ Ձեր Վեհափառութեան բարութիւնները վայելել: Փուճ տեղ աշխատեցայ որ անոր մակագիրը Զրպարտիչի փոխեմ և աշխարհացի կերպարանքի տակ՝ նշաւակը ծպտեցնեմ: Անօգուտ եղաւ հագցնել անոր պզտիկ գլխարկ մը, երկայն մազեր, մեծ փողկապ մը, սուր մը, և բոլոր վերարկուին վրայ ծոպանկուածներ. շատ հատուածներու մէջ քաղցրամեղմութիւններ մտցնել, և խնամով կրճատել ինչ որ իմ կերպաւորել ուզած անձին պատկերը՝ այս երևելի նենգաւորաց աչքին պատրուակ մ'իսկ տալու կարող ըլլալը դատեցի. ասոնց ամենը բանի մը չծառայեցին, Գաղտադաւութիւնը նորէն քնաթափ եղաւ պարզ մակաբերութեանց շնորհիւ զորս կրցան ընել ատոր վրայօք: Հնար գտան խարդաւանելու այնպիսի մարդիկ՝ որ ուրիշ ամեն բանի մէջ շատ մեծ զգուշութիւն կ'ընեն որ չխարդաւանուին†): Կատակերգութիւնս հազիւ թէ երևցաւ, յանկարծ շանթահար եղաւ հարուածով պետութեան մը՝ որու պատկառանք ընել հարկ կը դրուի վրանիս. և այս միջադէպիս մէջ՝ ինքզինքս այս փոթորիկին խստութենէ ճողոպրեցնելու համար ինչ կրնամ ընել, բայց եթէ ըսել՝ թէ Ձեր Վեհափառութիւնը բարութիւն ունեցած էր անոր ներկայացման արտօնութիւնն տալ ինձ,

*) Թագաւորը՝ Մոլիէրի առաջին աղերսագրին վրայ, արտօնութիւն տուած էր որ Թարթիւֆը ներկայացուի: Մոլիէր անոր մակագիրը փոխեց ու Զրպարտիչ անուանեց, Թարթիւֆի անունն ալ փոխեց Բանիւլֆի: Այսու ամենայնիւ խաղարկութիւնն հետեւեալ օրէն ալ խափանեցաւ, ինչպէս որ այս երկրորդ աղերսագրէն կը տեսնուի:

†) Լամուանեօն առաջին նախագահը՝ որ խափանել տուած էր խաղարկութիւնը:



և չէի կարծեր որ հարկ էր որ մէկ ուրիշէ մը երթայի այս արտօնութիւնը խնդրելու, վասն զի ինքն էր միայն որ զայն կ'արգելլէր:

Չեմ տարակուսիր, Վեհափառ Տէր, որ իմ կատակերգութեանս մէջ նկարագրած մարդիկս, Ձեր Վեհափառութեան քով ճարպիկ հնարամիջոցներ չբանեցնեն, և իրենց կողմ չհակեցնեն, ինչպէս որ արդէն ըրին, ճշմարիտ բարեպաշտներ, որք որքան որ յօժարակամ են պատրուելու, այնքան ալ դիւրիշները ինքզինքնուն վրայօք դատելու: Իրենց ամեն դիտաւորութեանց անոյշ գոյներ տալու ճարպիկութիւնն ունին: Յարտաքուստ ինքզինքնին ինչպէս ալ կեղծանեն՝ Աստուծոյ շահօգուտը չէ բնաւին որ իրենց սիրտը կը շարժէ, անոնք՝ ատոր ապացոյցը բաւական տուին, առանց խօսք մ'ընելու համբերելով այն կատակերգութեանց որոնք շատ անգամ հրապարակաւ խաղցուեցան: Այն կատակերգութիւնները՝ միայն աստուածպաշտութեան ու կրօնքի վրայ յարձակում կ'ընէին, որոնց վրայօք շատ քիչ հոգ կը տանին. բայց այս կատակերգութիւնը՝ նոյն ինքն իրենց անձանց վրայ կը յարձակի և զիրենք կը ներկայացնէ, ահա այս է որու չեն կրնար տանիլ: Չեն կրնար ներել ինձ՝ իրենց խարդախութիւնները ընդհանրութեան աչքին առջև ակներև հանելուս համար. և անկասկածօրէն, պիտի չվրիպին ըսելու Ձեր Վեհափառութեան, թէ ամեն մարդ գայթակղած է իմ կատակերգութենէս: Բայց բուն ճշմարտութիւնը սա է, Վեհափառ Տէր, որ բոլոր Բարիզ անոր խափանմամբը գայթակղած է միայն. ամենախղճամիտ անձինք իսկ անոր ներկայացումը օգտակար գտան, և ամեն մարդ զարմացած է թէ ինտոր կ'ըլլայ որ այնքան առաքինի ճանչցուած անձինք՝ այնչափ մեծ ակնածութիւն ընեն այնպիսի մարդոց՝ որք բոլոր աշխարհի ձաղկում պատճառող սեպուիլ պէտք էին, սակայն ճշմարիտ աստուածպաշտութեան՝ զոր իրենց արհեստ ըրած են, այնքան հակառակ են:

Կ'սպասեմ, պատկառանօք, այն որոշման՝ զոր Ձեր Վեհափառութիւնը այս նիւթին վրայօք վճռելու բարեհաճելու է. բայց խիստ ապահով բան է, Վեհափառ Տէր, որ թէ որ կեղծապաշտները առաւելօգտութիւն ունենան՝ ես պէտք չէ որ ալ բնաւ կատակերգութիւն գրելու վրայօք մտածեմ. այս առիթով՝ ձեռքերնին զէնք ունենալու են որ զիս առաջուընէ աւելի հալածեն, և իմ գրչէս ելած ամենէ անմեղ բաներու վրայօք իսկ խծբծանք գտնել ուզեն:

Թող բարեհաճի Ձեր բարեսիրութիւնը, Վեհափառ Տէր, պաշտպանութիւն տալ ինձ իրենց թունացայտ մոլեգնութեան դէմ. իցիւ թէ, 'ի դարձին այնքան փառաւոր ճակատամարտէ՝ Ձեր Վեհափառութեան աշխարհակալութեանց յոգնութիւնները թեթևցնելու համար, այնքան պերճափառ աշխատութիւններէ ետք, անմեղ զբօսանքներ տալու և զուարճացնելու կարող ըլլայի վեհապետ մը՝ որ բոլոր Եւրոպան կը դղրդեցնէ*):

*) Թագաւորը այս աղերսագիրը նպաստաւորաբար ընդունեց, այսու ամենայնիւ Թարթիւֆի ներկայացման արգելքը՝ 1669ի սկիզբները միայն վերցաւ:

## ԵՐՐՈՐԴ ԱՂԵՐՍԱԳԻՐ

Ներկայացուած արքային, 'ի վեցերորդում փետրուարի 1669:

*Վեհափառ Տէր,*

*Շատ պարկեշտ բժիշկ մը՝ որու հիւանդն ըլլալու պատիւն ունիմ, խոստ կը տայ ինծ, և նօտարաց առջև՝ ինքզինք պարտաւոր կը կացուցանէ որ զիս երեսուն տարի ևս ապրեցնէ՝ թէ որ Ձեր Վեհափառութենէ իրեն համար շնորհք մը ձեռք բերելու կարող ըլլամ: Ես ալ, իր խոստման վրայ, ըսի թէ ես այնքան շատ չեմ ուզեր, և շատ գոհ կ'ըլլամ իրմէ, միայն թէ զիս չմեռցնելու յանձնառու ըլլայ: Այս շնորհքը, Վեհափառ Տէր. Վէնսէնի Ձեր արքայական մատրան կանոնիկոսութիւնն է, թափուր՝ մահուամբ . . . ի:*

*Համարձակի՞մ արդեօք հայցել Ձեր Վեհափառութենէ այս շնորհքն ալ, Թարթիւֆի մեծ յարութեան մի և նոյն օրը՝ որ Ձեր բարեխրութեամբ վերակենդանացաւ: Ես՝ այս առաջին շնորհքով, բարեպաշտներու հետ հաշտուած եմ, և այս երկրորդով ալ՝ բժիշկներու հետ պիտի հաշտուիմ:*

*Ինձ համար, անշուշտ, չափազանց շնորհք է միանգամայն, բայց գուցէ Ձեր Վեհափառութեան համար այնքան երևելի բան չըլլայ. և կ'ըսպասեմ քիչ մը յկնածական յոյսով, իմ աղերսագրոյս պատասխանին*);*

*) Մոլիէր ստոյգ խոնարհութիւնը չէր կը ընդունէր:

# ԱԶԴ

Թէ և մեր բարեյիշատակ եղբայր, Տիգր. Յ. Տէոտեան մտադիր էր որ Մոլիէրի բոլոր թատրերգութիւնները թարգմանէ, այլ իւր ծաղիկ հասակին մէջ վրայ հասած տարաժամ մահը արգելք եղած էր իր բաղձանքին:

Արդ այժմ կը թարգմանեմք Թարթիւֆը իբր գլուխ գործոց Մոլիէրի և հեռացեալ, երբ ժամանակն ներէ, իր միւս թատրերգութեանց թարգմանութիւններն ալ ընծայու կը ձեռնարկեմք, մանաւանդ անոնց՝ որք հրաշանգիչ դասեր կրնան սեպուիլ թատերական տեսարանի վրայ:

Թէև կը բաղձայի, որ բնագրին նման, յանգեաւ թարգմանութիւն մի ընեմ, այլ մտածելով որ հայկական ընթերցասիրութիւնը շատ տարտամ է նոյն իսկ արձակ գործոց, թող թէ ոտանաւորաց, աւելի պատշաճ կարծեցի գայն արձակ հանդիսացնելը հասարակութեան ախորժելի ընելու մտօք:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

## ԱՆՁԻՆՔ

| | |
|---|---|
| ՕՐԿՕՆ, | Էլմիրայի այր, հարուստ ազնուական. |
| ԴԱՄԻՍ, | Օրկօնի որդի. |
| ՎԱՂԵՐԻՈՍ, | Մարիանայի տարփաւոր. |
| ԿՂԵԱՆԴՐՈՍ, | Օրկօնի աներձագ. |
| ԹԱՐԹՈՒՖ, | Կեղծաւոր. ժամանակաւ չարաչար և յետոյ մուրացկան՝ հիւրընկալեալ 'ի տան Օրկօնի. |
| Պ. ԼՈՒԱՅԱԼ, | Ոստիկան. |
| ՊԱՇՏՕՆԱԿԱԼ ՄԸ. | |
| ՏԻԿԻՆ ԲԷՐՆԷԼ, | Օրկօնի մայր. |
| ԷԼՄԻՐԱ, | Օրկօնի կին. |
| ՄԱՐԻԱՆԱ, | Օրկօնի դուստր, Վաղերիոսի տարփուհի. |
| ԴՈՐԻՆԱ, | Մարիանայի հետեւորդուհի. |
| ՖԼԻՊՕՏ, | Տիկին Բէրնէլի սպասուհի. |

ՏԵՍԱՐԱՆՆ է 'ի Փարիզ, Օրկօնի տան մէջ.

# ԹԱՐԹՈՒՖ

## ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏԻԿԻՆ ԲԷՐՆԷԼ, ԷԼՄԻՐԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԿՂԵԱՆԴՐՈՍ, ԴԱՄԻՍ, ՖԼԻՊՕՏ, ԴՈՐԻՆԱ.

**ՏԻԿԻՆ ԲԷՐՆԷԼ.** *Շուտ քալէ, Ֆլիբօտ, շուտ քալէ, որ ձեռքերնէն ազատիմ.*

**ԷԼՄԻՐԱ.** *Այնքան շուտ կը քալէք՝ որ մարդ չկրնար ետեւնէդ հասնիլ.*

**ՏԻԿ. ԲԷՐ.** *Թող կ'ըսեմ, նուս, թող. աւելի հեռուն մի գար. ատոնց բոլորը քաղաքավարածութիւններ են որոնցմէ հարկաւորութիւն չունիմ.*

**ԷԼՄ.** *Ձեզի դէմ ունեցած պարտքերնիս կատարել է. բայց, մայր իմ, ինչու՞ր եղեր է որ այսքան շուտ դուրս ելեր էք.*

**ՏԻԿ. ԲԷՐ.** *Պատճառն այն է, որ չեմ ուզեր որ այս ամէն տանտիկնութիւնները տեսնեմ այս տան մէջ, ու կը նայիմ որ ոչ ոք հոգ կը տանի որ ինձ հաճելի երեւայ. Այո՛, գլուխս աւի ու սիրտս գէշ եղած ձեր տնէն դուրս ելայ, ինչու որ ինչ որ ըսեմ ինձ հակառակ կ'երթան. Ձեր տան մէջ բանի մը ակնածութիւն չկայ, և ամէն մարդ բարձր կը խօսի, գիտես որ ճիշդ Բէթօ*) թագաւորին ապարանքն է.*

**ԴՈՐԻՆԱ.** *Թէ որ . . .*

**ՏԻԿ. ԲԷՐ.** *Դուն, սիրունուհիս, հետեւորդուհի աղջիկ մ'ես, լեզուդ շատ երկայն ու պինդ աւ՝անհերես, ամէն բանի մէջ կը խառնուիս որ կարծիք յայտնես.*

**ԴԱՄԻՍ.** *Բայց . . .*

**ՏԻԿ. ԲԷՐ.** *Դուն կով մ'ես, երեք գիրավ, զաւակս. ես եմ զայս քեզ ըսողը, ես՝ որ քու հանիդ եմ, և ես իմ որդւոյս, քու հօրդ, հարիւր անգամ կանխատեցի՝ թէ դուն չար ստահակի մը կերպարանք առնլով, քանի երթայ նեղութիւն տալէդ ուրիշ բան մի չպիտի ընես.*

**ՄԱՐԻԱՆԱ.** *Կարծեմ . . .*

*) Բէթօ՝ Թագաւորին ապարանքը. Իւր ժամը՝ յորում շատ յաճախեցաւ բերամբ եւ անխնդրութեամբ կը կենային.

Ծ. Թ.

**ՏԻԿ. ԲԷՐ.** Ո՛հ, Աստուած իմ, դուն ալ անոր քոյրը, որ ինքզինքդ խո-հեմի տեղ դրած ես, և այնքան ալ պչրասէր ես որ բնաւին ձեռքէդ չգար. բայց, ինտոր կ'ըսեն, կամաց վազող ջրէն աւելի վտանգաւոր ջուր չկայ. և այդ պատրուակիդ տակ՝ այնպիսի բերմունք մ'ունիս զոր շատ կ'ատեմ։

**ԷԼՄ.** Բայց, մայր իմ. . .

**ՏԻԿ. ԲԷՐ.** Թող ըսածս չդպչի քեզ, իմ նուս. քու վարմունքդ ալ, ա-մեն բանի մէջ, բոլորովին գէշ է. դուն՝ պէտք էիր որ անոնց աչքին բարի օ-րինակ մ'ընծայես. իրենց լուսահոգի մայրը շատ աւելի աղէկ վարուիլ գիտէր։ Դուն շռայլասէր ես, և այս բանը զիս շատ կը վիրաւորէ, նայելով որ դուն իշ-խանուհիի մը պէս այդքան կը հագուիս ու կը կապուիս։ Այն անձը որ իր էր-կանը միայն հաճիլ կ'ուզէ, իմ նուս, պէտք չունի որ այնքան պճնասիրութիւն ընէ։

**ԿՂԷԱՆԴՈՍ.** Բայց, տիկին, 'ի վերայ այսր ամենայնի . . .

**ՏԻԿ. ԲԷՐ.** Զքեզ, Պարոն անոր եղբայրը, շատ կը պատուեմ ու կը սի-րեմ, ու կ'ակնածեմ, բայց և այնպէս, թէ որ իմ որդւոյս՝ անոր երկան տեղն ըլլայի՝ քեզ շատ պիտ' աղաչէի որ բնաւին մեր տան մէջ ոտք չկոխես։ Դուն, անդադար, կենակցութեան վրայ այնպիսի առածներ կը քարոզես՝ որոնց, հա-մեստ մարդիկ պէտք չէ բնաւ որ հետեւին. Քեզ քիչ մը համարձակ խօսեցայ, բայց ինչ ընեմ, բնութիւնս ասանկ է, սրտիս վրայ եղածը բնաւ չեմ կրնար ծածկել։

**ԴԱՄ.** Անշուշտ, ձեր Պ. Թարթիւֆը, շատ երջանիկ մարդ մ'է . . .

**ՏԻԿ. ԲԷՐ.** Այն բարեսէր անձ մ'է, և պէտք է որ իրեն անսացուի. և չեմ կրնար համբերել, առանց չբարկանալու՝ որ քեզի պէս խենդին մէկը ի-րեն հետ կագակռուի։

**ԴԱՄ.** Ի՞նչ. ես համբերեմ պիտի, որ անոր պէս մեղադրելի երեսպաշտին մէկը այս տանս մէջ գայ ու բռնապետական զօրութեամբ մեզ նուաճել ուզէ. և մենք որ և իցէ կերպով ոչինչ զուարճութիւն չկարենանք վայելել թէ որ այն անուշիկ պարոնը հաճութիւն տալու չբարեհաճի։

**ԴՈՐ.** Թէ որ իր առածներուն անսալ ու հաւատալ պէտք է, բան մը չի-կրնար ըլլուիլ առանց մեղք գործելու. վասն զի, այս ջերմեռանդ խծբծասէրը ամեն բան կը մանրաքննէ։

**ՏԻԿ. ԲԷՐ.** Եւ ինչ որ կը մանրաքննէ՝ շատ աղէկ մանրաքննուած է։ Դէպի երկնից շաւիղը զձեզ առաջնորդել կը յաւակնի, և որդիս ալ զան սիրելու հա-մար զձեզ ամենքդ ալ պէտք էր թելադրել։

**ԴԱՄ.** Ոչ՛, կը տեսնես մայր իմ, ոչ հայրս և ոչ բան մը կարող է պար-տաւորել զիս որ իրեն աղէկ ուզեմ. ես իմ սիրտս մատնած պիտ' ըլլայի թէ որ ուրիշ կերպով խօսէի։ Իր գործ տեսնելու եղանակին վրայ ամեն վայրկեան կը զայրանամ, ասոր տակէն գէշ հետեւութիւն կը գուշակեմ, և այս հաստատ ընթացքով՝ պէտք է որ մեծ ժխոր մի յարուցանեմ։

**ԴՈՐ.** Անտարակոյս, այս այնպիսի բան մ'է որ գայթակղութիւն ալ կը պատ-ճառէ, տեսնելով որ անծանօթին մէկը եկեր տէրնուս և տեղերնուս տէր եղեր է. սանկ մուրացկանին մէկը՝ որ եկած ժամանակ ոտքը հողաթափ չունէր, և

(1879)
28278-62



երու բոլոր հագուստը՝ վեց դենար չէր արժէր, մինչև այն աստիճանին հասնի որ ինքզինքին չափը չճանչելով, ամեն բանի հակառակ ըլլայ, և իբրև տէր վա-րուի։

**ՏԻԿ. ԲԷՐ.** Է՛հ, հազար փառք կը տայի և աւելի կարգ կանոն կ'ըլլար թէ որ ամեն բան իր բարեպաշտական հրամաններով կառավարուէր։

**ԴՈՐ.** Քո կարծիքովդ զան սուրբի մի տեղ դրած ես, և իր բոլոր ըրածը՝ ուրիշ բան չէ, հաւատա ինծ, բայց եթէ կեղծաւորութիւն։

**ՏԻԿ. ԲԷՐ.** Ըսվոր ըսածը նայէ։

**ԴՈՐ.** Ո՛չ իրեն և ոչ իւր Լաւրենտիոսին բնաւին վստահութիւն չպիտի ունենայի, բայց եթէ ընդ լաւ երաշխաւորութեամբ։

**ՏԻԿ. ԲԷՐ.** Չեմ գիտեր շիտակը թէ ինտոր մարդ է ծառայն. բայց կ'ե-րաշխաւորեմ որ տէրը բարի մարդ մ'է։ Դուք իրեն գէշ չպիտի ուզէիք և զան չպիտի անգոսնէիք թէ որ ձեր ամենուն թերութիւնները ձեր երեսին չտար։ Միայն մեղք գործելու դէմ իր սիրտը բարկութեան կ'եռնէ, և երկնից սէրն է միայն որ զինք կը մղէ։

**ԴՈՐ.** Անանկ ըլլայ. բայց ինչու համար, մանաւանդ ժամանակէ մ'ի վեր, չկրնար համբերել որ մարդ մ'այս տանս մէջ ոտք կոխէ։ Պարկեշտ այցելու-թիւն մ'ի՞նչ բանի համար զԱստուած վիրաւորելու է որ այնքան շշնկոց հանէ որ գլուխնիս ճայթեցնէ. կ'ուզէք որ ադոր վրայօք աւելի բաց խօսիմ մեր մէ-ջը . . . (Էլմիրան ցուցնելով) Կարծեմ տիկնէն կը նախանձի գուցէ։

**ՏԻԿ. ԲԷՐ.** Գոցէ՛ բերանդ, և ըսած խօսքերուդ դիտողութիւն ըրէ։ Մի-նակ ինք չէ որ այս այցելութիւնները կը պախարակէ. ձեզի համար հոս յաճա-խող մարդոց հանած աղմուկները, դրան առջև անդադար անկուած կառքերը, և այնքան բազմաթիւ սպասաւորաց հանած ժխորը, բոլոր դրացեաց մէջ ցաւալի տա-րաձայնութիւններու պատճառ կ'ըլլան։ Կ'ուզեմ հաւատալ որ ասոնց տակ գէշ բան մը չկայ. բայց շիտակն ըսեմ, կը բամբասեն կոր. և այս՝ աղէկ բան չէ։

**ԿՂԷ.** Է՛հ, տիկին, ինչ ըսել է, կ'ուզէք որ արգիլէք խօսելու. այս՝ կե-նաց մէջ անտանելի բան մի պիտ' ըլլար, թէ որ մի քանի խենդ խելօք խօսքեր ընելու համար մարդ իր ամենէ ընտիր բարեկամներէն զրկուելու պարտաւորէր։ Եւ մարդ իր միտքը որոշէր իսկ որ այսպէս ընէ, կարծէք որ կարենաք պար-տաւորել զամեն մարդ որ լռէ՞։ Բամբասանքի դէմ երբէք պատուար չգրուիր։ Խենդումենդ շաղակրատութեանց բնաւ ականջ չկախենք. այլ աշխատինք որ ան-մեղաբար ապրինք, և թող տանք շաղփաղփները որ ուզածնուն պէս ճարճատեն։

**ԴՈՐ.** Արդեօք մեր Դափնէ դրացուհի՞ն է և իւր սիրուն էրիկը որ մեր բամբասանքը կ'ընեն։ Անոնք՝ որոնց վարքը ամենէ աւելի ծիծաղելու արժանի է, առաջին կ'ըլլան միշտ որ ուրիշի վրայօք բամբասանք ընեն։ Երբէք առիթ չեն կորսնցուներ որ փոքրագոյն բարեկամութեան մ'աչքի զարնող փայլը շուտ մի բորբոքեցնեն, խիստ ուրախութեամբ զանազան լուրեր տարածեն, և քիչ մ'ալ վերադիր ընելով՝ իրենց հաճոյ երեւցածին պէս կընեցնեն ուրիշներուն այն գոր-ծերը՝ զորս ինչպէս որ ուզեն կը նկարագրեն. կը կարծեն որ աշխարհի մէջ ի-րենց գործերը միայն անտեսիլ են, և անմեղութեան քիչ մի նմանութիւն ու-նեցող մեքենայութեանց կեղծաւորական քօղին տակ, կ'ուզեն որ ուրիշի վրայ

ՀՍՍՌ-Արմ. Ա. Մյասնիկյանի անվան
А. Мясникяна

ձգեն ընդհանուր պարսաւը այն պակասութեանց՝ որոնց իրենք մեղսակից են և որոնցմով իրենք շատ զգածեալ են։

**ՏԻԿ. ՊԷՐ.** Բոլոր այս պատճառաբանութիւնները մեր խնդիրէն դուրս են։ Ամէն մարդ գիտէ որ Օռանտէ օրինակական վարք մ'ունի. խելքը միտքը Աստուծոյ հետ է. և լսեցի ալ քանի մի մարդոցմէ որ նէ մեր տան մէջ եղած ընթացքը շատ կը դատապարտէ։

**ԴՈՐ.** Տուած օրինակնիդ զքանչելի՛ է, և այդ տիկինն ալ բարի՛, իրաւ է նաև որ ինք խստաբարոյ կեանք մի կը վարէ. բայց իր տարիքն է որ այս ջերմագին եռանդն իր սրտին մէջ դրած է, գիտցուած բան է նաև որ իր մարմնոյն խոչընդոտիչութեամբը՝ պարկեշտակեղծուհի է։ Ցորչափ ձեռքէն եկածին չափ սրտից յարգանքը իրեն յանկուցանելու կարող եղաւ, այս բոլոր առաւելութիւնները շատ աղէկ վայելեց. բայց, տեսնելով որ իր աչաց փայլունութիւնը կը խոնարհի, հրաժարիլ կ'ուզէ աշխարհէ, որ զինք երեսէ կը թողու, և մեծ իմաստութեան մի փառաւոր քօղին տակ՝ իր գործածուած հրապուրանաց տկարութիւնը դիմակել կ'ուզէ։ Ասոնք են ժամանակին քծնուհիներուն սպառահասած անդրադարձը։ Իրենց դժնդակ կ'երևի որ իգասէրները հեռանան իրենցմէ։ Այս տեսակ լքման մի մէջ՝ իրենց լռալթախիծ անհանգստութիւնը ուրիշ ապաւինութիւն մի չկրնար գտնել, բայց եթէ պարկեշտակեղծութեան արհեստը և այս բարեացակամ տիկնանց անաչառութիւնը ամէն բան կը քննադատէ, և ոչինչ բանի չներեր։ Անոնք ամէն մէկուն կենցաղավարութիւնը բարձրաձայն կը պարսաւեն, ոչ թէ գթասիրութեամբ, այլ միայն նախանձու ինքնասիրութեամբ, որ չկրնար տանիլ որ ուրիշ անձուհի մի վայելէ այն ամէն հաճութիւնները՝ որ արբունց միտումը իրենց բաղձանքները սահերջացուցած է։

**ՏԻԿ. ՊԷՐ.** (Էլմիրային) Ահաւասիկ, իմ նուս, քեզի հաճոյ կապուտագոյն պատմութիւններ։ Քո տան մէջ մարդ կը պարտաւորի լռելու, քանզի այս տիկինը, բոլոր օրը պարագլուխն է շաղակրատելու համար։ Այսու ամենայնիւ կը պահանջեմ որ ես ալ իմ կարգաւս շաղակրատեմ. ես ձեզի կ'ըսեմ որ որդիս երբեք աւելի խելացի բան չըրաւ այն բարեպաշտ անձն իր տան մէջ ասպնջականելով. և թէ Աստուած հարկաւ զայն մեր տուն խրկեց որպէս զի ձեր ամենուն մոլորեալ միտքերը ուղղաշաւիղէ. և թէ, ձեր փրկութեան համար՝ պէտք է իրեն մտիկ ընէք, և ինք բան մի չխծբծեր թէ որ խծբծելի չէ։ Այդ այցելութիւնները, այդ պարահանդէսները, այդ խօսակցութիւնները, բոլորն ալ չարամիտ ոգւոյ նորահնարութիւններ են։ Ադոնց մէջ՝ բնաւին բարեպաշտական խօսքեր չեն լսուիր, բայց եթէ ժամանակակորոյս մնոտիաբանութիւններ, երգեր և բաջաղանք։ Շատ անգամ մերձաւոր մ'ալ իր լաւ մասն ունի, և այսինչ մէկուն կամ այնինչ մէկուն բամբասանքը կ'ըլլայ։ Վերջապէս այս տեսակ համաժողովութեանց շփոթութենէ բանաւոր մարդիկ իրենց միտքերնին պղտորած են. հազարաւոր զանազան շաղփաղփութիւններ իբր ոչինչ կը սեպուին, և, ինչպէս որ միւս օր բժիշկին մէկը շատ աղէկ ըսաւ, այս՝ ճշմարտապէս Բաբելոնի աշտարակն է, ինչու որ ամէն մարդ կը շատախօսէ, ու խօսքին ծայրը չկայ. և պատմութիւնն սկսելու համար՝ ուր այս կէտ զինք հարկադրած է . . . (Կղէանդրոսը ցուցնելով) կը նայիք անգամ մի, որ այս պարոն, արդէն կը հեգնածաղէ։ Գնա՛,



քու խենդերդ գտիր որ քեզ խնդացնեն։ (Էլմիրային) Ես առանց . . . մնաս բարեաւ, իմ նուս, ալ բան չեմ ըսեր։ Գիտցիր որ այս տան համար կէս համարումս կորած եմ, և շատ ատեն անցնի պիտի մինչև որ հոս նորէն ոտք կոխեմ։ (Ֆլիբօղին ապտակ մի տալով) Ի՞նչ ես կայներ, դուն, կ'երազես ու բերանդ բաց ապուշի պէս կը նայիս. Ճշմարիտ Աստուած, ականջներդ բրցնելու եմ։ Քալէ՛, անճռռնուհի, քալէ՛։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴՈՐԻՆԱ։

**ԿՂԷԱՆԴՐՈՍ.** Ես հոն երթալ չեմ ուզեր*), որպէս զի նորէն վրաս կռիւ չգայ. այս բարի կնոջ . . .

**ԴՈՐԻՆԱ.** Ա՛հ, յիրաւի, մեղք որ քեզի հետ այս կերպ լեզուով խօսեցաւ. աւելի աղէկ կ'ընէր որ ըսէր թէ բարի անձ մ'ես, և ինքն ալ բնաւ այն տարիքը չունի որ իրեն այս անունը տրուի։

**ԿՂԷ.** Ինչպէս փուճ տեղ մեզի դէմ բորբոքեցաւ. ինչպէս ալ իր Թարթիւֆը կը պաշտպանէ՛։

**ԴՈՐ.** Ո՛հ, ճշմարիտ կ'ըսեմ, այս՝ բան մը չէ իր որդւոյն քով, և թէ որ զինք տեսնես, պիտ' ըսես, «աս անկէ գէշ է». մեր աղմուկները զինք խոհեմ մարդ մ'ըրին, և իր իշխանին ծառայելու համար՝ քաջասրտութիւն ցուցուց. բայց ապուշ մարդ մի դարձաւ, իր խելքը Թարթիւֆի տալէն 'ի վեր. զայն իւր եղբայր կը կոչէ, և հոգւով մարմնով՝ մօրմէ, որդիէ, աղջիկէ և կնոջմէ հարիւր անգամ աւելի կը սիրէ։ Իւր բոլոր գաղտնեաց միակ խորհրդապահն է, և իւր գործոց խոհեմ խորհրդատուն. զայն կը շոյէ ու կը գրկէ. և մէկ տարփուհւոյ մ'իսկ, կարծեմ, մարդ այնքան խանդաղատեր չկրնար ըլլալ. սեղանին վրայ՝ կ'ուզէ որ ամենէ պատուաւոր տեղ նստած ըլլայ. հաճութեամբ՝ վեց մարդու չափ ուտելը կը դիտէ. պէտք է որ ամէն մարդ ամենէ աղէկ համադամները իրեն հրամցընէ. և թէ որ երբեք ործկայ՝ «Աստուած քեզ օգնէ» կ'ըսէ իրեն. վերջապէս խելքը վրան կը թացնէ. իւր ամէն ինչն, իւր դիւցազնն է. ամէն պարագայի՝ վրան կը հիանայ, և ամէն խօսքի՝ զան կը յիշէ. անոր ամենաոչինչ գործերը իւր աչքին հրաշք կ'երևան, և ամէն ըսած խօսքը՝ իրեն համար պատգամ են։ Ան ալ՝ որ իւր դաւորը կը ճանչէ, և կ'ուզէ որ անոր կռնկէն վայելէ, հազար կեղծաւոր արտերևոյթներով զան շլացնելու կերպը գիտէ. իւր կեղծապաշտութիւնը, ամէն ժամ, անորմէ գումարներ կը կորզէ, և մեր ամենուս ըրածը չարամեկնելու իրաւունք կ'ըստանձնէ։ Իւր բախուկէն սկսեալ՝ որ իրեն իբր արբանեակ կը ծառայէ, մինչև մեզ իսկ կը խառնուի որ մեզի դաս տայ. իւր կատաղալից աչերով կը գայ մեզ ձանձրալի քարոզներ կը տայ, և մեր ժապաւէն-

*) Այսինքն, չեմ ուզեր երթալ Տիկին Պէռնէլը նորէն իւր տեղը տանիլ, որու հետ առաջին տեսարանի բոլոր անձինք դուրս ելած են, Կղէանդրոս և Դորինայէ զատ։

ները, մեր սնգոյրը և մեր դիմասպեղանիները կը նետէ։ Դենգաւորը, միւս օր, մեր մահրաման իր ձեռօք երկու կտոր ըրաւ, զոր Սրբոց ծաղկանց մէջ գտած էր, առարկելով՝ թէ զարհուրելի մեղօք, սատանայի պաճուճանքը սրբութեան հետ կը խառնենք։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԷԼՄԻՐԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԴԱՄԻՍ, ԿՂԷԱՆԴՈՍ, ԴՈՐԻՆԱ։

**ԷԼՄԻՐԱ.** (Կղէանդոսին) Դուն շատ երջանիկ ես որ չէկար ներկայ գտնուելու այն զրոյցներուն՝ զորս նէ ըրաւ դրան մէջ. բայց երիկս տեսայ. ըստ որում դեռ զիս չտեսաւ, երթամ վերը իր գալուն սպասեմ։

**ԿՂԷ.** Ես զինք հոս կ'ըսպասեմ որ աւելի քիչ զուարճանամ. և կենամ միայն բարի եկար մ'ըսեմ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԿՂԷԱՆԴՈՍ, ԴԱՄԻՍ, ԴՈՐԻՆԱ։

**ԴԱՄԻՍ.** Քրոջս ամուսնութեան համար բան մը դպցուր իրեն. կասկած ունիմ որ Թարթիւֆ այս բանիս դէմ կը կենայ, թող իր մեծաբան խօսքերուն դարձուածներով հայրս ստիպէ. և դու ալ չես անգիտանար որ այս գործին մէջ որքան շահօգտած եմ։ Թէ որ նոյն եռանդը թէ՛ քոյրս և թէ՛ Վալերիոսը կը բորբոքէ, այս բարեկամին քոյրն ալ, ինչպէս որ գիտես, իմ սիրուհիս է. և թէ որ հարկ ըլլար . . .

**ԴՈՐԻՆԱ.** Ահա՛ կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՕՐԳՕՆ, ԿՂԷԱՆԴՈՍ, ԴՈՐԻՆԱ։

**ՕՐԳՕՆ.** Ա՛հ, եղբայրս, բարե՛ւ։

**ԿՂԷ.** Դուրս ելնելու վրայ էի. շատ ուրախ եմ քու վերադարձդ տեսնելով։ Հիմակ դաշտագետինք այնքան ծաղկաւէտ չեն։

**ՕՐԳՕՆ** (Կղէանդոսին) Դորինա . . . Աներձագս, համբերէ՛, կ'աղաչեմ, կը յուսամ որ կը բարեհաճիս որ մտատանջութիւնս փարատեմ, հոստեղի լուրերուն վրայօք տեղեկութիւններ առնելով։ (Դորինային) Այս երկու օրերը՝ ամեն բան ըստ կարգին անցա՞ւ։ Ի՞նչ կ'ընեն մեր տան մէջ։ Ինտո՞ր են, ամենքը լաւ վիճակի մէ՞ջ են։

**ԴՈՐ.** Տիկինս՝ երէկ չէ առջի օր, մինչև իրիկուն ջերմ ունէր, այնպիսի սաստիկ գլխացաւով մ'որ խելք չդդար։



**ՕՐԳՕՆ.** Ու Թարթիւֆը . . .

**ԴՈՐ.** Թարթիւֆը. ողջ առողջ և ըռինտ է։ Պարարտ ու գէր, գոյնը կայտառ, և բերանը կաս-կարմիր։

**ՕՐԳՕՆ.** Խե՜ղճ մարդ . . .

**ԴՈՐ.** Գիշերը՝ անախորժ զզուանք մ'եկաւ տիկնոջդ վրան և ընթրիքին՝ բերանը բան մը չկրցաւ դնել գլխուն ցաւը դեռ այնքան սաստիկ ըլլալուն պատճառաւ։

**ՕՐԳՕՆ.** Հապա Թարթիւֆ։

**ԴՈՐ.** Նա մէս մինակ ընթրեց, տիկնոջ դիմաց. և պինտ բարեպաշտաբար երկու կաքաւ կերաւ, յօշուածազդի կէս մասովը։

**ՕՐԳՕՆ.** Խե՜ղճ մարդ։

**ԴՈՐ.** Նէ՝ բոլոր գիշերը առանց վայրկեան մ'իր արտևանունքը գոցել կարենալու անցուց. սաստիկ ջերմութիւնը կ'արգիլէր որ քիչ մը քնաբրել կարենայ, և իր քով՝ մինչ առտու՝ հսկելու ստիպուեցանք։

**ՕՐԳՕՆ.** Հապա Թարթիւֆ։

**ԴՈՐ.** Պինտ անուշ քուն մը վրան գալով՝ սեղանէն ելածին պէս, չիտակ իր սենեակը քաշուեցաւ. և շուտ մ'իր տաքուկ անկողնոյն մէջ մտաւ, ուր որ, անվրդով, մինչև հետևեալ օր քնացաւ։

**ՕՐԳՕՆ.** Խե՜ղճ մարդ։

**ԴՈՐ.** Վերջապէս, այնքան ստիպեցինք որ մտքն եղաւ որ արիւն առնել տալու հաճի. ասոր վրայ շուտ մ'իր ցաւը թեթևցաւ։

**ՕՐԳՕՆ.** Հապա՞ Թարթիւֆ։

**ԴՈՐ.** Ինչպէս որ պէտք է քաջութիւն վերստացաւ. և, իր հոգին կազդուրող բոլոր ցաւոց հակառակ՝ և տիկնոջ կորսնցուցած արիւնին տեղը լեցնելու համար, իւր նախաճաշիկին ժամանակ, չորս մեծ գաւաթ գինի խմեց։

**ՕՐԳՕՆ.** Խե՜ղճ մարդ։

**ԴՈՐ.** Վերջապէս, երկուքնին ալ աղէկ վիճակի մէջ են. և ես երթամ, կանխաւ ձայն տամ տիկնոջս, թէ իր ապաքինութեան վրայ այդքան ուրախալից էք։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՕՐԳՕՆ, ԿՂԷԱՆԴՈՍ։

**ԿՂԷԱՆԴՈՍ.** Քթիդ տակը՝ եղբայրս, վրադ կը ծիծաղի. և առանց մտադիր ըլլալու որ զքեզ բարկացնեմ՝ քեզ համարձակապէս ըսեմ որ արդարացի ալ է։ Երբեք լսուա՞ծ է այդպիսի քմահաճութիւն մը. և կարելի՞ է որ այսօրուան օրս մարդուն մէկը այնպիսի դիւթութիւն մ'ունենայ, որ իրեն համար ամէն բան քեզ մոռցնել տայ. որ քու տան մէջ անոր աղքատութիւնը արգահատելէդ ետք՝ այնպիսի կէտի մը հասնիս՝ . . .

**ՕՐԳՕՆ.** Կեցիր հոդ, աներձագս. դեռ դուն չես ճանչեր այդ խօսեցած մարդդ։

**ԿՂԷ.** Չեմ ճանաչեր զայն, ըստ որում դուն այդպէս կ'ուզես. բայց 'ի վերջոյ, այս մարդուն ինչ ըլլալը հասկնալու համար . . . :

**ՕՐԳՕՆ.** Եղբայրս, թէ որ զայն ճանաչէիր պիտի սքանչանայիր, և քո յափշտակութիւններ վերջ չպիտի ունենային: Այս այնպիսի մարդ մ'է . . . որ . . . Ա՛հ . . . մարդ մի . . . մարդ մի, վերջապէս, ով որ իր խրատուց կը հետևի՝ անվերջանալի խաղաղութիւն կը վայելէ, և բոլոր մարդոց վրայ՝ իբրև աղբ կը նկատէ: Այո՛, իւր կենակցութեամբ բոլորովին ուրիշ անձ մի կ'ըլլամ. ան ինձ կ'ուսցնէ որ և ոչ մէկ բանի վրայ սէր ունենամ. իմ հոգիս ամէն բարեկամութիւններէ կ'անջատէ. և աւելի աղէկ ունիմ որ եղբօր, որդւոց, մօր և կնոջ մահը տեսնեմ քան այս մարդուն հոգը չունենամ:

**ԿՂԷ.** Ադոնք ինչ մարդասիրական զգացմունք են, եղբայրս:

**ՕՐԳՕՆ.** Ա՛հ, թէ որ տեսնէիր թէ ինչպէս իրեն հանդիպեցայ՝ դուն ալ իմ կապուածիս պէս բարեկամութիւն պիտի ցուցնէիր իրեն: Ամէն օր եկեղեցի կը գար, քաղցրաբարոյ դէմքով, և ճիշդ ինձ դիմացէմ երկու ծնգաց վրայ գալով՝ իր դէպի երկինք արձակած աղաչանաց եռանդէն, բոլոր ժողովրդեան աչքերը իր վրայ կը դարձնէր. հառաչանքներ կ'ընէր, մեծ մեծ սրտեռանդութիւններ, և ամէն վայրկեան խոնարհաբար գետինը կը համբուրէր. և երբ դուրս կ'ելնէի, շուտ մ'ինձմէ առաջ դուրս կը կանխէր, որ դուռը սպասէ ու ինձ օրհնած ջուր տայ. տեղեկանալով իր արբանեակէն, որ ամէն բան անոր պէս կ'ընէր, թէ իր կարօտութեան և թէ իր ով ըլլալուն վրայօք՝ իրեն պարգև կը տայի. բայց, համեստաբար, միշտ անոնց մէկ մասը ինձ ետ կը դարձնէր. «Շատ է, կ'ըսէր ինձ, ատոր կէսն իսկ շատ է. ես քու գթասրտութեանդ արժանի չեմ:» Ու երբ ետ առնել չուզելով մերժէի՝ իմ աչացս առջև, կ'երթար աղքատներուն կը բաժնէր: Վերջապէս, Աստուած զան իմ տանս մէջ առանձնականել տուաւ, և այն ժամանակէ 'ի վեր ամէն բան յաջող երթալ կ'երևի: Կը նայիմ որ ամէն բան կը քննադատէ, և իմ պատւոյս համար՝ իմ կնոջս համար իսկ՝ վերջին կէտ շահօգուտ մ'ունի. անոր վրայ ով որ աչք տնկէ՝ ինձ ձայն կը տայ, և ինձմէ վեց անգամ աւելի նախանձոտ կը ցուցնէ ինքզինք: Բայց քո հաւտալդ չպիտի գայ մինչ ուր կ'երթայ իւր եռանդնոտութիւնը. ամենաչնչին բաները յանցանքն իւր վրան կ'առնէ. գրեթէ ոչինչ բան մի բաւական է որ զինք գայթակղեցնէ. մինչ այն կէտ եկած է որ միւս օր ինքզինք կը մեղադրէր թէ աղօթք ընելու ժամանակ լու մի բռնած և զան շատ բարկութեամբ ճզմած է:

**ԿՂԷ.** Տէ՛ր ողորմած Աստուած, կարծեմ որ եղբայրս, դուն խենդ ես: Այդ խօսքերովդ զիս հեղգնել կ'ուզե՞ս: Ու ինչ կ'առպահանջես: Թէ այս բոլոր ծաղրածութիւնը . . .

**ՕՐԳՕՆ.** Եղբայրս, այդ խօսքերը անառակութիւն կը հոտին. քիչ մ'ալ սրտովդ ադոր զակտեալ ես. և ըստ որում ես քեզ տասն անգամ աւելի քարոզեցի, կը վախնամ որ գլխուդ դէշ փորձանք մի չբերես:

**ԿՂԷ.** Ահա՛ քու նմաններուդ հասարակ խօսքերը, որոնք կ'ուզեն որ ամէն մարդ իրենց պէս կոյր ըլլայ: Աղէկ աչք ունենալը՝ անառակ ըլլալ է. և այն որ փուճուման թեթևսօլիկութիւնները չպաշտեր ոչ յարգանք և ոչ հաւատք ունի ամենէ նուիրական բաներու: Գնա՛ բանդ, քո խօսքեր ինաւ զիս չեն վախցնեն: Գիտեմ ինչ կը խօսիմ, և Աստուած իմ սրտիս խորը կը տեսնէ: Քո բոլոր ձանձրացուցիչ ակնածուններուդ ոչ ոք կ'ուզէ գերի ըլլալ: Կեղծ բարեպաշտներ ալ կան կեղծ քաջեր ալ. և ըստ որում չյայտնուիր թէ պատիւը ուր կ'առաջնորդէ զիրենք, որ հասկցուի թէ շատ ձանձուն հանողները ճշմարիտ քաջերն են, սանկ ալ բարի և ճշմարիտ բարեպաշտները՝ որոնց շաւղաց հետևիլ պէտք է, այնքան կեղծուպաշտութիւն ընողները չեն: Է՛հ, ինչ կ'ըսեմ, բնաւին տարբերութիւն մի չէ՞ս ըներ կեղծաւորութեան և բարեպաշտութեան մէջ: Դուն կ'ուզես որ մի և նոյն լեզուով տրամաբանես զանոնք, և թէ դիմակին և թէ դէմքին մի և նոյն պատիւը տա՞ս. արուեստակեալը՝ անկեղծայայտին հետ հաւասար բանե՞ս, առերևութաբանութիւնը՝ ճշմարտութեան հետ չփոթե՞ս, ուրուականը և անձը մի և նոյն կերպով պատուե՞ս, և կեղծ դրամը՝ անխարդախ դրամի հաւասար դատե՞ս: Մարդիկ, ըստ մեծի մասին, տարօրինակ ստեղծուածներ են, երբէք արդար բնութեան մէջ չեն գտնուիր. իրենց համար իրաւունքը շատ նեղ սահմաններ ունի, և իւրաքանչիւր բարուց մէջ անոր կոպարները կը զանցանեն, և ամենէ ազնիւ բաները յաճախ կ'աւրշտկեն շատ առաջ մղել և անգիւտ ծայրն անցնիլ ուզելով. Թող զայս քեզ ըսած ըլլամ, անցողակի, սիրելի փեսայս:



**ՕՐԳՕՆ.** Այո՛, անշուշտ դուն պատկառելի վարդապետ մի ես. և աշխարհիս բոլոր գիտութիւնները քու ներսդ զանձեալ են. դուն միայն իմաստուն և միակ լուսաւորեալ ես, այս մեր ապրած դարուն մէջ՝ պատգամ մի, Կատոն մի, և քու քովդ՝ ամէն մարդիկ տգէտ են:

**ԿՂԷ.** Ես բնաւին պատկառելի վարդապետ չեմ, եղբայրս, և բոլոր գիտութիւնները իմ ներսս ամբարեալ չեն. բայց, մէկ խօսքով՝ գիտեմ բոլոր գիտութեամբս, կեղծին ու ճշմարտին մէջ տարբերութիւն ընելը: Ու ըստ որում և ոչ տեսակ մի դիւցազն կը տեսնեմ որ այնքան առաւել գնահատուի որքան կատարեալ բարեպաշտ մի, աշխարհիս մէջ աւելի ազնիւ և աւելի գեղեցիկ բան մի չկայ, քան զսուրբ փղձկումն ճշմարիտ եռանդեան. ասոր պէս ալ աւելի ատելի բան մի չեմ տեսներ քան զարտաքուստ կերպարանեալ կեղծապատիր եռանդ, և թէ այս համարձակ կեղծախաբները և զաւեհիկ կեղծակրօնները, որոնց սրբապղծութիւնը և խաբերայ կեղծակերպութիւնը անպատժաբար կը գեղծէ և ըստ հաճոյից խաղալիկ կ'ընէ այն բանը որ մահկանացուաց ամենէ սրբազան ու նուիրական է. այն մարդիկը, որք շահախնդիր հոգւով բարեպաշտութիւնը արհեստ և վաճառք ըրած են, և կ'ուզեն որ յարգ և չքարժանութիւն գնեն 'ի գին կեղծ թարթման աչաց և ցուցամոլ եռանդայուզութեան. այս մարդիկը, կ'ըսեմ, որք արտասովոր եռանդեամբ երկնից ճամբով իրենց բաղդին դիմելը կը տեսնենք՝ որք ջերմեռանդ և աղօթկեր, ամէն օր կը խնդրեն, և ապարանաց մէջ՝ դարձ կը քարոզեն. որք իրենց եռանդը՝ իրենց մոլութեանց հետ շատ աղէկ յարմարցնել գիտեն. ցասկոտ, վրէժխնդիր, անհաւատ ու նենգաւոր են, և մէկը կորսնցնելու համար, լրբաբար կը ծածկեն իրենց ամօթալի ոխը երկնից սիրոյն տակ. և իրենց անզուսպ բարկութեան մէջ այնքան վտանգաւոր են որ մեզի դէմ՝ մեր պաշտած զէնքերը գործ կ'ածեն, և իրենց կիրքը, որու համար իրենցմէ շնորհակալ կ'ըլլանք, կ'ուզէ որ մեզ նուիրական զէնուք խողխողէ: Ասանկ կեղծ

ընութեան տէր մարդիկ բազմիցս երեւան ելած են. բայց սրտով բարեպաշտները զ գիւրին է ճանաչելը։ Այս դարս, եղբայրս, անոնցմէ շատեր մեր աչաց առջեւ կը հանէ որոնք որ մեզի փառաւոր օրինակներ կրնան հանդիսանալ։ Տե՛ս անգամ մի Արիստոն, նայէ Պերիանդրոս, Օրոնտէս, Աղկիդամաս, Պոլիտորոս, Կղիտանդրոս, այս տիտղոսը իրենց տալու համար ոչ ոք բանավիճած է. և ասոնք բնաւին առաքինութեան մնապարծ չեն. ասոնց վրայ բնաւ չտեսնուիր այս տաղտկալի ցուցամոլութիւնը, և իրենց ջերմեռանդութիւնն ալ թէ՛ մարդասիրական է և թէ՛ մեղմահամբոյր։ Անոնք երբեք մեր բոլոր գործողութիւնները չեն խըծբծեր, այս ուղղամտութեանց մէջ շատ գոռոզութիւն կը գտնեն. և ճարճատանաց հպարտութիւնը ուրիշներու թողլով՝ իրենց գործերովը մերինները կը կշտամբեն։ Իրենց քով չարի երեւոյթը քիչ յարգ ունի, և իրենց միտքը՝ ուրիշները 'ի բարին դատելու հակամէտ է։ Իրենց մէջ բնաւին դաւադրութիւն չկայ, և ոչ հետեւելու՝ մեքենայութիւն. իրենց ամենէ մեծ խնամքը՝ բարի վարք ունենալու հոգ տանիլն է։ Երբեք չեն կատղանար մեղաւորի մի դէմ, և իրենց ատելութիւնը՝ միայն մեղքի դէմ է, և երբեք վերջին ծայր եռանդեամբ՝ երկնից պահանջածէն աւելի անոր շահօգտութիւնը չեն փնտռեր։ Ահա ինչպէս ըլլալ պէտք են մարդիկ, ահա ինչպէս վարուելու է, ահա վերջապէս օրինակ՝ որու մարդ պէտք է հետեւի։ Քո մարդդ՝ ճշմարիտն ըսելով՝ այս տեսակէն չէ. քո բարեսրտութեամբդ է որ անոր եռանդեան վրայ կը պարծիս. բայց և այնպէս կարծեմ որ կեղծ փայլէ մ'ալ շլացած ես։

**ՕՐԿՕՆ.** Իմ սիրելի պարոն աներձագս, բոլոր ըսելիքդ լմնցուցի՞ր։

**ԿՂԷ.** Այո՛։

**ՕՐԿՕՆ.** (*հեռանալով*) Ծառայ եմ։

**ԿՂԷ.** Շնորհք ըրէ, խօսք մ'ըսեմ, եղբայր իմ։ Այդ զրոյցները մէկ դի թողունք։ Գիտես որ Վալերիոս, քու փեսայդ ըլլալու համար, քեզմէ խօսք առած է։

**ՕՐԿՕՆ.** Այո՛։

**ԿՂԷԱՆ.** Դուն ալ հաճութիւն տուած էիր առանկ բաղձալի խնամիկապի մի համար։

**ՕՐԿՕՆ.** Իրաւ է։

**ԿՂԷ.** Ինչո՞ւ համար ուրեմն երկարաձգուի հարսանիքը։

**ՕՐԿՕՆ.** Չեմ գիտեր։

**ԿՂԷ.** Արդեօք մտքիդ մէջ ուրիշ մտածմունք մ'ունի՞ս։

**ՕՐԿՕՆ.** Գուցէ։

**ԿՂԷ.** Կ'ուզե՞ս որ խօսքէդ դառնաս։

**ՕՐԿՕՆ.** Ես զայդ չեմ ըսեր։

**ԿՂԷ.** Կարծեմ, բնաւին խոչընդոտ մի չկայ, որ կարենայ արգիլել քու խոստմունքդ կատարուելու։

**ՕՐԿՕՆ.** Նայինք։

**ԿՂԷ.** Միայն խօսք մ'ըսելու համար, ինչ հարկ այդքան նրբամանդութիւն։ Վալերիոս, այս գործին համար, զիս քեզի ղրկեց։

**ՕՐԿՕՆ.** Օրհնեա՛լ է Աստուած։



**ԿՂԷ.** Բայց ի՞նչ պատասխան տանիմ։

**ՕՐԿՕՆ.** Ինչ որ հաճիս։

**ԿՂԷ.** Բայց հարկ է որ որոշմունքդ իմանանք։ Միտքդ ի՞նչ է ուրեմն։

**ՕՐԿՕՆ.** Միտքս՝ ընել է ինչ որ Աստուծոյ կամքն է։

**ԿՂԷ.** Բայց կատակը մէկ դի թողունք։ Վալերիոս քո խոստումդ առած է. խօսքդ բռնելո՞ւ ես, թէ ոչ։

**ՕՐԿՕՆ.** Մնաս բարեաւ։

**ԿՂԷ.** (*առանձին*) Թէ որ այս անցածներուն վրայօք բան մ'իմացնեմ, կը վախնամ որ իր սիրոյն դժբաղդութիւն մի չպատահի։

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՕՐԿՕՆ, ՄԱՐԻԱՆՆ։

**ՕՐԿՕՆ.** Մարիանն։

**ՄԱՐԻԱՆՆԱ.** Հայր իմ։

**ՕՐԿՕՆ.** Մօտ եկուր, քեզի գաղտնի խօսք մ'ունիմ։

**ՄԱՐ.** (*Օրկոնին որ սենեկի մի մէջ կը նայի*) Ի՞նչ կը փնտռէք։

**ՕՐԿՕՆ.** Կը նայիմ որ չըլլայ թէ մէկը հոն գտնուի որ մեզ մտիկ ընէ. Ուրեմն, ահա վասն զի այս փոքրիկ տեղը՝ վերահասութեան շատ յարմար է։ Մարիանն, ես քո վրայ ամեն ժամանակ հեզաբարոյ բնաւորութիւն մի գտած եմ, և ամեն ժամանակ ալ դուն ինծի սիրելի եղած ես։

**ՄԱՐ.** Շատ շնորհապարտ եմ այդ հայրական սիրոյդ։

**ՕՐԿՕՆ.** Շատ լաւ ըսիր, աղջիկս. և ատոր արժանանալու համար, ուրիշ բանի հոգ մի տանիր, բայց եթէ զիս գոհ ընելու։

**ՄԱՐ.** Իմ ալ ամենէ մեծ փառքս՝ ատոր վրայ է։

**ՕՐԿՕՆ.** Շատ աղէկ։ Ի՞նչ կ'ըսես մեր Թարթիւֆ հիւրին վրայօք։

**ՄԱՐ.** Ո՞վ, ե՞ս։

**ՕՐԿՕՆ.** Դուն։ Աղէկ դիտէ՛ ինչ պատասխանելու ես։

**ՄԱՐ.** Ափսո՜ս, ես՝ ինչ որ ուզես այն պիտի՝ ըսեմ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՕՐԿՈՆ, ՄԱՐԻԱՆԱ, ԴՈՐԻՆԱ (ծածուկ մը ներս մտնելով և առանց գտնուելու, Օրկոնին ետևը կայնելով։)

**ՕՐԿՈՆ**. Այդ՝ խոհեմութեամբ խօսեցար։ Ուրեմն, ըսէ ինձ, աղջիկս, չէ՞ որ իր բոլոր անձին վրայ բարձր արժանաւորութիւն մի կը փայլի, քու սրտիդ չա՞ղդեր, և քեզի ալ քաղցրատենչ բան չէ՞ր ըլլար, որ իմ ընտրութեամբս, անոր քու ամուսինդ ըլլալը տեսնէի։ Հէ՞։

**ՄԱՐ**. Հէ՞։

**ՕՐԿՈՆ**. Ի՞նչ ըսիր։

**ՄԱՐ**. Ի՞նչ հրամեցիր։

**ՕՐԿՈՆ**. Ի՞նչ։

**ՄԱՐ**. Արդեօք սխա՞լ հասկցայ։

**ՕՐԿՈՆ**. Ինտո՞ր։

**ՄԱՐ**. Ո՞վ կ'ուզէք, որ ըսեմ, հայր իմ, որ սրտիս ազդէ, և ինձ տենչալի բան մ'ըլլայ, որ քու ընտրութեամբդ, իմ ամուսինս ըլլալը տեսնէք։

**ՕՐԿՈՆ**. Թարթիւֆը։

**ՄԱՐ**. Երդում կ'ընեմ, հայր իմ, որ բնաւ այդ չէ, ինչո՞ւ համար ինձ այսպիսի խաբէութիւն մ'ըսել տալ կ'ուզէք։

**ՕՐԿՈՆ**. Բայց ես կ'ուզեմ որ արդեամբ ասանկ ըլլայ. և այս բաւական ըլլայ քեզ, քանի որ ես այնպէս որոշած եմ,

**ՄԱՐ**. Ինչպէ՞ս, հայր իմ, կ'ուզես որ . . .

**ՕՐԿՈՆ**. Այո՛, կը պահանջեմ, աղջիկս, որ քու ամուսնութեամբ, Թարթիւֆը իմ ընտանեացս միացնեմ։ Քու էրիկդ ըլլալու է, ես այնպէս որոշեցի։ Եւ ըստ որում քու աչացդ մէջ՝ ես . . . (Դորինան տեսնելով) Ի՞նչ բան ունիս հոդ, այդ ի՞նչ յանդուգն հետաքրքրութիւն է, անուշիկս, որ եկեր այդ կերպով մեզ մտիկ կ'ընես։

**ԴՈՐ**. Ճշմարիտն ըսեմ, չեմ գիտեր թէ մակաբերութեամբ տարածուած տարաձայնութիւն է, թէ բաղդի դիպուած մի, բայց այս ամուսնութեան վրայօք ինձ լուր տուին, և բոլորովին անկրանալի բանի տեղ դրի։

**ՕՐԿՈՆ**. Ի՞նչ կ'ըսես, այս գործը չհաւատացուելի՞ք է։

**ԴՈՐ**. Այնքան չհաւատացուելիք որ քեզ իսկ, պարոն, չեմ կրնար հաւատալ։

**ՕՐԿՈՆ**. Ես գիտեմ քեզ հաւատցնելու կերպը։

**ԴՈՐ**. Այո՛, այո՛, զուարճալի պատմութիւն մ'է ըսածդ։

**ՕՐԿՈՆ**. Քիչ ժամանակէն ճիշդ տեսնուելիքը կը պատմեմ։

**ԴՈՐ**. Փուճ խօսքեր են ատոնք։

**ՕՐԿՈՆ**. Ըսածս, աղջիկս, խաղ չէ։

**ԴՈՐ**. Քեզ նայիմ, չհաւտաս, մեծապատիւ հօրդ. կը կատակէ։



**ՕՐԿՈՆ**. Ես կ'ըսեմ. . .

**ԴՈՐ**. Չէ, ինչ կ'ուզես ըրէ, մարդ քեզ չհաւատար։

**ՕՐԿՈՆ**. Վերջապէս բարկութիւնս . . .

**ԴՈՐ**. Թո՛ղ ասանկ ըլլայ, գիցուք թէ հաւատացինք։ Այն ատեն քեզի համար աւելի գէշ։ Ի՞նչ, պարոն, կարելի՞ բան է, որ քու խոհեմ մարդու կերպարանօքդ, և այդ դէմքիդ վրայ եղած երկայն մօրուօքդ, այնքան խենդ ըլլաս՝ որ ուզես . . .

**ՕՐԿՈՆ**. Ինձ մտիկ ըրէ, դուն կը նայիմ որ տանս մէջ շատ երես առած ես, որն որ բնաւին իմ բանիս չգար, քեզ կ'ըսեմ զայս, անուշիկս։

**ԴՈՐ**. Շատ կ'աղաչեմ, պարոն, առանց բարկանալու խօսինք։ Այս գաղտագաւը նիւթելուդ համար մարդոց վրայ խնդա՞լ կ'ուզես։ Քու աղջիկդ՝ կեղծապաշտի մը համար եղած չէ, այն ուրիշ պաշտօններ ունի մտածելու։ Բաց յայսմանէ, այսպիսի խնամութիւն մի ձեզ ի՞նչ օգուտ պիտի ընէ. Ի՞նչ մտօք, քու բոլոր հարստութեամբդ, գացիր ասանկ մուրացկանին մէկը քեզ փեսայ ընտրեցիր . . .

**ՕՐԿՈՆ**. Չայնդ կտրէ՛։ Թէ որ բան մի չունի՝ գիտցիր որ այդ բանին համար է որ զայն յարգել պէտք ենք։ Իր չքաւորութիւնը անշուշտ պարկեշտ չքաւորութիւն մ'է, որ զինք պէտք է ծախութիւններէ աւելի վեր ամբառնայ։ Վասն զի աշխարհային բաներու վրայ շատ քիչ հոգ ունենալուն և յաւիտենական բաներու վրայ զօրաւոր կերպով կապուած ըլլալուն համար՝ կամաւ ինքզինք զրկած է իր բարիքներէն։ Բայց իմ օգնութիւնս՝ կրնայ իրեն միջոցներ մատակարարել որ նեղութենէ դուրս ելնէ և նորէն իր ստացուածոց տէր ըլլայ. ասանկ մարդիկ իրաւամբ աւատատէր պատուանունը կը կրեն քաղքի մէջ, և ինքն ալ՝ ինչպէս որ կը ցուցնէ՝ ճշմարիտ ազնուական մ'է։

**ԴՈՐ**. Այո՛, ինքն է ասանկ ըսողը. և այս ունայնութիւնը՝ պարոն, իր բարեպաշտութեան հետ բնաւին չյարմարիր։ Ո՛վ որ անարատ վարուց անմեղութեան ետևէ կ'ինկնի, պէտք չէ երբեք որ իր անուան և ծննդեան վրայ պարծի. երկիւղածութեան խոնարհ առաջավարութիւնն ալ՝ անտանելի կերպով կը հանդուրժէ այս փառասիրութեան արտացոլքներուն, Ի՞նչ բանի կը ծառայէ այս գոռոզութիւնը . . . ։ Բայց այս խօսքը քեզ կը վիրաւորէ. եկուր իր անձին վրայ ալ խօսինք, և իր ազնուութիւնը մէկ դի ձգենք։ Քու գտերդ պէս աղջիկ մի՝ առանց տաղտկանալու այնպիսի մարդու ձեռք պիտի յանձնես։ Պէտք չէ՞ որ քիչ մ'ալ վայելչութեան վրայ մտածես, և այս ամուսնութեան հետևութիւնները նախատեսես։ Գիտցի՛ր որ աղջկան մ'ողջախոհութիւնը վտանգի մէջ կը ձգուի, երբ իր ամուսնութեան մէջ իր ճաշակին դէմ կը դրուի. և պարկեշտաբար մէկտեղ ապրելու եղանակը՝ իրեն տրուած էրիկի մի բնաւորութիւններէն կախեալ է բոլորովին. և անոնք՝ որոնց ճակատը ամեն տեղ մատով կը ցուցնեն, յաճախ իրենց կնիկնին այնպէս կ'ընեն ինչպէս որ ինչ ըլլալնին կը տեսնուի։ Վերջապէս շատ դժուար է հաւատարիմ մնալ այնպիսի էրիկներու՝ որոնք մասնաւոր չէնք մ'ունին. և ո՛վ որ իր աղջկան այնպիսի ամուսին մի կը տայ զոր նէ կ'ատէ, իր գործած մեղքերուն համար Աստուծոյ առջև պատասխանատու է։ Միտքդ բե՛ր անգամ մի թէ քու որոշումդ ինչ վտանգի մէջ կը ձգէ զքեզ։

ՕՐԳՕՆ. Ես քեզի կ'ըսեմ թէ աղջիկես սովորիլ պէտք եմ ապրիլը:

ԴՈՐ. Այդ բանին համար իմ խրատուցս մտիկ ընելէն աւելի լաւ բան չպիտի ընէիր:

ՕՐԳՕՆ. Աղջիկս, այս փուճ խօսքերով ժամանակ չկորսնենք. ես գիտեմ քեզ ինչ պէտք է, և ես քո հայրդ եմ: Քեզի համար Վալերիոսին խօսք տուած էի, բայց, կ'ըսեն որ խաղամոլ ըլլալէն զատ՝ կը կասկածիմ նաև որ քիչ մ'ալ անառակ է. բնաւ իր եկեղեցի յաճախելը տեսած չեմ,

ԴՈՐ. Կ'ուզես որ քո գտնուած ժամանակներուդ հոն վազէ՞, այն մարդոց նման որ միայն ինքզինքնին ցուցնելու համար կ'երթան:

ՕՐԳՕՆ. Ես այդ բանին վրայօք քո կարծիքդ չեմ հարցներ: Վերջապէս միւսը՝ Աստուծոյ ամենէ ընտրելին է, և ուրիշ որ և իցէ երկրորդի մի քով. այս մարդը գանձ մի է: Այս ամուսնութիւնը ամեն բարիքներէն աւելի բաղձանքդ պիտի լեցնէ, բոլորովին քաղցրութեամբ ու հաճութեամբք պիտի յղփանայ: Ձեր հաւատարիմ տարփանաց մէջ՝ երկու հարազատ զաւակներու, երկու տատրակներու պէս մէկտեղ պիտի ապրիք. երբեք տաղտկալի կռիւ չպիտի բանուիք. և զինք ինչ որ ուզես պիտ' ընես:

ԴՈՐ. Նէ՞, նէ ապուշ մի պիտ' ընէ զայն, ճշմարիտ վկայ:

ՕՐԳՕՆ. Գոցէ բերանդ, ի՞նչ խօսքեր են ատոնք:

ԴՈՐ. Կ'ըսեմ թէ, պարոն, այնպիսի կերպարանք մ'ունի՝ որ իւր բնածին յատկութիւնը՝ աղջկանդ ունենալու բոլոր զգաստութեան վրայ պիտի գերազանցէ:

ՕՐԳՕՆ. Ալ խօսքս մի ընդմիջեր, և նայէ որ բերանդ գոցես, այս քո խառնուելու գործդ չէ:

ԴՈՐ. Ես՝ քո շահուդ համար միայն կը խօսիմ, պարոն:

ՕՐԳՕՆ. Այդ ինչ մեծ հոգ տանիլ է. գոցէ բերանդ, թէ որ կը հաճիս:

ԴՈՐ. Թէ որ քեզ չսիրէին . . .

ՕՐԳՕՆ. Ես չեմ ուզեր որ զիս սիրեն:

ԴՈՐ. Ես ալ, պարոն, քո կամացդ դէմ, զքեզ պիտի սիրեմ:

ՕՐԳՕՆ. Ո՜հ՛

ԴՈՐ. Քո պատիւդ ինձ թանկագին է, և չեմ կրնար համբերել որ ամեն մարդու առջև խաղք ու խայտառակ ըլլաս:

ՕՐԳՕՆ. Բերանդ չպիտի գոցե՞ս:

ԴՈՐ. Այսպիսի ամուսնութիւն մ'ընել ուզելդ՝ խղճմտանքի գործ է:

ՕՐԳՕՆ. Պապանձելո՞ւ ես, օձ, որու լկտի բարբանջանքը . . .

ԴՈՐ. Ո՜հ, դու ինչ բարեպաշտ մարդ ես որ կը բարկանաս:

ՕՐԳՕՆ. Այո, մաղձս կը բորբոքի այս անհամ խօսքերուդ, և անպատճառ կ'ուզեմ որ պապանձիս:

ԴՈՐ. Անանկ թող ըլլայ: Բայց, բան մ'ալ չըսեմ, ես դարձեալ անանկ պիտի մտածեմ:

ՕՐԳՕՆ. Ուզածիդ չափ մտածէ. բայց գոնէ քո գործոց զգուշէ: (Աղջկանը) Ինձ բան մի չըսելու համար, կամ . . . կ'օգտէ . . . իբրև խոհեմ մարդ ամեն բան ուշի ուշով մտածուած եմ:



ԴՈՐ. (մէկ կողմ) Կը կատղիմ որ բան մի չեմ կրնար խօսիլ:

ՕՐԳՕՆ. Առանց իգապաշտ ըլլալու՝ Թարթիւֆ այնպէս եղած է . . .

ԴՈՐ. (մէկ կողմ) Այո՛, պատուական անճոռնի մ'է:

ՕՐԳՕՆ Որ, թէ որ իր ունեցած բոլոր միւս ձրից վրայ՝ բնաւ համակրութիւն մ'ալ չունենաս . . .

ԴՈՐ. Այս ինչ հազուագիւտ բաղդի հանդիպեցաւ աղջիկը: (Օրկոն՝ Դորինայի կողմ կը դառնայ, եւ, խաչածալ բազուկներով՝ զան մտիկ կ'ընէ, եւ երեսէն վար կը նայի) Թէ որ ես իր տեղն ըլլայի՝ ճշմարիտ կ'ըսեմ, մարդ մի հեռու բանի կարգուած չպիտ' ըլլար առանց պատժուելու. և հարսնիքէն ետք շատ չանցած, պիտի ցուցնէի իրեն որ կնիկ մի՝ միշտ պատրաստ վրէժխնդրութիւն մ'ունի:

ՕՐԳՕՆ. (Դորինային) Ուրեմն այս բառերուս ականջ չպիտի՞ կախուի:

ԴՈՐ. Ի՞նչ բանի համար կը տրտնջաս: Ես քեզի հետ չեմ խօսիր:

ՕՐԳՕՆ. Ի՞նչ է այդ ըրածդ, ուրեմն:

ԴՈՐ. Ես ինքնիրենս կը խօսիմ:

ՕՐԳՕՆ. (մեկուսի) Շատ աղէկ: Անոր վերջին ծայր լրբութիւնը պատժելու համար, պէտք է որ ձեռքիս հակապատակը տամ իրեն: (Այնպիսի դիրքով կը կենայ որ ապտակ մի տայ Դորինային, եւ աղջկանն ըսած ամեն մէկ խօսքին, կը դառնայ որ Դորինան նայի, որ առանց խօսելու շիտակ կը կայնի) Աղջիկս, պէտք է որ հաւանութիւն տաս իմ որոշմանս . . . և հաւատաս որ այս ամուսինը . . . զոր քեզ համար ընտրեցի . . . (Դորինային) Ինչո՞ւ ինքնիրենդ չես խօսիր:

ԴՈՐ. Ինքնիրենս ըսելու բան մի չունիմ:

ՕՐԳՕՆ. Պզտիկ խօսք մ'ալ ըսէ:

ԴՈՐ. Ես, չեմ հաճիր:

ՕՐԳՕՆ. Անշուշտ, ես քեզ կ'ընդդիմնէի:

ԴՈՐ. Գուցէ ապուշուհի մի, ճշմարիտ . . .

ՕՐԳՕՆ. Վերջապէս, աղջիկս, պէտք է որ հնազանդիս, և իմ ընտրութեանս բոլորովին զիջանիս:

ԴՈՐ. (փախչելով) Ես այդպիսի էրիկ մ'առնելու վրայ կը ծիծաղիմ:

ՕՐԳՕՆ. (Դորինային ապտակ մի տալ չկրնալէն ետք) Այո՛ աղջիկս, քովդ պատուհաս մի է, որու հետ պատուհասն առանց մեղք գործելու չպիտի կրնամ ապրիլ: Խօսքս շարունակելու համար ինքզինքես ելած կ'զգամ զիս. իր լիրբ խօսքերը միտքս բորբոքեցին, և կ'ուզեմ երթալ քիչ մ'օդ առնել որպէս զի սիրտս հանգչի:

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՄԱՐԻԱՆՆԱ, ԴՈՐԻՆԱ:

ԴՈՐ. Ըսէ ինձ նայիմ, խելքդ թռցուցա՞ծ ես. և հարկ է որ ես այս գործին մէջ քո դերդ կատարեմ, հանդուրժեմ որ այսպիսի անխոհեմ առաջարկու-

թիւն մ'ընեն քեզ. և դուն ալ բերանէդ խօսք մի չհաներ որ զայն մերժես։

**ՄԱՐ.** Հօր մի հրամանին դէմ ի՞նչ կ'ուզես որ ընեմ։

**ԴՈՐ.** Ինչ որ պէտք է որ այսպիսի սպառնալեաց մ'անհետանայ։

**ՄԱՐ.** Ի՞նչ։

**ԴՈՐ.** Իրեն ըսելու էիր որ սիրտ մի՝ ուրիշի ձեռօք մէկու մի վրայ սէր չի-կրնար ձգել. թէ դուն քեզի համար կը կարգուիս, և ոչ թէ իրեն համար. և բոլոր խնդիրը աղջկան մի վրայ ըլլալուն համար՝ ամուսինը քեզի պէտք էր հաճելի ըլլալ և ոչ թէ իրեն. թէ որ իր Թարթիւֆը իրեն այնքան սիրելի է, մարդ մ'իրեն արգելք չըլլար որ ինք անոր հետ կարգուի։

**ՄԱՐ.** Կը խոստովանիմ, որ հայր մի. մեր վրայ այնքան իշխանութիւն ունի, որ երբէք իրեն կամքին դէմ բան մ'ընելու զօրութիւն չունեցայ։

**ԴՈՐ.** Կեցիր քիչ մի խելամտինք։ Վալերիոս քեզի ուզեց. կ'աղաչեմ ըսէ, կը սիրե՞ս զան թէ չես սիրեր։

**ՄԱՐ.** Ո՜հ, Դորինա, ինչ մեծ անիրաւութեամբ կը խօսիս իմ սիրոյս դէմ, պէ՞տք էիր որ ինծի այս հարցումնքն ընէիր. ես ադոր վրայօք հազար անգամ սիրտս քեզ չբացի՞, ու չե՞ս գիտեր որ իրեն համար սէրս մինչև ո՛ւր կը հասնի։

**ԴՈՐ.** Ի՞նչ գիտնամ ես, գուցէ սիրտդ միայն բերնով խօսած է, և նայինք այս տարփածոյն ալ իրաւցնէ քեզ հաճելի եղա՞ծ է։

**ՄԱՐ.** Դորինա՛, շատ կը սխալիս, սիրոյս վրայ կասկածելով. չե՞ս գիտեր որ ճշմարիտ զգացմանցս որքան հզօր ապացոյցներ տուի։

**ԴՈՐ.** Վերջապէս, ըսել է որ կը սիրես զան, այնպէ՞ս է։

**ՄԱՐ.** Անշուշտ, անհնարին եռանդեամբ։

**ԴՈՐ.** Եւ ըստ երևութից անշուշտ ան ալ զքեզ կը սիրէ՞։

**ՄԱՐ.** Այնպէս կարծեմ։

**ԴՈՐ.** Եւ երկուքդ ալ կը բաղձա՞ք որ իրարու հետ կարգուիք։

**ՄԱՐ.** Հապա՛։

**ԴՈՐ.** Հապա միւս ամուսնութեան վրայօք ի՞նչ է քո մտադրութիւնդ։

**ՄԱՐ.** Ինքզինքս մեռցնել՝ թէ որ զիս բռնաբարեն։

**ԴՈՐ.** Շատ լաւ։ Աճա ապաւինութիւն մ'որ մինչև չէր անցներ. միայն մեռնիլ պէտք ես որ այս տառապանքէն ազատիս։ Անտարակոյս այս դարմանը սքանչելի է։ Կը կատղիմ երբ այս տեսակ լեզուի գործածուիլը կը լսեմ։

**ՄԱՐ.** Ո՜հ Աստուած, աս ինչ տարօրինակ բնութեան տէր անձուհի մ'ես, Դորինա, մարդոց նեղութեանց բնաւին ցաւակից չես ըլլար։

**ԴՈՐ.** Բնաւին ցաւակից չեմ ըլլար բարբանջ բռողներուն, և անոնց՝ որ պատեհ առթի մէջ քեզի պէս կը կակուղնան։

**ՄԱՐ.** Ինչ կ'ուզես որ ընեմ, երբ ամօթխած եմ։

**ԴՈՐ.** Բայց սէրը՝ սրտի մի մէջ հաստատամտութիւն կը պահանջէ։

**ՄԱՐ.** Կարծես որ ես չունեցա՞յ Վալերիոսի տարփանաց համար, և իրեն չի՞նկնիր որ զիս հօրմէս խնդրէ։

**ԴՈՐ.** Ի՞նչ ընենք, երբ հայրդ նեղսիրտ ասատականին մէկն է, որ խելքը միտքը իր Թարթիւֆին տուած ըլլալով՝ ձեր ամուսնութեան համար տուած խօսքը ետ կ'առնէ. առոր յանցանքը ձեր սիրողին կրնա՞յ ընծայուիլ։



**ՄԱՐ.** Բայց և այնպէս, յամառ մերժմամբ և բացայայտ անարգանօք պէ՞տք է որ, իմ ընտրութեանս մէջ, սիրագրաւ սիրտ մ'երևան հանեմ։ Իրեն համար այն համբաւով որով կը փայլի, թէ սեռիս պատկառանքէն և թէ դստեր մի պարտքէն դուրս ելնե՞մ. և կ'ուզե՞ս որ իմ տարփանքս ամենուն բերանը տարածուելով . . .

**ԴՈՐ.** Չէ՛, չէ՛, բան մի չեմ ուզեր։ Կը նայիմ որ դուն Պ. Թարթիւֆը կ'ուզես. և երբ կը մտածեմ, սխալմունք մ'ըրած պիտ' ըլլամ միտքդ այս ամուսնութենէ դարձնելու։ Ինչ իրաւունք ունենալու եմ որ բաղձանքդ յաղթահարեմ։ Կը նայիմ որ այս որոշմունքդ ըստ ինքեան շատ օգտակար է։ Պ. Թարթիւֆը, հօ՜, հօ՜, ա՞յս է միայն առաջարկուածը, անշուշտ, Պ. Թարթիւֆը, չիտակը խօսինք, ո՛չ, այնպիսի մարդ չէ, որ քիթը ոտքովը կը սրբէ. և պզտիկ բաղդ մ'ալ չէ անոր ամուսին ըլլալը։ Արդէն ամեն մարդ զայն առօք փառօք կը պսակէ. շատ ազնիւ մարդ մ'է ինքնին, և շատ ալ վայելուչ անձամբ։ Ականջը կարմիր է և գոյնն ալ ծաղկափթիթ. դուն այնպիսի ամուսնոյ մի հետ շատ երջանիկ կեանք պիտ' անցունես։

**ՄԱՐ.** Աստուա՜ծ իմ։

**ԴՈՐ.** Ի՜նչ հրճուանք պիտ' ըզգաս արդեօք սրտէդ, երբ այսպիսի գեղեցիկ մարդու կողակից ըլլալդ տեսնես,

**ՄԱՐ.** Ա՜հ, կ'օգտէ ալ, կ'աղաչեմ, այդպիսի խօսքեր ըսելդ. առաւել՝ այս ամուսնութեան դէմ ինծի հնարք մի սովրեցուր։ Բանս լմնցած է, անձս առած եմ, ամեն բան ընելու պատրաստ եմ։

**ԴՈՐ.** Չէ՛, պէտք է որ աղջիկ մ'իր հօրը հնազանդի, թէև իրեն կապիկ մ'իսկ ամուսին տրուի։ Բաղդդ պատուական է. ինչ բանէ կը գժգոհիս։ Սայլով մ'իր քաղաքն երթալու ես, զոր հօրեղբայրներով ու հօրեղ օրորդիներով լեցուն պիտի գտնես, և շատ պիտի հաճիս անոնց կենցաղավարութենէ, Նախ զքեզ բարձր դասու ընկերութեանց մէջ պիտի մտցնեն. պիտի երթաս այցելութիւններ տալու, քո բարեգալստեանդ համար, առ տիկին պայլուհին և առ տիկին ընտրելուհին, որք երկածալ աթոռով զքեզ պիտի պատուեն։ Հոն՝ բարեկենդանի ատեն, պիտի կարենաս յուսալ պարահանդէսի և մեծ նուագախումբի, այսինքն, երկու հովուատիկ, երբեմն ալ ծաղրածուներ ու լարախիլներ. այսու ամենայնիւ թէ որ էրիկդ . . .

**ՄԱՐ.** Ա՜հ, կը մեռցնես զիս։ Առաւել՝ քո խրատներովդ նայէ որ ինծ օգնես։

**ԴՈՐ.** Ծառայուհիդ եմ։

**ՄԱՐ.** Է՜հ, Դորինա, շնորհք ըրէ . . .

**ԴՈՐ.** Քեզ պատժելու համար, պէտք է որ այս գործը կատարուի։

**ՄԱՐ.** Խե՜ղճ աղջիկս։

**ԴՈՐ.** Չէ՛։

**ՄԱՐ.** Թէ որ իմ բաղձանքս յայտնուին . . . .

**ԴՈՐ.** Բնաւին։ Թարթիւֆ քո մարդդ է, և համը պիտ' առնես։

**ՄԱՐ.** Գիտես որ ես միշտ քեզի հաւատացած եմ իմ գաղտնիքս. ըրէ ինծ...

**ԴՈՐ.** Չէ՛, ճշմարիտ կ'ըսեմ, պիտի Թարթիւֆանաս։

**ՄԱՐ.** Աղէ՛ ուրեմն, ըստ որում այս խեղճ վիճակս չկրնար սիրտդ շարժել,

ալ թող զիս այսուհետեւ որ յուսահատութեամբս մեռնիմ. անորմէ է որ սիրտս օգնութիւն պիտի փոխ առնէ, և ես ալ իմ դժբաղդութեանցս անվրէպ դարմանը գտնեմ։ (Մարիանա հեռանալ կ'ուզէ)

**ԴՈՐ.** Հէ՛, կեցի՛ր, կեցի՛ր. ե՛տ եկուր։ Բարկութիւնս անցաւ։ Այս ամէն բաներուն հակառակ՝ պէտք է որ վրադ գթամ։

**ՄԱՐ.** Տեսա՛ր հիմա, Դորինա, ճշմարիտ կ'ըսեմ, թէ որ զիս այս անտանելի մարտիրոսութեան մէջ թողուն պիտի հոգիս ելնէ։

**ԴՈՐ.** Ինքզինքդ անհանգիստ մ'ըներ։ Վարպետութեամբ կրնայ առջեն առնուիլ . . . ։ Բայց ահա՛ Վալերիոսը, քու տարփաւորդ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՎԱԼԵՐԻՈՍ, ՄԱՐԻԱՆԱ, ԴՈՐԻՆԱ։

**ՎԱԼԵՐԻՈՍ.** Օրիորդ, եկան ինծի նոր լուր մը տուին զոր չէի գիտեր, և որ անշուշտ հաճելի բան մ'ըլլալու է։

**ՄԱՐ.** Ի՞նչ։

**ՎԱԼ.** Թէ Թարթիւֆի հետ պիտի կարգուիս։

**ՄԱՐ.** Ստոյգ է որ հայրս իր միտքը դրեր է այսպիսի դիտաւորութիւն մը։

**ՎԱԼ.** Հա՛յրդ, Օրիորդ . . .

**ՄԱՐ.** Նպատակը փոխեր է, հիմա ինք եկաւ զայն ինծի առաջարկելու։

**ՎԱԼ.** Ի՛նչ, առա՞նց կատակի։

**ՄԱՐ.** Այո՛, առանց կատակի։ Այս ամուսնախօսութեան համար հոգւով մարմնով կ'աշխատի։

**ՎԱԼ.** Իսկ նպատակդ ի՞նչ է, Օրիորդ, սիրտդ ի՞նչ կ'ըսէ։

**ՄԱՐ.** Չեմ գիտեր։

**ՎԱԼ.** Այդ ինչ համեստ պատասխան է։ Չե՞ս գիտեր։

**ՄԱՐ.** Ո՛չ։

**ՎԱԼ.** Ո՞չ։

**ՄԱՐ.** Ի՞նչ խրատ կը տաս ինծի։

**ՎԱԼ.** Ես քեզի խրատ կը տամ, որ այն էրկան հետ կարգուիս։

**ՄԱՐ.** Այդ խրատը կը տա՞ս ինծի։

**ՎԱԼ.** Այո՛։

**ՄԱՐ.** Սրտա՞նց կ'ըսես։

**ՎԱԼ.** Սրտանց կ'ըսեմ, հապա՛։ Ընտրութիւնը սքանչելի է, և կ'արժէ որ մտիկ ըլլուի։

**ՄԱՐ.** Աղէ՛ ուրեմն, Պարոն, այդ խրատ մ'է, զոր քեզմէ կ'ընդունիմ։

**ՎԱԼ.** Կարծեմ, շատ աշխատութիւն չպիտի քաշես որ անոր հետեւիս։

**ՄԱՐ.** Ոչ այնքան աւելի որքան սիրտդ դիմացած է որ զայն տաս ինծի։

**ՎԱԼ.** Օրիորդ, ես զայն քեզ տուի որ քեզի հաճելի ըլլամ։

**ՄԱՐ.** Ես ալ անոր հետեւելու եմ որ քեզի հաճութիւն տամ։



**ԴՈՐ.** (Թէատրոնին խորը քաշուելով) Նայինք ասոր տակէն ի՞նչ պիտի ելնէ։

**ՎԱԼ.** Ա՜յս կերպով մարդ կը սիրեն։ Ուրեմն խաբէութիւն է եղեր երբ դուն . . .

**ՄԱՐ.** Ատոր վրայօք ընաւ չխօսինք, կ'աղաչեմ. դուն ինծի արձակ-համարձակ ըսիր որ ինծի ներկայացուած անձը՝ էրիկի տեղ ընդունիմ. և ես ալ՝ բացարձակաբար կը յայտնեմ, որ անանկ ընելու եմ, վասն զի ինծի կենսապարգեւ խրատ մի կը տաս։

**ՎԱԼ.** Իմ խորհրդատուութեանցս պատճառաւ՝ ինքզինքդ մի՛ արդարացներ։ Դուն արդէն որոշմունքդ ըրած էիր. և հիմա այս չնչին պատճառը պատրուակ բռնելով՝ ինքզինքդ անպարտ կը կացուցանես որ խօսքէդ դառնաս։

**ՄԱՐ.** Ճշմարիտ է, շատ աղէկ ըսիր։

**ՎԱԼ.** Անշուշտ, և քու սիրտդ երբեք իմ վրաս ճշմարիտ սէր չունեցաւ։

**ՄԱՐ.** Ափսո՜ս. ներեալ է քեզ որ այս մտածութիւնն ունենաս։

**ՎԱԼ.** Այո՛, այո՛, ներեալ է ինծ. բայց սիրտս վիրաւորուելով՝ զուցէ այսպիսի դիտաւորութենէ զքեզ արգիլէ. այսու ամենայնիւ ես ալ գիտեմ եռանդս ու ձեռքս ուր պիտի ուղղեմ։

**ՄԱՐ.** Ո՛հ, ատոր վրայ չեմ տարակուսիր. և այն եռանդը որ արժանաւորութիւնը կը յարգէ . . .

**ՎԱԼ.** Ո՛հ Աստուած, մէկ դի թողունք արժանաւորութիւնը. ես անշուշտ շատ քիչ արժանաւորութիւն ունիմ, և դուն ալ այնպէս կը հաւատաս, բայց ես ուրիշ անձուհիի մը՝ վրաս ունենալու բարեսրտութեանց կը յուսամ, և գիտեմ նետուիլ այնպիսւոյ մը սրտին մէջ ուր ինծի համար բաց ապաստանարան ունի, և առանց ամօթոյ՝ իմ կորուստս յարգարելու հաւանութիւն տալու է։

**ՄԱՐ.** Կորուստը մեծ չէ. և այս փոփոխութենէ դիւրաւ ինքզինքդ պիտի մխիթարես։

**ՎԱԼ.** Ձեռքէս եկածը պիտ՝ ընեմ, և կրնաս հաւատալ որ երբ սիրտ մը մեզ կը մոռնայ՝ մեր փառքը կը բռնադրաւէ, և զայն մոռնալու համար մեր բոլոր հոգն ունենալ պէտք ենք. թէ որ զլուխ չելնուիր, գոնէ այնպէս կեղծել հարկ է. և մեզ լքանողներու վրայ սէր ցուցնելու վատութիւնը՝ երբեք ներելի եղած չէ։

**ՄԱՐ.** Այդ զգացմունքը, յիրաւի, ազնիւ և վսեմական է։

**ՎԱԼ.** Շատ լաւ. և մեր ամեն մէկէն պէտք է ընդունուած ըլլայ։ Ի՞հ, ինչ կ'ըսես. կ'ուզէիր որ քեզ համար իմ եռանդեանս բոցերը սրտիս մէջ յաւիտեանս ծածկած պահէի՞, և տեսնէի, որ աչքիս առջեւ, ուրիշի բազկաց մէջ անցնիս, առանց ուրիշ տեղ մի դնելու սիրտս՝ զոր դուն չես ընդունիր։

**ՄԱՐ.** Ընդհակառակն. ինծի համար՝ իմ ուզածս ալ այս է. և կը բաղձայի որ այդ բանը արդէն կատարուէր։

**ՎԱԼ.** Կը բաղձայի՞ր։

**ՄԱՐ.** Այո՛։

**ՎԱԼ.** Աւ կ'օգտէ զիս անպատուելդ, Օրիորդ, և այս կէտիս, զքեզ գոհ ընելու եմ, (բայլ մի կ'առնէ՝ հեռանալու համար)

**ՄԱՐ.** Շատ լաւ։

**ՎԱՂ.** (ետ գալով) Բայց գոնէ միտքդ բե՛ր, թէ դուն եղար այս վերջին ծայր չափերու մէջ իմ սիրոյս դէմ կեցողը։

**ՄԱՐ.** Այո՛։

**ՎԱՂ.** (նորէն ետ գալով) Եւ թէ իմ սիրտս ինչ նպատակ որ ունի՝ տուած օրինակիդ միայն հետեւած է։

**ՄԱՐ.** Իմ օրինակիս հետեւած, թո՛ղ ըլլայ։

**ՎԱՂ.** (ելնելով) Կ'օգտէ. տեսնես՝ ինչպէս ճշդիւ կամքդ պիտի կատարուի։

**ՄԱՐ.** Ա՛լ աւելի լաւ։

**ՎԱՂ.** (նորէն ետ գալով) Կը տեսնես իս, ալ վերջին անգամն է։

**ՄԱՐ.** Թող անանկ ըլլայ։

**ՎԱՂ.** (դուրս ելնելու ժամանակ՝ վերադառնալով) Հէ՞։

**ՄԱՐ.** Ի՞նչ։

**ՎԱՂ.** Զի՞ս կանչեցիր։

**ՄԱՐ.** Ե՞ս, երազ կը տեսնես։

**ՎԱՂ.** Աղէ ուրեմն, իմ ճամբաս երթամ։ Մնաս բարեաւ, Օրիորդ։ (կամաց կամաց կ'երթայ)

**ՄԱՐ.** Երթաս բարեաւ, Պարոն։

**ԴՈՐ.** (Մարիանային) Ըստ իս, կարծեմ, որ այս տարօրինակութիւնովդ խելքդ թռցուցեր ես. ես ձգեցի թողուցի որ երկար բարակ վիճիք, որպէս զի նայիմ թէ ասոր վերջն ու՛ր պիտի երթայ։ Ինձ նայէ, Տէ՛ր Վաղերիոս։ (Վաղերիոսին թեւէն բռնելով կը կեցնէ)

**ՎԱՂ.** (դէմ կենալու պէս ընելով) Է՛, ի՞նչ կ'ուզես, Դորինա։

**ԴՈՐ.** Մօտ եկուր։

**ՎԱՂ.** Ո՛չ, ո՛չ. արիւնս տաք եղած է։ Իր ուզածէն միտքս մի դարձներ։

**ԴՈՐ.** Մօտ կեցիր։

**ՎԱՂ.** Ո՛չ, չե՞ս նայիր. ալ որոշմունքս ըրած եմ։

**ԴՈՐ.** Ա՛հ։

**ՄԱՐ.** (մեկուսի) Զզուիր որ զիս տեսնէ, ներկայութիւնս զինք կ'ընկրկէ. աւելի աղէկ է որ ես ասկէ հեռանամ։

**ԴՈՐ.** (Թողլով Վաղերիոսը, եւ Մարիանային ետեւէն վազելով) Հիմա ալ միւսը։ Ո՞ւր կը վազես։

**ՄԱՐ.** Ձգէ՛։

**ԴՈՐ.** Չէ՛, ետ պիտի գաս։

**ՄԱՐ.** Ո՛չ, ո՛չ, Դորինա. փուճ բան է ինծի կեցունել ուզելդ։

**ՎԱՂ.** (մեկուսի) Կը նայիմ որ իմ երեւնալս՝ իրեն տանջանք մ'է. և անտարակոյս, աւելի լաւ է որ զանի ազատ թողում։

**ԴՈՐ.** (Թողլով Մարիանան եւ Վաղերիոսին ետեւէն վազելով) Հիմա նորէն։ Աստուած ձեր կեղծամերը ընէ, թէ որ կ'ուզեմ։ Վերջ տուէք այս կատակին. մօտ եկէք երկուքդ ալ։

(Մարիանային ու Վաղերիոսին ձեռներէն կը բռնէ եւ ետ կը դարձնէ)

**ՎԱՂ.** (Դորինային) Բայց միտքդ ի՞նչ է։

**ՄԱՐ.** (Դորինային) Կամքդ ի՞նչ ըսել է։



**ԴՈՐ.** Երկուքնիդ նորէն հաշտեցնել ու իրարու խօսք հասկնալ։ (Վաղերիոսին) Խե՞նդ ես դուն որ այսպիսի վէճ կ'ընես։

**ՎԱՂ.** Չլսեցի՞ր ինծի ինչեր ըսաւ։

**ԴՈՐ.** (Մարիանային) Խենդուհի՞ ես դուն որ ատանկ կը բարկանաս։

**ՄԱՐ.** Դուն ամէն բան չլսեցի՞ր, չտեսա՞ր հետս ինչպէս վարուեցաւ։

**ԴՈՐ.** (Վաղերիոսին) Երկուքդ ալ խելք չունիք։ Նէ ուրիշ հոգ չունի՝ բայց եթէ միշտ քուկդ մնալու, ես ասոր վկայ եմ։ (Մարիանային) Ան միայն զքեզ կը սիրէ, բնաւ ուրիշ բաղձանք չունի, բայց միայն քու ամուսինդ ըլլալ. կենացս վրայ գրաւ կը դնեմ։

**ՄԱՐ.** (Վաղերիոսին) Ուրեմն ինչո՞ւ ինծի այնպիսի խորհուրդ տուիր։

**ՎԱՂ.** (Մարիանային) Դուն ալ ինչո՞ւ ինծի այնպիսի բան մը հարցուցիր։

**ԴՈՐ.** Դուք երկուքդ ալ խենդ էք։ Տուէք նայիմ, երկուքդ ալ ձեռքերնիդ։ (Վաղերիոսին) Տո՛ւր նայիմ, դո՛ւն։

**ՎԱՂ.** (ձեռքը Դորինային տալով) Ձեռքս ինչ պիտի ընես։

**ԴՈՐ.** (Մարիանային) Դուն ալ, քո՛ւկդ։

**ՄԱՐ.** (նոյնպէս ձեռքը տալով) Աս ինչ պիտի ըլլայ։

**ԴՈՐ.** Տէ՛ր ողորմած, շուտ, առջեւ եկէք։ Դուք՝ մէկզմէկ ձեր կարծածէն աւելի կը սիրէք։ (Վաղերիոս ու Մարիանա ժամանակ մ'իրարու ձեռք բռնած կը կենան առանց մէկզմէկու երես նայելու)

**ՎԱՂ.** (Մարիանայի կողմ դառնալով) Բայց ինչո՛ւ այդչափ նազանք կ'ընես, դարձի՛ր անգամ մ'ալ առանց ատելութեան մարդուս երես նայէ քիչ մը։ (Մարիանա Վաղերիոսին կողմ կը դառնայ ժպտելով)

**ԴՈՐ.** Ձեզի ճշմարիտն ըսեմ. սիրահարները շատ խենդ կ'ըլլան։

**ՎԱՂ.** (Մարիանային) Բա՛րէ, իրաւունք չունի՞մ քեզմէ սրտնեղելու, և առանց սուտ ըսելու, չարուհի մը չե՞ս որ խելքիդ թմրեց որ սիրտս ծակող խօսք մ'ըսես ինծի։

**ՄԱՐ.** Բայց դու, դու ալ ամենէ ապերախտ մարդը չե՞ս . . .

**ԴՈՐ.** Բոլոր այս կագավէճը ուրիշ ժամանակի մի թողունք, և նայինք որ այն վշտացուցիչ ամուսնութեան առջև ինչպէս պիտի առնենք։

**ՄԱՐ.** Դուն ըսէ մեզ թէ ինչ կերպ հնարք բանեցնել պէտք է։

**ԴՈՐ.** Ամէն կերպ հնարամիջոց բանեցնելու ենք։ (Մարիանային) Հայրդ կատակ կ'ընէ։ (Վաղերիոսին) Այս զրոյցները բոլորովին բաղձանք են։ (Մարիանային) Բայց քեզի համար աւելի աղէկ է որ անոր տարօրինակ պահանջման դէմ քաղցրութեամբ հաճութիւն ցուցնելու պէս ձեւանաս, որպէս զի աղմուկի մ'ատեն քեզ աւելի դիւրին ըլլայ որ այս մտադրեալ ամուսնութիւնը ուզածիդ պէս քաշքշես, վասն զի ժամանակ որսալով մարդ ամէն բանի դարման կը գտնէ։ Երբեմն վրադ յանկարծական հիւանդութիւն մ'եկած ըլլալ պիտի ձեւացնես, որ գործը ետ ձգելու ծառայելու է. երբեմն ալ չարագեկոյց կանխագուշակութիւններ պիտի ընես՝ ըսելով որ երազիդ մէջ մեռելի հանդիպած ես կամ հայելի մը ջախջախած և կամ պղտոր ջուր տեսած. վերջապէս, ամենէ լաւն այն է, որ մինչեւ որ դու այո՛ չըսես զքեզ ոչ անոր կը տան և ոչ ուրիշ մէկու մը։ Բայց, լաւ յաջողելու համար, ինձ կ'երեւի որ աւելի աղէկ է որ երբեք զքեզ

մէկտեղ խօսակցելնիդ չտեսնեն։ (Վաղերիոսին) Դո՛ւրս ելիր և ժամանակ չկորսուած բարեկամներդ մէջ դիր որ քեզ խօսք տրուածը քեզի տալ տան, Մենք ալ իր եղբօրը աղաչենք որ աշխատի, որպէս զի զօքանչը մեր կողմը դարձնենք։ Երթաս բարեաւ։

ՎԱՂ. (Մարիանային) Մենք ամենքս ալ որքան որ աշխատինք՝ իմ ամենէ մեծ յոյսս, ճշմարիտն ըսեմ, քու վրադ է։

ՄԱՐ. (Վաղերիոսին) Հօրս կամացը երաշխաւորութիւն չեմ տար, բայց գիտցած եղիր որ Վաղերիոսէն զատ ուրիշ մէկու մը չպիտ՝ ըլլամ։

ՎԱՂ. Ի՞նչ ուրախութեամբ կը յղփացնես զիս, Եւ ով որ համարձակի . . .

ԴՈՐ. Ա՛հ, սիրողները երբեք շաղակրատելէ չեն ձանձրանար։ Դո՛ւրս ելիր, կ'ըսեմ քեզ։

ՎԱՂ. (նորէն ետ գալով) Վերջապէս . . .

ԴՈՐ. Աս որքան շատախօսութիւն է. սա կողմ քաշուէ դուն. դո՛ւն ալ միւս կողմ քաշուէ։ (Դորինա անոնց ամեն մէկուն ուսէն կը մղէ, եւ կըպարտաւորէ որ զատուին)

---

# ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԴԱՄԻՍ, ԴՈՐԻՆԱ.

ԴԱՄԻՍ. Թող կայծակը, սա ժամուս, գլխուս իջնէ, և թող զիս ամեն տեղ ամենամեծ սրիկայի մը տեղ դնեն, թէ որ ես ալ գլխուս մէկ թմբածը չընեմ նէ, որուն դէմ ոչ մէկ ակնածութիւն և ոչ մէկ զօրութիւն չկրնար արգելք ըլլալ։

ԴՈՐ. Շնո՛րհք ըրէ, չափաւորէ՛ քիչ մը բարկութիւնդ. հայրդ՝ պարզապէս խօսքն ըրաւ. ամեն առաջարկուած բան գործքի չդրուիր, և առաջարկէ մինչև իրողութիւն՝ շատ երկայն ճամբայ կայ։

ԴԱՄ. Պէտք է որ ես այն փախուկին դաւադրութեանց վերջ տամ, և քիչ մ'ականջին երկու խօսք ըսեմ,

ԴՈՐ. Ա՛հ, խոհեմութեամբ վարուէ՛, թէ՛ անոր՝ և թէ՛ հօրդ հետ. այդ հոգն ալ՝ քու հանիլդ վրան թո՛ղ։ Նէ՝ Թարթիւֆի խորհրդոց վրայ մեծ ազդութիւն ունի, և ինչ որ ըսէ՝ կամահաճ կը գտնուի, և կրնայ ըլլալ որ անոր համար՝ բարեսրտութիւն ալ ունենայ։ Աստուած տայ որ իրաւ ըլլէ, գործը շատ յաջող պիտ՝ ըլլայ։ Վերջապէս չահօգտուտ կը պարտաւորէ զինք որ անոր



խմաց տայ. զքեզ տակնուվրայ ընող ամուսնութեան վրայ նէ անոր միտքը կ'ուզէ խորախուզել, անոր զգացմանց տեղեկանալ, և հասկնալ թէ ինչ ցաւալի կացակութիւ մը կրնայ ծագիլ՝ թէ որ այս գիտաւորութեամբ պնդելու յոյսի մ'ականկալու է։ Իր արբանեակը կ'ըսէ թէ կ'աղօթէ, և ես զինք չկրցայ տեսնել. բայց այս արբանեակն ինծի ըսաւ որ հիմա վար պիտ՝ իջնէ։ Դո՛ւրս ելիր ուրեմն, կ'աղաչեմ, և թո՛ղ որ իրեն սպասեմ։

ԴԱՄ. Ես ալ կրնամ ներկայ գտնուիլ այն բոլոր խօսակցութեանց։

ԴՈՐ. Չըլլար։ Պէտք է որ անոնք մինակ ըլլան։

ԴԱՄ. Ես անոր բան չեմ ըսեր։

ԴՈՐ. Կը կատակես. ճանչցուած է քու սովորական բնայոյզդ որ գործը տակնուվրայ ընելու անվրէպ միջոցն է։ Դո՛ւրս ելիր։

ԴԱՄ. Չէ՛, կ'ուզեմ տեսնել, առանց բարկութեան ելնելու։

ԴՈՐ. Ինտո՞ր տաղտկաբարոյ ես։ Կը գայ։ Հեռացի՛ր։ (Դամիս՝ թէատրոնի խորը եղած խցի մի մէջ կը պահուի)

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԹԱՐԹԻՒՖ, ԴՈՐԻՆԱ։

ԹԱՐԹԻՒՖ. (Դորինան տեսածին պէս՝ բարձր ձայնով խօսելով իր արբանեկին որ տանը մէջն է) Լաւրենտիոս, խորգս ձաղկիչովս մէկտեղ պահէ՛, և աղօթք ըրէ որ Տէրը միտքդ լուսաւորէ։ Թէ որ զիս տեսնելու գան՝ ըսէ որ բանտարկելոց կ'երթամ որ քովս ունեցած ստակս՝ ողորմութիւն բաշխեմ։

ԴՈՐ. (մեկուսի) Աս ինչ կեղծաւորութիւն և ինչ պոռոտախօսութիւն։

ԹԱՐ. Ի՞նչ կ'ուզես։

ԴՈՐ. Ձեզ ըսել . . .

ԹԱՐ. (ծոցէն թաշկինակ մի հանելով) Ո՛հ, Աստուած իմ, քեզ կ'աղաչեմ, խօսելէդ առաջ՝ առ սա թաշկինակս։

ԴՈՐ. Ի՞նչպէս։

ԹԱՐ. Գոցէ՛ սա կուրծքդ զոր չեմ կրնար նայիլ։ Այդ տեսակ առարկայները մարդուս միտքը կը պղտորեն ու տեսակ տեսակ մեղսալից խորհուրդներ կը բերեն։

ԴՈՐ. Ուրեմն փորձութեանց մէջ իյնկնելու շատ դիւրազգաց էք, և միս՝ ձեր զգայարանաց վրայ մեծ տպաւորութիւն կ'ընէ. իրաւ որ, չեմ գիտեր այդ ինչ կրակ է որ գլխուդ կը զարնէ. բայց, ես, աչք տնկելու համար այդքան անձկալի չեմ, և զձեզ նոյն իսկ յատակէ ցգլուխ մերկանդամ ալ տեսնէի, հաւատացէ՛ք որ ձեր կաշին զիս փորձութեան մէջ չպիտի ձգեր բնաւին։

ԹԱՐ. Քու խօսքերուդ մէջ քիչ մի համեստութիւն դիր, եթէ ոչ հիմայ իսկոյն քեզմէ կը հեռանամ։

ԴՈՐ. Ո՛չ, ո՛չ, ես զձեզ հանգիստ թողելու եմ, միայն երկու խօսք ըսելու եկած եմ։ Տիկինը՝ այս վարի սրահը պիտի գայ հիմայ, և կը խնդրէ որ ձեզի խօսք մ'ըսելու բարեհաճիք։

**ԹԱՐ.** Բարե՛, մեծա՛ւ հաճութեամբ։

**ԴՈՐ.** (մեկուսի) Ինտո՛ր կակուղցաւ, ճշմարիտ, ես միշտ իմ ըսածիս վրայ հաստատ պիտի կենամ։

**ԹԱՐ.** Շուտ պիտի գա՞յ։

**ԴՈՐ.** Ինծ կ'երեւի որ գալը կը լսեմ։ Այո, նոյն ինքն է, և զձեզ մէկտեղ կը թողում։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

### ԷԼՄԻՐԱ, ԹԱՐԹԻՒՖ։

**ԹԱՐ.** Աստուած, իւր անհուն բարութեամբը յաւիտեան ձեր հոգւոյն ու մարմնոյ առողջութիւն պարգեւէ, և օրհնէ ձեր օրերը՝ որքան որ կը փափաքի իւր սէրէն ներշնչուածներուն ամենէ խոնարհը։

**ԷԼՄԻՐԱ.** Մեծապէս շնորհապարտ եմ այդ երկիւղած բարեմաղթութիւններէն։ Բայց աթոռ առնենք, որպէս զի աւելի հանգիստ ըլլանք։

**ԹԱՐ.** (նստած) Ինչպէս կ'զգաք ցաւերնիդ, անցա՞ւ։

**ԷԼՄ.** (նստած) Շատ աղէկ. ջերմս ալ գլխս թողուց։

**ԹԱՐ.** Իմ աղօթքս չունին այն արժանաւորութիւնը որ այս շնորհքը 'ի բարձանց հրաւիրեն. բայց ես և ոչ մի ջերմեռանդ մաղթանք չըրի յերկինս՝ որ ձեր վերառողջութեան համար չըլլար։

**ԷԼՄ.** Ձեր իմ վրայ ունեցած փութեռանդութիւննիդ անհանգիստ եղած է։

**ԹԱՐ.** Ձեր սիրելի առողջութիւնը չկրնար ըստ բաւականին սիրուիլ. և զայն կազդուրելու համար՝ իմս կը տայի սիրով։

**ԷԼՄ.** Շատ հեռուն կը տանիք քրիստոնէական մարդասիրութիւնը, և այդ բարութեանցդ համար՝ ձեզ շատ պարտաւոր եմ։

**ԹԱՐ.** Ձեր արժանի եղածէն շատ նուազ կը կատարեմ իմ պարտքս։

**ԷԼՄ.** Ես ուզեցի որ գործի մի վրայօք ձեզի հետ գաղտնի խօսիմ, և շատ ուրախ եմ, որ հոս՝ մեզ մարդ մի չդիտեր։

**ԹԱՐ.** Ես ալ նոյնպէս յափշտակուած եմ, և անտարակոյս ինծ համար շատ քաղցր բան է, Տիկին, որ ձեզի հետ հոս առանձին գլուխ գլխի մինակ ենք։ Այս առիթ մ'է, զոր Աստուծմէ խնդրեցի որ մինչև այս ժամս ինծ շնորհած չէր։

**ԷԼՄ.** Գիտե՞ք ինչ է ուզածս, ձեզի հետ բանակցութեան տեսութիւն մի ընել, ուր կ'ուզեմ որ ձեր բոլոր սիրտը, անար, և ինձմէ բան չծածկէք։

(Դամիս՝ առանց ինքզինք ցուցնելու, իր քաշուած սենեակին դուռը կը թերբանայ, որպէս զի խօսակցութիւնը մտիկ ընէ)

**ԹԱՐ.** Ես ալ՝ ձեր կողմէ ուրիշ շնորհ մի չեմ խնդրեր, բայց եթէ իմ բոլոր սիրտս ձեր աչքին առջև բանալ, և ձեզ երդում ընել որ ձեր գեղեցկութեան հրապուրմամբ հոս եղած այցելութեանց համար հանած աղմուկներս՝ ձեզի դէմ ատելութեան մ'արգիլնքը չեն բնաւին, այլ առաւել եռանդեան մի յափշտակութիւնը որ զիս կ'աղխաղէ և անմեղ իղձ մի . . .



**ԷԼՄ.** Ես ալ այդպէս կ'առնեմ, և կարծեմ հոգւոյս փրկութիւնն է որ ձեզ այդքան հոս կը պատճառէ։

**ԹԱՐ.** (Էլմիրայի ձեռքը բռնելով և անոր մատները սեղմելով) Այո, Տիկին, անշուշտ. և եռանդս այնքան է . . .

**ԷԼՄ.** Ո՜ւֆ, պինդ սեղմեցիք։

**ԹԱՐ.** Եռանդեան չափազանցութենէ է։ Ես ձեզի, ցաւցնելու միտք չունի. և աւելի աղէկ ունէի . . . (ձեռքը՝ Էլմիրային ծնգաց վրայ կը դնէ)

**ԷԼՄ.** Ձեռքերնիդ ինչ գործ ունի հոդ։

**ԹԱՐ.** Ձեր հագուստը կը շօշափեմ. կերպասը փափուկ է։

**ԷԼՄ.** Ո՜հ, շնորհք ըրէք, թողուցէ՛ք, ես շատ դիւրախտիղ եմ։ (Էլմիրա իր թիկնաթոռը ետ կը քաշէ, եւ Թարթիւֆ անոր մօտ կ'երթայ)

**ԹԱՐ.** (Էլմիրայի լաչակը շօշափելով) Տէր ողորմեա, աս ի՜նչ սքանչելի հիւսուածք է. այսօրուան օրս հրաշալի նոր գործեր կը հնարեն ամեն բանի մէջ, երբեք այսքան սիրուն բանուածքներ տեսնուած չեն։

**ԷԼՄ.** Ճշմարիտ է։ Սակայն մեր գործին վրայօք խօսինք։ Զրոյց մի կայ՝ որ կ'ըսեն թէ ամուսինս իր խօսքը ետ առնել և աղջիկս ձեզ կնութեան տալ կ'ուզէ։ Ըսէ՛ք ինծ, իրա՞ւ է այս։

**ԹԱՐ.** Ատոր վրայօք ինծ խօսք մի բացաւ։ Բայց, ճշմարիտն ըսեմ, Տիկին, իմ տենչացած բարօրութիւնս այդ չէ. և ուրիշ տեղ 'ի փնտռեմ երջանկութեան այն հրաշալի հրապոյրները ուր իմ բոլոր փափաքանացս նպատակը կը դրուին։

**ԷԼՄ.** Պատճառն այն է որ դուք աշխարհային բաներու վրայ աչք չունիք։

**ԹԱՐ.** Կուրծքս՝ քարեղէն սիրտ չպարունակեր։

**ԷԼՄ.** Իմ մասիս, կարծեմ, որ ձեր բոլոր հառաչանքները յերկինս կը միտին, և այս աշխարհի վրայ բան մի չկրնար արգիլել ձեր փափաքը։

**ԹԱՐ.** Յաւիտենական գեղեցկութեանց մեզ կապող սէրը՝ անցաւոր բաներու վրայ մեր ունեցած ներքին սէրը չկրնար խեղդել. մեր զգացմունքը դիւրաւ թեամբ կրնան սքանչանալ Աստուծոյ ստեղծած կատարեալ ձեռակերտաց վրայ. իւր ցոլական հրապոյրները ձեր նմաններուն վրայ կը շողան, մանաւանդ ձեր անձին վրայ՝ իւր ամենազանչելի հազուագիւտ բնիները սփռած է. ձեր դիմաց վրայ այնպիսի գեղեցկութիւններ դեղած է, որոնց վրայ աչք չկայ որ չհիանայ, սիրտ չկայ որ չյափշտակուի. և ես ձեր վրայ չկրցայ նայիլ, ով կատարեալ արարած, առանց բնութեան արարիչը ձեր վրայ տեսնելով հիանալու, և առանց սրտիս մէջ բոցակեզ սէր մ'ըզգալու։ Պատկերաց ամենագեղեցկին մէջ, ուր ինքզինք նկարագծած է, նախ վախցայ որ չըլլայ թէ այս գաղտնի բոցեռանդութիւնը՝ չար սատանայի վարպետութեամբ լարուած որոգայթն ըլլայ. և պահ մ'ալ եղաւ՝ որ իմ փրկութեանս արգելք մի սեպելով՝ սիրտս ձեր աչքերէն փախչելու որոշմունքն ըրաւ։ Բայց վերջապէս ճանաչեցի, ով ամենապաշտելի գեղեցկութիւն, որ այս կիրքս կրնայ ամենեւին մեղսական չըլլալ՝ զայն ամօթխածութեան հետ պատշաճեցնելով. ահա այս պատճառաւ է որ սիրտս առւր մէջ ձգեց զիս։ Կը խոստովանիմ, որ այս՝ ինծ համար մեծ յանդգնութիւն մի է, որ համարձակիմ սիրտս ձեզ նուիրելու. բայց այս փափաքանացս մէջ՝ ամեն բան ձեր

բարութենէ կ'սպասեմ, և ոչինչ՝ իմ անկարողութեանս չնչին ջանքերէն: Ձեր վրայ է իմ յոյսս, իմ բարիքս, իմ հանգստութիւնս, ձեզմէ կախեալ է իմ պատիժս, կամ երանութիւնս, վերջապէս՝ ձեր մէկ վերջնական որոշումէն, պիտի ըլլամ երջանիկ՝ թէ որ հաճիք, ապերջանիկ՝ թէ որ ուզէք:

**ԷԼՄ.** Շիտակը, այս արտայայտութիւնը բոլորովին եզասիրական է ու քիչ մ'ալ խիստ զարմանալի: Ինծի կ'երևի որ դուք պէտք էիք սրտերնիդ աւելի լաւ զինէիք, և այսպիսի դիտաւորութեան մը վրայ՝ քիչ մ'ալ խելագատէիք: Ձեզի պէս բարեպաշտ անձ մը, որու համար ամէն տեղ կ'ըսեն . . .

**ՄԱՐ.** Ո՛հ, բարեպաշտ ըլլալովս մարդէ պակաս տեղ չունիմ. և երբ մարդ մէկ անգամ ձեր երկնային հրապոյրները տեսնէ՝ ալ սիրտը ձեզի հետ կը կաշկանդուի և չկրնար խելագատել: Գիտեմ որ իմ կողմէս եղած այսպիսի խօսք մը տարօրինակ կ'երևի, բայց, 'ի վերջոյ Տիկին, ես ալ հրեշտակ մը չեմ. և թէ որ այս իմ ձեզ ըրած խոստովանութիւնս կը դատապարտէք, յանցանքը՝ ձեր յափշտակիչ հրապուրանաց վերընծայել պէտք էք, որու գերմարդկային փայլփլշողալը աչքի տեսնելուս՝ իմ բոլոր Ներքին մասերուս տիրապետուհին եղաք. ձեր երկնային հայեցուածոց անճառելի քաղցրութիւնը՝ իմ յամառող սրտիս ընդդիմութիւնը նուաճեց. ամէն բան գերազանցեց, թէ ծոմ, թէ մաղթանք, թէ արտասուք, և իմ բոլոր տենչս՝ ձեր գեղեցկութեան կողմ դարձուց: Աչերս և հառաչանքս հազար անգամ զայն ըսին ձեզ, և միտքս աւելի լաւ բացատրելու համար՝ հիմայ ձայնս կ'ըսէ զայն: Թէ որ ձեր անարժան գերիին մտայուզութեանց վրայ սակաւիկ մը բարեսէր աչօք ակնարկութիւն ընէք, թէ որ ձեր բարութեամբը զիս մխիթարել ուզէք, և մինչև իմ ոչնչութեանս զիջանելու գնաշէք, ձեզի համար, ո՛վ ամենասիրուն հրաշալիք, այնպիսի երկիւղածութիւն պիտի ունենամ, զոր և ոչ ուրիշ մէկու մը համար ունենալու եմ: Ձեր պատիւը գիտցած եղիք, ինծմով բնաւ արատ մը կրելիք չունի և իմ կողմէս վախնալու անպատեհութիւն մը բնաւին չկայ: Բոլոր այն քծնախնդիր տարփածուները՝ որոնց վրայ կանայք հոգի կը տան, իրենց գործոց մէջ՝ աղմկահան և խօսից մէջ՝ ունայնասէր են. անդադար իրենց յառաջդիմութեանց համար ինքզինքնին կը գովեն. և շնորհք մը չկայ որ ընդունին և աշխարհահռչակ չընեն, և իրենց անխոհեմ լեզուն՝ որոնց գաղտնիք մը հաւատացուած է, կ'անպատուէ այն խորանը՝ որուն մէջ իրենց սիրտը կը զոհագործէ: Բայց մեզի պէս մարդոց հետ՝ որք զգուշաւոր տրփիով կ'այրին, յաւիտեանս գաղտնապահութիւնը հաւաստի է: Մեր համբաւին համար ունեցած մեծ խնամքնիս՝ մեր սիրած անձանց ամէն բան կ'երաշխաւորէ. և մեր սիրտը ընդունելով՝ մեր վրայ է որ կը գտնուի առանց գայթակղութեան սէր և առանց երկիւղի հաճութիւն:

**ԷԼՄ.** Լաւ մտիկ կը ընեմ, և ձեր քաղցրախօս ճարտարախօսութիւնը՝ սրտիս մէջ կը բացայայտուի: Չէ՞ք վախնար բնաւ որ այնպիսի բնութիւն մ'ունենամ որ այդ իգամոլ տարփանքներդ իմ էրկանս իմացնեմ, և այսպիսի սիրոյ մը վրայօք իրեն ծանօթութիւն տալով՝ ձեր վրայ ունեցած բարեկամութիւնը պակսի:

**ՄԱՐ.** Գիտեմ որ դուք չափազանց բարեսիրտ էք, և իմ յանդգնութեանս ներում կը շնորհէք. իմ մարդկային տկարութեանս վրայ երեցած այս բուռն իղձերնիս, որ զձեզ կը վիրաւորէ՝ թողութիւն պիտի շնորհէք, և պիտի



խորհիք, ձեր կերպարանքը տեսնելով՝ թէ մարդիկ կոյր չեն, և մարդս մսեղէն է:

**ԷԼՄ.** Ուրիշ կանայք դուցէ ուրիշ կերպով վարուէին. բայց ես կ'ուզեմ որ իմ շրջահայեցութիւնս ցուցնեմ: Այս բանիս վրայօք իմ էրկանս բան մը չպիտի իմացնեմ. բայց, ասոր դէմ՝ ես ալ ձեզմէ բան մը կը պահանջեմ. այն է՝ որ անկեղծաբար և առանց պատճառաբանութեան պիտի պնդէք որ Մարիանան Վաղերիոսի հետ միանայ. և դուք ալ պիտի հրաժարիք այն անիրաւ իշխանութենէ որ ուրիշին բարիքովը՝ ձեր յոյսը հաստատել կ'ուզէ. և . . .

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

### ԷԼՄԻՐԱ, ԴԱՄԻՍ, ԹԱՐԹԻՒՖ:

**ԴԱՄ.** (ելնելով այն խուցէն ուր քաշուած էր) Չէ, տիկին, չէ. այս բանս պէտք է տարածուի: Ես սա տեղն էի, ուրկէ ամէն բան լսելու կարող եղայ. ինծի կ'երևի որ Աստուծոյ բարութիւնն առաջնորդեց զիս. որ ինծի վնաս տուող այս նենգաւորին գոռոզութիւնը չփոթեմ, որ իմ առջևս ճամբայ մը բացաւ որպէս զի իւր կեղծաւորութեան ու լրբութեան համար վրէժս լուծեմ, որ երթամ հօրս խաբուած ըլլալն իմացնեմ, և առջին դնեմ ապիրատի մը սիրտը՝ որ քեզ տարփանք կը յայտնէ:

**ԷԼՄ.** Չէ, Դամիս. կ'օգտէ որ այսուհետև խոհեմ ըլլայ, և աշխատի որ արժանի ըլլայ այս շնորհքին որ իրեն խոստացայ, և ըստ որում խօսք տուի՝ խօսքս ետ առնել մի տար: Բնութիւնս ալ գիտես որ աղմուկ հանել չեմ սիրեր. կին մ'այսպիսի անմտութիւններով ինքզինք ծաղր ընել կը տայ, և երբէք իր էրկան ականջները չցաւցներ:

**ԴԱՄ.** Դուն այս կերպով գործը թեթևցնելու համար քու պատճառներդ ունիս. ես ալ ուրիշ կերպով վարուելու համար իմ պատճառներս ունիմ: Այս մարդը խնայել ուզելդ՝ ծաղրածութիւն մ'է. և իր կեղծաւորութեան ամբարտաւան գոռոզութիւնն ալ իմ արդարացի բարկութեանս վրայ յաղթութիւն տարաւ և մեր տան մէջ անկարգութիւնը գրգռելու պատճառ եղաւ: Նենգաւորը երկար ժամանակ իշխեց հօրս վրայ և վնաս տուաւ իմ սիրոյս ինչպէս որ Վաղերիոսինին: Պէտք է որ այս խորամանկ մարդուն խաբէութիւններէն սթափի, որու համար Աստուած ինծի դիւրին միջոց մը կը շնորհէ: Այս դիպող առթին համար իրեն երախտապարտ եմ, այսպիսի պատեհութեան մը պէտք չէ որ անհոգութիւն ընեմ, այն ժամանակ արժանավարձ ըլլալու էի թէ որ գար ինծմէ յափշտակէր զայն, քանի որ ձեռքս ըլլալով՝ զայն բանի չպիտի բերէի:

**ԷԼՄ.** Դամիս . . .

**ԴԱՄ.** Ո՛չ, թէ որ կը հաճիս, Պէտք է որ ինքզինքս հաւատամ: Սիրտս հիմա ուրախութեամբ լցուած է. և քու խօսքերդ փուճ տեղ կ'աշխատին պարտաւորելու զիս որ վրէժխնդիր ըլլալու կարողանալուս հաճութիւնը մէկ դի թողում: Առանց ժամանակի կորստեան, երթամ այս գործը գլուխ հանեմ, և այն ժամանակ ճիշդ կամքս կը կատարուի:

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՕՐԿՕՆ, ԷԼՄԻՐԱ, ԴԱՄԻՍ, ԹԱՐԹԻՒՖ։

**ԴԱՄ**. Հայր իմ, քո բարեգալստեանդ շնորհաւորողջէք պիտի տամք նոր պատահած դէպ մի՝ որ զքեզ շատ պիտի զարմացնէ։ Շիտակը շատ աղէկ վարձատրուած ես՝ քո գգուանաց համար. այս պարոնը աղէկ գինով մի փաղաքշանացդ երախտապարտ է։ Իւր քեզի համար ունեցած մեծ եռանդնոտութիւնը երեւան ելաւ, որ զքեզ անպատիւ ընելէ պակաս բան մի չէ. իւր առ տիկինն ունեցած մեղանչական տափանաց լպրշական խոստովանութիւնն ընելու կէտին՝ վրայ հասայ։ Նէ՝ շատ քաղցրահամբոյր բնութիւն ունի, և իր զգուշաւէր սիրտը՝ իւր ամեն զօրութեամբ ուզեց որ գաղտնապահ գտնուի. բայց ես այսպիսի անամօթութեան մի չեմ կրնար աչք խփել, և կարծեմ որ ասոր վրայօք լուռ կենալը՝ պատւոյդ դպչիլ է։

**ԷԼՄ**. Այո, ես կը պնդեմ թէ պէտք չէ որ բոլոր այս անօտի խօսքերով երկան մի հանգստութիւնը վրդովի երբէք. և այս բանէս չէ բնաւին որ պատիւը կախեալ է, բաւական է որ մենք զմեզ պաշտպանել գիտնանք։ Ահա ասոնք են իմ զգացմունքս. և դուն բան մի չէիր ըներ, Դամիս, թէ որ քու վրադ քիչ մի համբոյր ունենայի։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՕՐԿՕՆ, ԴԱՄԻՍ, ԹԱՐԹԻՒՖ։

**ՕՐԿՕՆ**. Ի՞նչ է այս լսածս, ա՛հ, Աստուած, հաւատալու բա՞ն է։

**ԹԱՐ**. Այո, եղբայրս, ես չարագործ, յանցապարտ, թշուառական մեղաւոր մ'եմ, բոլորովին անօրէնութեամբ լցուած և աշխարհի մէջ գտնուած ամենէ մեծ ապիրատն եմ։ Իմ կենացս ամեն մէկ վայրկեանը պղծութեամբ բեռնաւորեալ է, ուրիշ բան մի չէ բայց եթէ մեղաց և անօրէնութեանց կուտակութիւն մի. և կը նայիմ որ երկինք՝ զիս պատժելու համար, այս առիթիս մէջ զիս ամօթով ձգել կ'ուզէ։ Որքան մեծ ոճիրով ալ որ զիս կշտամբել ուզեն, հոգ չեմ ըներ որ ինքզինքս պաշտպանելու հպարտութիւնն ունենամ։ Հաւատացէք այս ըսուածներուն, զինուեցէք ձեր բարկութեամբ և իբրև պատժապարտ վանեցէք զիս ձեր տնէն. ասկէ աւելի մեծ ամօթ ինծ բաժին չպիտի ունենայի որքան որ աւելի մեծին արժանաւոր ըլլալու էի։

**ՕՐԿՕՆ**. (իր որդւոյն) Ա՛հ, նենգաւոր, կը համարձակի՞ս, այս խաբէութեամբ իր առաքինութեան մաքրութիւնն աղարտել։

**ԴԱՄ**. Ի՞նչ, այս կեղծաւոր մարդուն ձևացեալ քաղցրութիւնը քեզ սուտ՞ հանելու է . . .



**ՕՐԿՕՆ**. Լռէ՛, անիծից արմատ։

**ԹԱՐ**. Ո՛հ, թողուցէք որ խօսի, անիրաւ տեղ զան կը յանդիմանէք. աւելի աղէկ է որ իր պատմածին հաւատաք, ինչո՞ւ համար այսպիսի իրողութեան մի վրայ՝ ինծ այսքան շահախնդիր էք. գիտէ՞ք, հուսկ յետոյ, ինչ բանի կարող եմ. կը հաւատա՞ք, եղբայր իմ, իմ արտաքին երևոյթիս. և բոլոր այս տեսնուածէն աւելի լաւ կը սեպէ՞ք զիս։ Ո՛չ, ո՛չ, տեսնուածքէն ինքզինքնիդ կը խաբէք. և ես՝ ափսո՜ս, կարծուածէն պակաս բան չեմ։ Ամեն մարդ զիս ամենաբարի մարդ կը կարծէ. բայց ճշմարիտն այն է՝ որ բան մի չեմ արժեր, (Դամիսին կողմ դառնալով) Այո, սիրելի որդեակս, խօսէ՛, զիս նենգաւորի, ապիրատի, անառակի, գողի և մարդասպանի տեղ դիր, և աւելի անարգական անուններով ընկճէ՛ զիս, ես բնաւ դէմ չեմ խօսիր, վասն զի արժանաւոր եղած եմ. և ծնկան վրայ եկած՝ այս խայտառակութեան տանիլ կ'ուզեմ, իմ կենացս յանցանաց իբր պարտուպատշաճ նշաւակութիւն։

**ՕՐԿՕՆ**. (Թարթիւֆին) Եղբա՛յր իմ, ալ կ'օգտէ։ (իր որդւոյն) Քո սիրտդ չշարժի՞ր բնաւ, անզգա՛մ։

**ԴԱՄ**. Ի՞նչ, իր խօսքերն այնքան պիտի մոլորեցնեն զքեզ որ . . .

**ՕՐԿՕՆ**. (Թարթիւֆը վերցնելով) Լռէ՛, անզգա՛մ։ Եղբա՛յրս, քեզ կ'ըսեմ, շնորհք ըրէ, ոտք ել. (իր որդւոյն) ապիրա՛տ։

**ԴԱՄ**. Կրնայ . . .

**ՕՐԿՕՆ**. Լռէ՛։

**ԴԱՄ**. Կը կատղիմ։ Ի՞նչ։ Սեպուիմ . . .

**ՕՐԿՕՆ**. Թէ որ մէկ խօսք ըսես, թևերդ կը կոտրեմ։

**ԹԱՐ**. Եղբա՛յրս, Աստուծոյ համար ըլլայ, մի՛ բարկանար. աւելի աղէկ ունիմ որ անտանելի տանջանք քաշեմ, քան թէ ինծ համար ամենափոքր ճանկրտուք մ'առնէ։

**ՕՐԿՕՆ**. (իր որդւոյն) Ապերա՛խտ։

**ԹԱՐ**. Ալ մի՛ դպչիր իրեն։ Թէ որ հարկ է, երկու ծնկացս վրայ, իրեն համար ներում կը խնդրեմ։

**ՕՐԿՕՆ**. (նոյնպէս ծնկան վրայ գալով, ու Թարթիւֆը գրկելով) Ափսո՜ս, կը ծաղրէ՞ք։ (իր որդւոյն) Գարշելի՛, տե՛ս իր բարութիւնը։

**ԴԱՄ**. Ուրեմն . . .

**ՕՐԿՕՆ**. Լռէ՛։

**ԴԱՄ**. Ի՞նչ, ես . . .

**ՕՐԿՕՆ**. Լռէ՛, կ'ըսեմ։ Ես շատ աղէկ գիտեմ ինչ է պատճառը որ կը պարտաւորէ զքեզ զայն թշնամանելու։ Դուք ամենքդ ալ զայն կ'ատէք. և այսօր կը նայիմ որ կնիկ, որդի և ծառայք իր վրայ կը յարձակին։ Անամօթութեամբ ամեն միջոց կը բանեցնեն որ այս խեղճ բարեպաշտը տնէս հեռացնեն. բայց որքան ալ ջանան որ զայն արտաքսեմ, այնքան ես ալ հոգ պիտի տանիմ որ զայն տանս մէջ պահեմ. և պիտի արտորամ որ աղջիկս իրեն տամ որպէս զի բոլոր ընտանեացս ամբարտաւանութիւնը չփոթեմ։

**ԴԱՄ**. Անոր ձեռքն ընդունելու համար ո՞վ կը մտածէ որ զնք պարտաւորէ։

**ՕՐԿՕՆ**. Այո, նենգաւոր, այս գիշեր իսկ՝ որպէս զի դուն կատղիս։ Ա՛հ,

ես զձեզ ամենքդ ալ բանի տեղ չեմ դներ, և ձեզ պիտի հասկցնեմ թէ ես հոս տէր եմ ու պէտք է որ ինձ հնազանդիք։ Աղէ՛, խօսքդ ետ առ, և այս կէտին, խաբեբայ, ոտքերն ընկիր որ ներում խնդրես։

**ԴԱՄ.** Ո՞վ, ե՛ս, այս խաւնակեցիկէն, որ իր խարդախութեամբքը . . .

**ՕՐԿՕՆ.** Ա՛հ, դէմ կը կենաս, անզգամ, և զինք կը նախատե՛ս, (Թարթիւֆին) Գաւազա՛ն մը, գաւազա՛ն մը, զիս մի՛ բռներ։ (իր որդւոյն) Աղէ՛, հիմա այս կէտին տնէս դուրս ելիր, և մէկ մ'ալ չյանդգնիս որ հոս ոտքդ կոխես։

**ԴԱՄ.** Այո՛, կ'ելնեմ. բայց . . .

**ՕՐԿՕՆ.** Շո՛ւտ, դուրս ել ասկէ։ Գա՛րշելի, կը զրկեմ զքեզ ժառանգութենէս, և ասկէց զատ՝ անէծքս կը տամ քեզ։

## ՏԵՍԱՐԱՆ Է·

ՕՐԿՕՆ, ԹԱՐԹԻՒՖ։

**ՕՐԿՕՆ.** Այս կերպով սուրբ մարդ մի նախատե՛լ։

**ԹԱՐ.** Ո՛հ Աստուած, ներէ՛ իրեն, ինչպէս որ ես ալ իրեն կը ներե՛մ։ (Օրկօնին) Թէ որ կարենայիք գիտնալ թէ ո՛րքան տհաճութեամբ կը տեսնեմ որ իմ եղբօրս դէմ զիս արատաւորելու կ'աշխատին . . .

**ՕՐԿՕՆ.** Ափսո՛ս։

**ԹԱՐ.** Այս ապերախտութեան վրայ մտածելը միայն այնքան դառն տանջանք մի կրել կը տայ սրտիս՝ . . . զգացած զգուանքս . . . ։ Սիրտս այնքան ճնշուած է որ ալ չեմ կրնար խօսիլ, և կարծեմ որ ասկէ պիտի մեռնիմ։

**ՕՐԿՕՆ.** (արտասուագին վազելով դուռը՝ ուրկէ իր որդին վռնտեց) Անզգա՛մ, կը զղջամ որ ձեռքս վրայ չդնաց, և քեզ այն տեղ իսկոյն թոպամահ չըրի։ (Թարթիւֆին) Հանդարտեցէ՛ք, եղբայրս, ու մի՛ վշտանաք։

**ԹԱՐ.** Վերջացնենք, վերջացնենք ալ այս ցաւալի հակառակութեանց ընթացքը։ Կը նայիմ որ ձեր տան մէջ ո՛րքան մեծ շփոթութիւններ կը պատճառեմ, և կարծեմ, եղբայր իմ, թէ հա՛րկ է որ ես դուրս ելնեմ։

**ՕՐԿՕՆ.** Ինչպէ՛ս, կը ծաղրէ՞ք։

**ԹԱՐ.** Հոս կ'ատեն զիս, և կը նայիմ որ իմ հաւատարմութեանս վրայ ձեզ կասկածներ կը յարուցանեն։

**ՕՐԿՕՆ.** Ինչ հոգ է։ Չէ՞ք տեսներ որ ես անոնց մտիկ կ'ընե՞մ։

**ԹԱՐ.** Անշուշտ, անոնք անդադար ետեւէս պիտ' ինկնին. և այս մի և նոյն տեղեկագրոյցները զորս հիմա կը մերժէք՝ գուցէ ուրիշ անգամ խնամով մտիկ ընէք։

**ՕՐԿՕՆ.** Չէ՛, եղբայրս, երբէ՛ք։

**ԹԱՐ.** Ա՛հ, եղբայրս, կին մի՝ շատ դիւրութեամբ կրնայ իր էրիկին միտքը շահիլ։

**ՕՐԿՕՆ.** Ո՛չ, ո՛չ։

**ԹԱՐ.** Թողէ՛ք զիս շուտով, որ ասկէ հեռանալով՝ պատճառ չմնայ որ դարձեալ վրաս յարձակին։



**ՕՐԿՕՆ.** Ո՛չ, հո՛ս պիտի կենաք. կեանքս ասկէ կախեալ է։

**ԹԱՐ.** Լա՛ւ ուրեմն, պէտք է որ խղճահար ըլլամ, այսու հանդերձ, թէ որ ուզէիք . . .

**ՕՐԿՕՆ.** Ա՛հ։

**ԹԱՐ.** Լա՛ւ, ալ խօսքը չընենք։ Բայց ես գիտեմ ալ ինչ կերպով պիտի վարուիմ։ Պատիւը՝ փափկանկատ բան մ'է, և բարեկամութիւնը զիս կը պարտաւորէ որ տարաձայնութեանց ու պատճառաբանութեանց կասկածանքը փարատեմ։ Կնոջմէդ խոյս տալու եմ, և չպիտի տեսնէք զիս . . .

**ՕՐԿՕՆ.** Ո՛չ, 'ի հեճուկս ամենեցուն՝ իրեն հետ խիստ պիտի տեսնուիք։ Ինձ մեծ հաճութիւն մի պիտ' ըլլայ երբ ամենք կատղին, և կ'ուզեմ որ ամեն ժամ զձեզ անոր հետ տեսնեն։ Դեռ ամենն այս չէ. որպէս զի ամենք աւելի լաւ ընկճուին, ձեզմէ զատ ուրիշ մէկ ժառանգորդ չեմ ուզեր ունենալ. և հիմա այս կէտիս, պիտ' երթամ, որ իմ բովանդակ ստացուածքս՝ ըստ օրինաւոր պայմանի, վրանիդ դարձնեմ։ Ըստ որում բարեսիրտ և հարազատ բարեկամ մի՝ որ ինձ փեսայ պիտ' ընեմ, ինձի համար թէ՛ զաւակէ, թէ՛ կնոջմէ և թէ ազգականներէ աւելի սիրելի է։ Առաջարկածս չէ՞ք ընդունիր։

**ԹԱՐ.** Կամք Տեառն օրհնեալ եղիցին յամենայնի։

**ՕՐԿՕՆ.** Խե՛ղճ մարդը։ Երթա՛նք շուտ մուրհակագիր մ'ընենք, և թո՛ղ ամենքն իրենց նախանձէն ճայթին։

# ԱՐԱՐՈՒԱԾ Դ·

## ՏԵՍԱՐԱՆ Ա·

ԿՂԵԱՆԴՈՍ, ԹԱՐԹԻՒՖ։

**ԿՂԵ.** Այո՛, ամեն մարդու բերանն է, և կրնաս հաւատալ ինձ որ այս տարաձայնութեան հանած աղմուկը քեզ փառք չբերեր։ Ու այս ժամուս, Պարոն, ես քեզ շատ յարմար ատենին հանդիպեցայ, որ իմ կարծիքս քեզ երկու խօսքով պարզապէս յայտնեմ։ Մանրամասնաբար չեմ հետաքններ ինչ որ կ'արտապատմեն. անոր վրայօք կ'անցնիմ, և գործը աւելի գէշի կ'առնեմ։ Դիցուք թէ Դամիս ծուռ մէկնած ըլլայ, և ամեն մարդ զքեզ անիրաւ տեղ ամբաստանած ըլլայ, քրիստոնէական պարտք չէ՞ որ մեզ եղած թշնամանաց ներենք, ու վրէժխնդրութեան փափաքը մեր սրտին մէջ մարենք։ Ու պէ՞տք է որ հանդուրժես, որ ձեր վէճին պատճառով, մէկ որդի իր հօրը տնէն արտաքսուի։ Այս ալ ըսեմ քեզ, ու համարձակաբար կը խօսիմ, որ ո՛չ պզտիկ և ո՛չ մեծ մա-

լու է որ չգայթակղի. և թէ որ իմ խօսքիս նայիս, ամեն բան կրնաս խաղաղել, և գործը մինչև վերջին ծայր չես մղեր։ Բոլոր բարկութիւնդ զոհէ Աստուծոյ, և դարձեալ որդւոյն ներմամբը իր հօրը ծոցը դարձուր։

**ԹԱՐ.** Բա՛րէ, ինձ համար, բոլորով սրտիւ կ'ուզէի. ես իրեն դէմ, Պարոն, բնաւին ատելութիւն մի չունիմ. ես իրեն ամեն բան կը ներեմ, և բանի մի համար զինք չեմ մեղադրեր, և կ'ուզէի որ իմ բոլոր սրտովս իրեն ծառայեմ. բայց Աստուծոյ շահօգուտը ատոր չպիտի ընդհաճէր. և թէ որ անի այս տուն գայ՝ ես հոսկէ ելնել պէտք եմ, ասոր նմանը չեղած այսպիսի գործ մ'ընելէն ետք՝ մեր մէջ եղած յարաբերութիւնը գայթակղութիւն պիտի պատճառէր. Աստուած գիտէ ամեն մարդ ինչ պիտի կարծէր. զիս ճշմարիտ խաբեբայի մի տեղ պիտի դնէին. և ամեն տեղ պիտ՝ ըսէին թէ, նայելով որ յանցաւոր եմ, զիս ամբաստանողին՝ երկիւղած եռանդ մի կը կեղծեմ. և թէ սրտս վախ ունենալով իրմէ, կ'ուզէ որ ձեռքի տակէ՝ լռութեան մէջ պահելու կարողանամ,

**ԿՂԷ.** Կը նայիմ, Պարոն, որ գունագեղեալ կերպով ինքզինքդ կ'անմեղադրես, և բոլոր պատճառաբանութիւններդ քաշքըռտուած են։ Երկնից շահօգուտը ինչո՞ւ վրադ կ'առնես. յանցաւոր մի պատժելու համար մեզմէ հարկաւորութիւն ունի՞։ Թո՛ղ, թո՛ղ իր վրան վրէժխնդրութեան հոգը. և ուրիշ բանի մի նայիր, բայց եթէ ներողութեան՝ որ թշնամեաց դէմ կը պատուիրէ. և մարդկային վճիռներու ականջ մի կախեր, թէ որ երկնից վեհագոյն հրամանաց հետևիլ կ'ուզես։ Ինչ. հաւատացուելու կարելի եղած բանի մի տկար շահօգուտը մէկ բարի գործի փառքին արգե՞լք ըլլայ պիտի։ Ո՛չ, ո՛չ, գործենք միշտ ինչպէս որ երկինք կը պատուիրէ, և ուրիշ ոչինչ հոգով մեր միտքը չխանգարենք։

**ԹԱՐ.** Ես քեզ արդէն ըսի որ սրտս իրեն կը ներէ, և այս ըրածս ալ, Պարոն, Աստուծոյ պատուիրանաց համեմատ է. բայց, այսօրուան գայթակղութենէ և խայտառակութենէ ետք՝ երկինք հրաման չտար որ ես իրեն հետ կենակցիմ։

**ԿՂԷ.** Եւ հրաման կը տա՞յ, Պարոն, որ պարզ քմահաճութիւն մի հօրն ականջը բանայ և անոր խրատներ տայ, և պարգև ընդունիս այն ամեն ստացուածքը՝ ուր արդարութիւնը կը պարտաւորէ զքեզ որ բանի մի ձեռք չդպցնես։

**ԹԱՐ.** Անոնք որ զիս պիտի ճանչեն, չպիտ՝ ունենան այն կարծիքը թէ շահախնդիր անձի մ'արդիւնքն է, Այս աշխարհի բոլոր բարիքն ինձ համար քիչ հրապոյր ունին, անոնց խաբեպատիր փայլէն ես չեմ շլանար. և թէ որ հաւանութիւն տուի որ հօրմէն ընդունիմ այս նուիրատուութիւնը որ ինձ բաշխել ուզեց, ձեզի շիտակն ըսեմ, ուրիշ միտք չէր, բայց եթէ վախուս որ չըլլայ թէ այս բոլոր բարիք չար մարդոց ձեռք անցնին. և գտնուին այնպիսի մարդիկ որ ժառանգակից ըլլալով սուկնին աշխարհի մէջ պատժարժանաբար չարաչար 'ի կիր առնուն, և գործ չածեն զանոնք, ինչպէս որ ես դիտաւորութիւն ունիմ, երկնից փառաց և ընկերի բարիք ընելու համար։

**ԿՂԷ.** Է՜հ, Պարոն, այդ փափկասիրտ երկիւղները մ'ունենար բնաւ, որք կրնան արդարացի ժառանգորդի մը տրտունջ պատճառել։ Հանդուրժէ՛, առանց ինքզինքդ նեղութեան մէջ ձգելու՝ որ 'ի վտանգս իւր, իր ընչից տէրն ըլլայ.



և յիշէ՛ որ աւելի լաւ է որ ինք զանոնք չարաչար գործածէ, քան թէ քո զանոնք յափշտակելովդ՝ զքեզ ամբաստանեն։ Ես բանիս միայն կը զարմանամ, թէ ինչպէս առանց շփոթելու այս առաջարկութիւնը լսելու համբերեցիր։ Վասն զի հուսկ ուրեմն, ճշմարիտ եռանդը ունի՞ այնպիսի առած մի, որ ցուցնէ թէ օրինաւոր ժառանգը կողոպտել պէտք է։ Դամիսի հետ մէկտեղ ապրելու անյաղթելի արգելքէն աւելի նախադաս չպիտի սեպուի արդեօք, որ իբրև խոհեմ մարդ, այս տնէն պատուաւորաբար հեռու քաշուիս, քան թէ այս կերպով համբերես, որ ամեն իրաւանց դէմ՝ տան զաւակ մի քեզի համար տնէն դուրս վռնտուի՞։ Հաւատա՛ ինձ, Պարոն, որ այս քո ուղղամտութեան վայլած . . .

**ԹԱՐ.** Ժամը՝ երեք ու կէս է, Պարոն, քանի մի բարեպաշտական պարտաւորութիւններ զիս վեր կը կանչեն, և ներէ՛ ինձ որ քեզմէ շուտ կը հեռանամ։

**ԿՂԷ.** (առանձին) Ա՛հ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԷԼՄԻՐԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴՈՐԻՆԱ։

**ԴՈՐ.** (Կղէանդրոսին) Պա՛րոն, Մարիանային համար մեզի հետ կ'ուզէ՞ք պարապիլ, իր սիրտը մահաբեր ցաւ մի կ'ըզգայ. և իր հօրը այս գիշերուան համար որոշած համաձայնութիւնը զան ամեն վայրկեան յուսահատութեան մէջ կը ձգէ։ Հիմա հայրը հոս պիտի գայ։ Կ'աղաչեմ, ամենքս մէկտեղ աշխատինք, և ուժգնամբ կամ հնարագիտութեամբ ջանանք տապալելու այս վատաղէտ դիտաւորութիւնը որ մեզ ամենքս ալ շփոթեց։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՕՐԿՕՆ, ԷԼՄԻՐԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴՈՐԻՆԱ։

**ՕՐԿՕՆ.** Հա՛, շատ ուրախ եմ որ զձեզ ժողուած կը տեսնեմ։ (Մարիանային) Ահա՛ բերի դաշնագրութիւնը որ քեզ շատ պիտի ուրախացնէ, և արդէն գիտես թէ այս ինչ ըսել կ'ուզէ։

**ՄԱՐ.** (Օրկօնին ծնգաց առջև) Հա՛յր իմ, յանուն Աստուծոյ, որ իմ ցաւս կը ճանչէ, և ամեն բանի՝ որ կրնայ սիրտդ շարժել, մեղմացուր քիչ մի քո հայրական իրաւունքներդ, այս հնազանդութեան համար՝ անտեսէ՛ իմ փափաքներս։ Այս դժնդակ օրէնքով՝ զիս մինչև այն աստիճան մ'իջեցներ, որ քեզի դէմ ունեցած պարտաւորութեանցս համար մինչև երկինք տրտունջ ընեմ. և այս կեանքը՝ ափսո՜ս, զոր ինձ տուած ես, ապերջանիկ մի ըներ, հայր իմ։ Թէ որ ընդդէմ այն քաղցր յուսիս զոր կարացած էի յղանալ, կ'արգիլես զիս որ չիմանամ անոր՝ զոր սիրելու կը համարձակիմ, գոնէ, քո բարութեամբդ, որ ծնգացդ առջև կը պաղատիմ, ազատէ՛ զիս այն տանջանքէն որ պիտ՝ ունենամ

միանալով անոր՝ զոր կ'առնեմ. և բոլոր իշխանութիւնդ վրաս բանեցնելով՝ յուսահատութեան մի կէսի մի՛ տանիր զիս։

**ՕՐԿՕՆ.** (սրտաշարժ զգածուելով) Աղէ՛, հաստատ կեցի՛ր, սիրտս. մարդկային տկարութիւն պէտք չէ։

**ՄԱՐ.** Անոր վրայ ունեցած սէրդ՝ ինձ ամենևին վնաս չունի։ Ուզածիդ չափ սիրէ զայն, տո՛ւր իրեն ամեն բարիքդ, և թէ որ այն բաւական չըլլայ՝ իմ բոլոր մասս ալ վրան յարէ՛, բոլոր սրտովս հաւանութիւն կը տամ, և զան քեզ կը ձգեմ. բայց, գոնէ, մի՛ զոհեր մինչև իմ անձս. և հրաման ըրէ՛ որ վանք մի քաշուիմ, և խստութեանց մէջ անցունեմ իմ տրտում օրերս, զորս Աստուած թուած է ինձ։

**ՕՐԿՕՆ.** Ա՛հ, ահա՛ նոր եղած կրօնաւորուհիներ ինտոր կ'ըլլան, երբ հայր մ'իրենց սիրահարական տարփանքը զսպել կ'ուզէ։ Ե՛լ, կայնէ՛։ Որքան որ սիրտըդ դժկամակի զայս ընդունելու, այնքան աւելի պիտի աստ որ ասոր արժանանաս։ Այս ամուսնութեամբ նուաճէ՛ քո զգացմունքդ, և ալ պատուհասև գըլուխս մի՛ ցաւցներ։

**ԴՈՐ.** Բայց ինչ. . .

**ՕՐԿՕՆ.** Դուն բերանդ գոցէ՛։ Դուն գնա՛ քեզի պէտներու հետ խօսէ՛։ Բացարձակապէս կ'արգիլեմ քեզ, որ բերնէդ խօսք մի չհանես։

**ԿՂԷ.** Եթէ կը բարեհաճիս որ խրատով մի պատասխան տրուի . . .

**ՕՐԿՕՆ.** Եղբա՛յրս, խրատներդ աշխարհի ամենէ օգտակարներն են։ Շատ լաւ տրամախորհուած են և ես զանոնք աղէկ կը գնահատեմ. բայց կարծեմ կը հաճիս որ զանոնք գործ չածեմ։

**ԷԼՄ.** (Օրկօնին) Այս ամենը տեսնելով, ալ չեմ գիտեր թէ ինչ ըսեմ, կուրութիւնդ ալ պատճառ կ'ըլլայ որ վրադ զարմանամ։ Կ'երևի որ քեզ աղէկ կլնեցուցեր ու համոզեր է, որ այսօրուան անցքը մեզ սուտ հանել կ'ուզես։

**ՕՐԿՕՆ.** Քեզ ծառայ եմ, և երևոյթներուն կը հաւատամ, գիտեմ ալ որ իմ խաբեբայ որդւոյս համար կամահաճութիւններ կ'ընես. և դուն վախ ունեցար դրժելու այն դաւադէպը՝ որով ուզեց որ այն խեղճ մարդը զրպարտէ։ Շատ հանդարտ կ'երևայիր, քեզ հաւատալու համար, և դուն աւրիշ կերպով այլայուզեալ ըլլալ պէտք էիր։

**ԷԼՄ.** Մեր պատիւը՝ սիրահարական յուզման մի պարզ խոստովանութեան դէ՞մ միայն պէտք է որ ուժգնութեամբ զայրանայ. և ասոր նկատող բաներուն չկրնա՞ր մարդ աչաց բոցով և բերնի թշնամանօք պատասխանել։ Իմ մասիս, ասանկ նիւթերու վրայ ես պարզապէս կը ծիծաղիմ. ու անոնց վրայ մեծապարծիլը բնաւ չեմ ախորժիր։ Կը սիրեմ որ ինքզինքնիս քաղցրութեամբ խոհեմ ցուցնենք. և այն զգօնակեղծ վայրագուհիներուն բնութիւնը չունիմ, որոնց պատիւը մագիլներով ու ակռաներով զինեալ է, և կ'ուզէ, որ ամենաչնչին խօսքէն, մարդիկը այլադէմ ընէ։ Աստուա՛ծ զիս այսպիսի խոհեմութենէ հեռի ընէ, ես այնպիսի առաքինութիւն մի կ'ուզեմ որ բնաւ ժանտ չըլլայ. և կարծեմ որ սէր մի մերժելու համար դժման մի չըջահայեաց պաղարիւնութենէ աւելի զօրաւոր բան չկայ։

**ՕՐԿՕՆ.** Վերջապէս, գործը գիտեմ, խօսքէդ մի զարտուղիր։



**ԷԼՄ.** Դարձեալ կ'ըսեմ, կը զարմանամ այդ տարօրինակ տկարութեանդ վրայ. բայց քո թերահաւատութիւնդ ի՞նչ պատասխան տալու էր, թէ որ ցուցնէի քեզ թէ ճշմարտութիւնը կ'ըսեմ։

**ՕՐԿՕՆ.** Ցուցնէ՛ր։

**ԷԼՄ.** Այո՛։

**ՕՐԿՕՆ.** Մնոտի խօսքեր։

**ԷԼՄ.** Բայց ի՞նչ ըսելու ես, թէ որ հնարը գտնէի որ քեզի յայտնապէս ցուցնէի։

**ՕՐԿՕՆ.** Օդին մէջ խօսքեր են ատոնք։

**ԷԼՄ.** Ի՜նչ տեսակ մարդ ես։ Գոնէ, ինձ սա պատասխանը տուր։ Ես քեզի չեմ ըսեր որ մեր խօսեցածին հաւատաս. բայց դիցուք թէ սա տեղ այնպիսի տեղ մի կենայիր, ուրկէ յստակաբար ամեն բան տեսնէիր ու ամեն բան լսէիր, այն ժամանակ քո բարի կարծած մարդուդ վրայ ի՞նչ ըսելու էիր։

**ՕՐԿՕՆ.** Այն ժամանակ, պիտի՝ ըսէի որ . . . ։ Բան մը չպիտի՝ ըսէի, այդ անկարելի բան է։

**ԷԼՄ.** Սխալմունքը՝ երկար ատեն կը դիմանայ, և այդ չհաւատալդ՝ բերանս զրպարտութեամբ դատապարտել է։ Շատ հեռու չերթանք, պէտք է որ բոլոր այս ըսածներուս՝ զուարճութեան մի համար, զքեզ ականատես վկայ ընեմ։

**ՕՐԿՕՆ.** Ըլլայ։ Զքեզ խօսքերովդ բռնած եմ։ Տեսնենք [illegible]ութիւնդ, և նայինք ինչ կերպով խօսքդ պիտի կատարես։

**ԷԼՄ.** (Դորինային) Ինծի կանչէ՛ զայն։

**ԴՈՐ.** (Էլմիրային) Իր բնութիւնը կեղծաւորիր է [illegible] արժահաւութիւն ընելու համար դժուար պիտի՝ ըլլայ։

**ԷԼՄ.** (Դորինային) Չէ՛. Մարդ իր սիրածէն [illegible] կը [illegible]ծուի. և անձնասիրութիւնը կ'ըստիպէ՝ որ մարդ ինքզինք պատրէ։ Զան վա՛ր կանչէ։ (Կղէանդրոսին ու Մարիանային) Դուք ալ, գնացէ՛ք ասկէ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԷԼՄԻՐԱ, ՕՐԿՕՆ։

**ԷԼՄ.** Սա սեղանը մօտ բերենք, դուն ալ տակը մտի՛ր։

**ՕՐԿՕՆ.** Ինտո՞ր։

**ԷԼՄ.** Ծածուկ պահուիլդ հարկաւոր կէտ մի է։

**ՕՐԿՕՆ.** Ինչո՞ւ այս սեղանին տակ։

**ԷԼՄ.** Ո՛հ, Աստուած իմ, անանկ ըրէ կ'ըսեմ, ես իմ ուրուագիծս ունիմ գլխուս մէջ, ետք պիտի դատես։ Սաոր տակը մտի՛ր, կ'ըսեմ քեզ. և երբոր հոն ըլլաս՝ զգուշ կեցիր որ մարդ չտեսնէ ու չլսէ զքեզ։

**ՕՐԿՕՆ.** Ճշմարիտ կ'ըսեմ, որ չափ կամահաճութիւն ցուցուցի. բայց նայինք այս ձեռնարկութիւնդ ինտոր գլուխ հանելու ես։

**ԷԼՄ.** Կարծեմ որ ինծ դարձեալ կրկնել տալու պէտք չունիս։ (Օրկօնին

որ սեղանին տակն է) Հիմա գոնէ, տարօրինակ խնդրոյ մի ձեռնարկելու եմ, բայց պէտք չէ որ դուն որ և իցէ կերպիւ գայթակղիս: Ինչ որ ըսեմ ինձ ներելի ըլլալու է. այս ալ՝ քեզ համոզելու համար ինչպէս որ խոստացայ: Հիմա, ըստ որում այս վիճակին հասած եմ, քաղցրախօսութեամբ այն կեղծաւոր անձին դիմակը վար առնել տալու եմ, իր սիրոյն անամօթ բաղձանքները պիտի շողոքորթեմ և իր լկտութեանց ազատ ասպարեզ մի տալու եմ: Եւ ըստ որում քեզի համար է միայն, և որպէս զի զան աւելի լաւ շփոթեմ, սրտովս իր սիրոյն պատասխանելու պիտի կեղծեմ, և որ կէտին որ ուզես իսկոյն զանոնք դադրեցնելու եմ և գործը քու ուզած կէտէդ անդին չպիտ' անցնի: Այն ատեն քո ձեռքդ է անոր անզուսպ կիրքերն կեցնելը երբ կարծես թէ գործը բաւական յառաջ գացած է, որպէս զի կնոջդ խնայես, որ չըլլայ թէ, միայն խաբուիլդ հասկցնելու վիճակէն անդին վտանգի մէջ իյնկնի: Ասոնք են քո շահօգուտներդ, դուն պէտք է տէր ըլլաս: Եւ . . . կը գայ: Պահուէ, և նայէ որ չերևաս:

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԹԱՐԹԻՒՖ, ԷԼՄԻՐԱ, ՕՐԿՕՆ (սեղանին տակ):

**ԹԱՐ.** Ինձ ըսին թէ այս տեղս ինձ խօսիլ ուզեր էք:

**ԷԼՄ.** Այո: Ձեզ գաղտնիք ունիմ յայտնելու: Բայց զանոնք ըսելէս առաջ՝ քաշեցէք սա դուռը ու նայեցէք ամեն կողմ, որ չըլլայ թէ մարդ վրայ գայ: (Թարթիւֆ կ'երթայ դուռը կը գոցէ ու կը վերադառնայ) Ասկէ պահ մ'առաջ տեղի ունեցած դիպուածին վրայօք չէ անշուշտ հիմա մեր այս տեղ զբաղելի գործը. երբեք այնպիսի յանկարծահասութիւն մի տեսնուած բան չէր: Դամիս՝ ձեզի համար ինձ վերջին կէտ վախ տուաւ, և դուք շատ լաւ տեսաք թէ որքան ջանացի որ իր նպատակը դրժեմ և իր յուզմունք խաղաղցնեմ: Իմ շփոթութիւնս ալ, ճշմարիտ, այնքան զիս գրաւած էր որ զան սուտ հանելու համար բնաւ ին միտքէս չանցաւ. բայց այս կերպով ալ, գոհութիւն Աստուծոյ, ամեն բան լաւ յաջողեցաւ, և հիմա գործերը աւելի ապահով վիճակի մէջ են: Ձեր վրայ եղած համարումը՝ փոթորիկը բոլորովին ցրուեց և էրիկս ձեր վրայ այլ և ս կասկած մի չկրնար ունենալ: Ինք՝ չարակարծիք դատողութեանց շշնկոցը աւելի լաւ յաղթահարելու համար, կ'ուզէ որ մենք ամեն բոպէ մէկ տեղ գտնուինք. ահա ինչպէս կրնամ, առանց քամահուելու վախն ունենալու՝ ձեզի հետ հոս տեղ մինակս փակուած մնալ, և կը վստահիմ որ սիրտս ձեզի բանամ, դուցէ տակաւ ինչ խիստ շուտ, որ ձեր եռանդեան համբերեմ:

**ԹԱՐ.** Այս լեզունիդ հասկնալը բաւական դժուար է, Տիկին, ու ասկէ քիչ մ'առաջ՝ ուրիշ ոճով կը խօսէիք:

**ԷԼՄ.** Ա՜հ, թէ որ այնպիսի կերպով մերժելս ձեզ բարկացուց, ըսել է որ դուք դեռ կանանց սիրտը աղէկ չէք ճանաչեր, և քիչ տեղեակ էք թէ ինչ կրնայ հասկցուիլ, երբ այնքան տկարաբար պաշտպանուիլ կ'ուզուի: Մեր ամօթխածութիւնը, այն վայրկեաններուն մէջ, միշտ կը մարանչի այն փաղաքշական



զգացմանց հետ՝ զորս կը տան մեզ: Զմեզ յաղթահարող սիրոյն որքան իրաւունքն ալ գտնուի, միշտ կը գտնուի նաև խոստովանութիւն՝ քիչ մ'ալ յամօթոյ: Նախ՝ ինքզինքնիս կը պաշտպանեմք. բայց այնպիսի վարմունք մի կ'ունենամք, որ յայտնապէս կը ցուցնեմք թէ սրտերնիս անձնատուր եղած է. մեր աչաց՝ առ 'ի պատիւ, մեր բերանը դէմ կը կենայ, և այն ձև մերժմամբ՝ ամեն բան կը խոստանամք: Անտարակոյս, այս ձեզի համարձակ խոստովանութիւն մ'է որ կ'ընեմ, և մեր պարկեշտութեան վրայ շատ քիչ վարպետութիւն կը բանեցնեմ: Բայց որովհետև խօսքը վերջապէս բացուեցաւ, ահա ձեզ կ'իմացնեմ. թէ կրնայի Դամիսին բերանը բանել, ըսէք կ'աղաչեմ, կրնայի այնքան քաղցրութեամբ երկայն բարակ մտիկ ընել ձեր սրտին առաջարկանուէրը, գործը ինչպէս տեսաք, կրնայի՞ ուրիշ կերպով բանել, թէ որ այդ սրտին առաջարկանուէրը ինծի հաճելի բան եղած չըլլար: Եւ երբ ես ինքս ուզեցի որ ձեզ ստիպեմ որ նոր առաջարկուած հարսնախօսութիւնը մերժէք, այն իմ թախանձանքս ձեզ ինչ բան հասկցնել ուզեց, չէ՞ որ դիտաւորութիւնս ձեր շահօգուտը փընտռել էր, և ձանձրութիւնը որ պիտ' ունենայինք այն որոշուած խնամութենէ*) որ վերջապէս զար բաժնեկից ընել սիրտ մի՝ որուն ամեն բան կը բաղձացուի:

**ԹԱՐ.** Տիկին, սիրուած բերանէ մ'այսպիսի խօսքեր լսելը՝ անշուշտ վերջին աստիճան քաղցրալուր բան մ'է. անոնց երկայնումով մեղրն իմ բոլոր երակացս մէջ այնպիսի քաղցրութիւն մի կը զեղու՝ որուն համը երբեք առնուած չէ: Ձեզի հաճելու երջանկութիւնը՝ իմ ամենէ գերագոյն փոյթս է և սիրտս ձեր ուխտադրութեամբը իր երանութիւնը կ'ըստանայ. բայց հոս այս սիրտը համարձակութիւն կը խնդրէ ձեզմէ, իր բարօրութենէ քիչ մի տարակուսիլ համարձակելու: Ինձ այնպէս կ'երևի որ այս խօսքերը համեստական խորագիտութիւն մի են որպէս զի հանդերձեալ ամուսնութիւնը խզելու պարտաւորեն զիս. և թէ որ հարկ ըլլայ որ իմ միտքս ազատօրէն հասկցնեմ ձեզ, սանկ քաղցրախօս բանակցութեանց պէտք չէ որ հաւատամ երբեք, բայց եթէ քիչըսիկ մի ձեր շնորհքներէն՝ որոնց համար կը հառաչեմ, չգան որ հաստատեն զայն ամեն բան՝ որ գրոս ընելու կարողացան, և տնկեն սրտիս մէջ հաստատամիտ հաւատ մի ձեր իմ վրայ տուած անկեղծ բարութեանց:

**ԷԼՄ.** (իր էրկանը ձայն տալու համար հազալէն ետք) Ի՜նչ. այդքան աճապարանօք շտապել կ'ուզէք, որ փափկասրտութիւնը այդքան կանուխ սպառէք. ես ինքզինքս կ'ըսպաննեմ որ ամենէ քաղցրագոյն խոստովանութիւնն ընեմ ձեզ, այսու ամենայնիւ դուք դարձեալ տակաւ ալ գոհ չէք ըլլար. և ձեր կամքը կատարելու համար ուրիշ կերպով կարելի չըլլար, բայց եթէ այս գործը մինչև վերջին ծայր շնորհաց չմղուի:

**ԹԱՐ.** Մարդ բարիքի մ'որքան քիչ արժանաւոր ըլլայ, այնքան քիչ յոյս ունենալու կը համարձակի: Խօսքի վրայ եղած մեր ուխտադրութիւնները դժուարաւ կ'ապահովուին: Փառքով լի բաղդի մի վրայ՝ դիւրութեամբ կը կասկածուի,

*) Եւ որտեղ յանդիմանութեան պէտք էր, երբ Օրգոն որոշեց այս ամուսնութիւնը, քոր մանաւանդ ընէր ԷՄարիանա այս խնդրանքներուն՝ որ Էլմիրային *սիրոյն* համար պահել կ'ուզեմ:

թէ որ անոր հաւատալէն առաջ՝ անգամ մը զան վայելել չուզուի։ Ես իմ մասիս, որ ձեր բարութեանց այնքան քիչ արժանանալուս կը հաւատամ, իմ յանդգնութեանցս երջանկութեան վրայ կ'երկբայիմ. և ես բանի մը չպիտի հաւատամ, Տիկին, մինչև որ արդեամբք, իմ բոցավառ սէրս չկարենաք յագեցնել։

**ԷԼՄ.** Աստուած իմ, ինչպէս ձեր սէրը ճշմարիտ բռնաւորի պէս կը գտուի. ու խելքս միտքս տարօրէն շփոթութեան մէջ կը ձգէ. ինչպէս բռնաբարող իշխանութիւն կը բանեցնէ սրտից վրայ. և ինչ բռնութեամբ իր բաղձացածը կ'ուզէ. ինչ. ձեր հետապնդութենէ չկրնամ պիտի խոյս տալ, և կարճ մը ժամանակ չէք տար որ շունչ առնեմ. վայելո՞ւչ բան է որ այդքան խստապահանջ ըլլաք, և առանց գիպատեղւոյ ձեր խնդրած բանն ուզէք, և այսպէս, ձեր բուռն ջանքերով, կը տեսնէք որ ասանկ դեռահասուհի մը գլխէ հանել կ'ուզէք։

**ԹԱՐ.** Սակայն, թէ որ քաղցրահայեաց աչօք իմ անձնուիրութեանցս նայելու ըլլաք, ինչո՞ւ համար ապահով առհաւատչեայ մը տալու կը մերժէք։

**ԷԼՄ.** Բայց ինտո՞ր ընդհաճիմ ձեր խնդրածին առանց Աստուծոյ դէմ մեղանչելու, որու խօսքը կ'ընէք անդադար։

**ԹԱՐ.** Թէ որ իմ բաղձանացս՝ միայն զԱստուած է զոր դէմ կը դնէք, ինծի համար չնչին բան մ'է այդ արգելքը վերցնելը, որն որ բնաւ պէտք չէ որ ձեր սիրտը վհատեցնէ։

**ԷԼՄ.** Բայց Աստուծոյ պատուիրանքները մեզ այնքան երկիւղ կը տան . . .

**ԹԱՐ.** Ես կրնամ ձեզ փարատել տալ, Տիկին, այդ ծիծաղելի երկիւղները. և գիտեմ նոյնպէս խղճմտանքի խայթից վերցնելու կերպը։ Իրաւ է, որ Աստուած կ'արգիլէ քանի մը հաճութիւններ, բայց իրեն հետ հաշտուելու կերպն ալ կը գտնուի. *) զանազան պիտոյից համեմատ՝ գիտութիւն մը կայ, որով մեր խղճմտանաց կապերը կ'ընդարձակենք, որ գործողութեան մը չարիքը՝ մեր նպատակին ամբծութեամբը կը սրբագործենք։ Այս գաղտնիքը, Տիկին, ես ձեզ կրնամ ուսցնել. միայն թէ թո՛յլ տուէք ինձ որ ձեզ առաջնորդեմ։ Գո՛հ ըրէք իմ ցանկութիւնս, և բնաւին վախ մի՛ ունենաք. ես ամեն բանի պատասխանատու կը մնամ, և չարը վրաս կ'առնում։ (Էլմիրա աւելի ուժով կը հազայ) Շատ ուժով կը հազաք, Տիկին։

**ԷԼՄ.** Այո՛, կը տանջուիմ։

**ԹԱՐ.** Կը հաճի՞ք որ ձեզ կտոր մը մատուտակի աւշանիւթ տամ։

**ԷԼՄ.** Անշուշտ պինդ յամառ հարբուխ մ'է. և կը նայիմ որ աշխարհի բոլոր աւշանիւթերը հոս բան մը չեն կարող ընել։

**ԹԱՐ.** Այդ ցաւալի բան է, ճշմարիտ։

**ԷԼՄ.** Այո՛, կարծուածէն աւելի։

**ԹԱՐ.** Վերջապէս, ձեր խղճմտանքը փարատելը դիւրին բան է։ Դուք հոս ապահով էք որ գաղտնիքը դուրս չպիտի ելնէ, և չարը երբեւան չէլներ երբէք, բայց եթէ երբ շշնկաց հանուի։ Աշխարհի գայթակղութիւնն է որ վնաս կը հասցնէ, և լռութեան մէջ մեղանչելը՝ յանցանք չսեպուիր։

*) Այս բառը յաւելուածն է։ Ծան. Մոլիէրի։



**ԷԼՄ.** (նորէն հազալէն ու սեղանին վրայ զարնելէն ետք) Վերջապէս կը նայիմ որ պէտք է միտքս որոշեմ որ ինքզինքս յանձնեմ. պէտք է որ ընդհաճիմ որ ձեզ ամեն բան շնորհեմ. և ինքզինքս յանձնելէ նուազ բանէ մը գոհ ըլլալ չուզելնիդ պէտք է որ անձս առնեմ։ Անտարակոյս ցաւալի բան է մինչև այս կէտ հասնիլը, և շիտակն ալ իմ կամացս դէմ է որ զայն կը զանցանեմ. բայց, ըստ որում կը կամակորուի որ զիս այս կէտին իջեցնեն, ըստ որում չը հաւատացուիր իմ ամեն ըսածներուս, և վկայութիւն կը փնտռուի որ աւելի համոզական ըլլայ, պէտք է որ որոշմունքս տամ, և մարդիկ գոհ ընեմ, թէ որ այս կամակատարութիւնը իրենէն չարիք մը բերէ, աւելի դէշ անոր՝ որ զիս այս բռնութեան վիճակին կը բռնաբարէ. անշուշտ յանցանքն ալ պէտք չէ որ իմ վրաս մնայ։

**ԹԱՐ.** Այո՛, Տիկին, վրաս առնուած է. և գործը ինքնին . . .

**ԷԼՄ.** Բացէք քիչ մը դուռը, և նայեցէք, կ'աղաչեմ, որ չըլլայ թէ ամուսինս աս նրբանցքին մէջ գտնուի։

**ԹԱՐ.** Այդ իրեն համար ունեցած հոգդ ինչ հարկաւոր է. խօսքը մեր մէջ, այն այնպիսի մարդ մ'է, որու ալուխը պակաս է։ Մեր բոլոր խօսակցութիւնները իրեն փառք պիտի սեպէ, և զինք այնպիսի կէտի մը բերած եմ որ ամեն բան տեսնէ՝ բանի մ'ալ չպիտի հաւատայ։

**ԷԼՄ.** Հոգ չէ։ Ելէք, անգամ մը, կ'աղաչեմ, և դուրսը ուշի ուշով ամեն կողմ զննեցէք։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՕՐԳՕՆ, ԷԼՄԻՐԱ։

**ՕՐԳՕՆ.** (սեղանին տակէն ելնելով) Ահա՛, ճշմարիտ վկայ, ամենապիղծ դարշելին մէկը. խելքս գլխէս գացած է, այս բաները զիս յանկարծակի կը բերեն։

**ԷԼՄ.** Ի՞նչ. այդքան շուտ դուրս կ'ելնես։ Դուն մեր վրայ կը ծիծաղիս։ Նորէն ծածկոցին տակ մտիր, դեռ ժամանակը չեկաւ. մինչև վերջը համբերէ որ ամեն բան ապահովութեամբ տեսնես, ու բնաւ պարզ ենթադրութեանց հաւատ մ'ընծայեր։

**ՕՐԳՕՆ.** Ոչ, ասկէ աւելի չար մէկը երբէք ելած չէ դժոխքէ։

**ԷԼՄ.** Աստուած իմ, թեթևութեամբ ամեն բանի հաւատալ պէտք չէ ըլլալ։ ինքզինքդ երևան հանելէդ առաջ՝ թո՛ղ որ լաւ մը համոզուիս. և մի՛ շտապիր բնաւ, որպէս զի չըլլայ թէ վրիպիս։ (Էլմիրա՝ Օրկոնը իր ետեւը կը կեցնէ)

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ԹԱՐԹՈՒՖ, ԷԼՄԻՐԱ, ՕՐԳՕՆ։

**ԹԱՐ.** (առանց Օրկոնը տեսնելու) Տիկին, ամեն բան նպաստաւոր է, զիս

գոհացնելու, Ես աչօք բոլոր այս գաւիթը աչքէ անցուցի, մարդ չգտնուիր. և Հոգիս յափշտակուած . . . (Ինչ ատեն Թարթիւֆ բազուկները բացած առաջ կը գայ որ զԷլմիրա գրկէ, նէ ետ կը քաշուի և Թարթիւֆ Օրկոնը կը տեսնէ)

**ՕՐԳՕՆ**. (Թարթիւֆը կեցնելով) Կամաց եկուր. քու տարփական ցանկութեանդ եռալէն շատ ինկած ես, և պէտք չէ որ կիրքդ այդքան ոտք Հանես: Հա՜, Հա՜, բարեպաշտ մարդ, ինձ ոսոխ ըլլալ կ'ուզէ՞ս. Ինտո՞ր Հոգիդ փորձութեանց մէջ ինկած է. դուն աղջկանս Հետ ամուսնանալ կ'ուզես, ու կնոջս կը ցանկանաս. շատոնց կը կասկածէի թէ բրանդ կատակ չէ, և միշտ այն կարծիքն ունէի որ գոյնդ դուրս տալու է. բայց վկայութիւնը աւելի առաջ մղելու Համար՝ այսքանը բաւական է. ամեն բան Հասկցայ, ալ ասկէ աւելի բան չեմ ուզեր:

**ԷԼՄ**. (Թարթիւֆին) Իրաւ կարծեցիր, իմ կամացս դէմ էր որ այս ամենն ըրի. և գիտմամբ զիս այս վիճակին մէջ դրին որ քեզի Հետ սանկ վարուիմ:

**ԹԱՐ**. (Օրկոնին) Ի՞նչ. կը կարծէք . . .

**ՕՐԳՕՆ**. Աղէ՛, ալ խօսք պէտք չէ, կ'աղաչեմ: Տնէս դուրս ել իսկոյն, առանց ձայն Հանելու:

**ԹԱՐ**. Իմ դիտաւորութիւնս . . .

**ՕՐԳՕՆ**. Հիմա այդ խօսքերն ընելու ժամանակը չէ. պէտք է որ, Հիմա այս կէտին, տնէս դուրս ելնես:

**ԹԱՐ**. Դուն՝ որ տանտիրոջ պէս կը խօսիս, դո՛ւն դուրս ելնել պէտք ես: Տունն իմս է, ես քեզ Հասկցնեմ պիտի, ու ցուցնելու եմ, որ այս վատ դարձուածքով ինծի Հետ վէճ յարուցանելնիդ փուճ աշխատութիւն մ'է, և ինձ այս նախատինքն ընելով՝ ո՛ւր ըլլալնիդ չպիտի գիտնայք. ես գիտեմ ինչ կերպով պիտի շփոթեմ ու պատժելու եմ ձեր զրպարտութիւնը, զԱստուած վիրաւորելնուդ Համար վրէժ լուծելու եմ, և զղջացնելու եմ զանոնք՝ որ Հոս տեղս զիս դուրս Հանելու խօսքը կ'ընեն:

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԷԼՄԻՐԱ, ՕՐԳՕՆ:

**ԷԼՄ**. Աս ի՞նչ լեզու կը բանեցնէ. և ի՞նչ ըսել կ'ուզէ:

**ՕՐԳՕՆ**. Ճշմարիտ, շփոթած եմ, ու խնդալու ատենս չէ:

**ԷԼՄ**. Ինտո՞ր:

**ՕՐԳՕՆ**. Իր ըսած խօսքերէն՝ սխալմունքս կը ճանչեմ. ըրած նուիրատուութիւնս մտածմունքներս կը կնճռոտէ:

**ԷԼՄ**. Նուիրատուութի՞ւնդ:

**ՕՐԳՕՆ**. Այո՛: Այն լմնցած բան է: Բայց ուրիշ բան մի կայ տակաւին որ զիս անհանգիստ կ'ընէ:

**ԷԼՄ**. Ի՞նչ կայ որ:

**ՕՐԳՕՆ**. Ամեն բան պիտի գիտնաս: Բայց նախ և առաջ նայինք շուտով որ սա պզտիկ դղրոցը վերն իր տեղ մնացա՞ծ է:



# ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՕՐԳՕՆ, ԿՂԷԱՆԴՐՈՍ:

**ԿՂԷ**. Ո՞ւր կը վազես:

**ՕՐԳՕՆ**. Խնջկցայ: Ի՞նչ գիտնամ ես:

**ԿՂԷ**. Ինձ կ'երևի որ այս դէպքին մէջ ինչ միջոց բանեցնելնիս մէկտեղ խորհրդակցելու սկսիլ պէտք ենք:

**ՕՐԳՕՆ**. Զիս բոլորովին շփոթողը այն դղրոցն է, և բոլոր միւս բաներէն աւելի՝ այն է ինձ յուսահատութիւն տուողը:

**ԿՂԷ**. Ուրեմն այդ դղրոցին մէջ կարևոր գաղտնիք կա՞ն:

**ՕՐԳՕՆ**. Պատանդ մի էր, զոր այն մեղքընալու բարեկամս, Արգասը՝ ինք իր ձեռօք եկաւ ու շատ ծածկաբար իմ ձեռացս մէջ յանձնեց: Այս դիտաւորութեամբ, իր փախչելու ժամանակ՝ զիս ընտրել ուզած էր. իր ինձ ըսել կարեցածին Համեմատ՝ մէջը այնպիսի թղթեր կան, որոնց կախեալ են իր կեանքն ու ինչքը:

**ԿՂԷ**. Ինչո՞ւ ուրեմն զանոնք ուրիշ մի ձեռք Հաւատացիր:

**ՕՐԳՕՆ**. Աղի խղճմտանքի պարագայէ մ'առթեալ էր: Շիտակ իմ նենգաւոր մատնչիս գացած էի որ գաղտնիքս յայտնեմ իրեն. և իր տրամախորհութիւնները զիս այնպէս Համոզեցին՝ թէ պէտք էր տալ դղրոցն իր քով պահուած մնալ, որպէս զի, խուզարկութիւն մ'եղած պարագայի մէջ՝ ուրանալու Համար, առձեռնպատրաստ խուսափուղի մ'օժանդակութիւնն ունենամ, որու միջոցաւ խղճմտանքս ճշմարտութեան դէմ երդում ընելու ապահովութեան մէջ ըլլայ:

**ԿՂԷ**. Ահա՛ այդ շատ գէշ ես ըրեր, գոնէ ըստ երևոյթին այնպէս կարծեմ. թէ՛ նուիրատուութիւնը և թէ գաղտնատւութիւնը ըստ իմ դատողութեանս խօսելով՝ շատ անխոհեմութեամբ եղած միջոցաքայլեր են: Այսպիսի պատանդներով գլուխդ շատ փորձանքներ կրնան բերել. և այս մարդը՝ քու վրադ այն առաւելութիւններն ունենալով, քու կողմէդ դարձեալ գործը գրգռելը աւելի մեծ անխոհեմութիւն է, վասնորոյ դուն պէտք էիր որ աւելի դիւրին ճար մի գտնէիր:

**ՕՐԳՕՆ**. Ի՜նչ. այնքան սրտաշարժ ջերմեռանդութեան կեղծեալ ցոյցերուն տակ այսքան ալ երկդիմի սիրտ ու այսքան չար Հոգի կրնա՞յ եղեր ծածկուիլ. և ես՝ որ զայն ազնջականեցի երբ կը մուրար և որ Հացի կարօտ . . .: Ալ լմնցած է, այսուհետև երեսպաշտ մարդոց Հեռո՛ւ. ալ ասկէց ետք իրենց Հետ

զարհուրելի ատելութիւն մ'ունենալու եմ, և իրենց՝ սատանայէն աւելի հակառակ ըլլալու եմ:

**ԿՂԷ.** Աղէ՛, տեսա՞ր հիմա ինոր բարկութիւնդ ուր կ'ելնէ: Իւ ոչ մէկ բանի մէջ քու մեղմ բնաւորութիւնդ կը պահես, այդ ըրածդ՝ ուղղախոհութեան մէջ չմնար երբեք, ու միշտ մէկ չափը անցած բանէդ միւս ըստ չափին մէջ կը նետուիս: Սխալմունքդ կը տեսնես, և հասկցար ալ որ կեղծաւորեալ երեսպաշտութեան մի համար նախապատրաստուած էիր. բայց սխալմունքդ ուղղելու համար՝ ինչ պատճառ կրնայ ըլլալ որ երթաս աւելի մեծ սխալմունքի մի մէջ նետուիս, ու անպիտան նենգաւորի մի սիրտը՝ բոլոր ճշմարիտ բարեպաշտներու սրտից հետ չփոխես: Ի՞նչ. խստապահանջ կեղծակերպութեան մեծապանծ ցոյցերու պատրուակաւ խաբեբայ մի ժպրհութեամբ զքեզ դաւադրելուն համար, կ'ուզես որ մարդիկ ամեն տեղ իրե՞ն պէս ըլլան, և բնաւ ճշմարիտ երկիւղած մարդ չգտնուի՞ աշխարհի մէջ: Այդ անմիտ հետևութիւնները ամբարիշտներուն թող, և առաքինութիւնը՝ իր երևոյթներէն որոշէ՛, քու համարումդ երբեք աճապարանօք վտանգի մէջ մի՛ դներ, և այս բանիս համար միշտ անհրաժեշտ միջավայրին մէջ գտնուէ՛: Զգո՛յշ եղիր, թէ որ կարելի է, որ խարդախութիւնը չպատուես. բայց նոյնհետայն անխարդախ երկիւղածութեան՝ անպատուութիւն մի՛ բերեր. և թէ որ այնպէս պատահի որ յետնակէտութեան մի մէջ ինկնիս, առաւել՝ ուրիշ կողմէ յանցանք գործէ:

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՕՐԿՕՆ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴԱՄԻՍ:

**ԴԱՄ.** Ի՞նչ է այս, հա՛յր իմ, իրա՞ւ է որ անզգամը քեզ կ'ըսպառնայ, և ոչ բարերարութիւն մի կայ որ իր սրտէն չջնջէ, և իր վատ ամբարտաւանութիւնը՝ որ զայրոյթի արժանի է, քու բարութիւնները քեզի դէմ զէնքի տեղ գործ կ'ածէ:

**ՕՐԿՕՆ.** Այո՛, զաւակս. և ատոր համար անհամեմատ ցաւեր կ'ըզգամ:

**ԴԱՄ.** Թողէք ինձ, որ իր երկու ականջները կտրեմ, իր ամբարտաւանութեան դէմ պէտք չէ երբեք խրտչիլ. ինձ կը մնայ, որ զքեզ ազատելու և այս կնճռոտ գործէն միանգամ ընդ միշտ դուրս հանելու համար, զան 'ի հարկէ մեռցընեմ:

**ԿՂԷ.** Ահա՛ երիտասարդները ճիշդ ինչպէս կը խօսին: Մեղմացո՛ւր, թէ որ կը հաճիս, այդ յախուռնախօս յուզմունքդ: Այնպիսի կառավարութեան մի տակ կ'ապրինք և այնպիսի ժամանակի մէջ ենք ուր բռնութեամբ գէշ գործ կը տեսնուի:



## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԻԿԻՆ ԲԷՐՆԷԼ, ՕՐԿՕՆ, ԷԼՄԻՐԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ՄԱՐԻԱՆԱ, ԴԱՄԻՍ, ԴՈՐԻՆԱ:

**ՏԻԿ. ԲԷՐ.** Ի՞նչ է այս եղածները: Զարհուրելի՛ գաղտնիք կը լսեմ հոս:

**ՕՐԿՕՆ.** Այնպիսի նոր բաներ են որոնց աչօքս ականատես եղայ, և կը տեսնէք հիմա թէ ինչ գինով հատուցուած են իմ խնամքներս: Չքաւորութեան մէջ գտնուող մարդ մ'եռանդեամբ հիւրընկալեցի, տանս մէջ օթեվանեցի, ու եղբօրս պէս վարուեցայ իր հետ. ամենօրեայ բարութեամբք զինք լցուցի, իրեն աղջիկս տուի, և ամեն ունեցած բարիքս բաշխեցի. բայց այս նենգաւորը, այս ապիրատը, նոյն ժամանակին, իմ կինս մոլորցնելու դժոխային խորհուրդով կը հրապուրէր. և այս վատ փորձերէն ալ գոհ չըլլալով՝ իմ անձնական բարեբարութեանցս սպառնալու կը համարձակի, և զիս կործանելով, այն առաւելութիւնները գործածել կ'ուզէ, որովք իմ անխոհեմ բարութիւններս զինք զինեցին. իմ ստացուածքէս դուրս կը վռնտէ որոնց տէր ըրած էի զինք, և զիս այն կէտին մէջ կը ձգէ, ուրկից զինք ազատած էի:

**ԴՈՐ.** Խե՛ղճ մարդ:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Որդեակ, ես այս բանիս բնաւ չեմ կրնար հաւատալ, որ ասանկ սատանայական գործ մ'ընել ուզէ քեզ:

**ՕՐԿՕՆ.** Ինչպէ՞ս:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Բարեպաշտ մարդիկ միշտ նախանձոտներ կ'ունենան:

**ՕՐԿՕՆ.** Ձեր այդ խօսքերով ի՞նչ ըսել կ'ուզէք ուրեմն, մա՛յր իմ:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Թէ տանդ մէջ անտանելի վարմունք մի կայ, և թէ ամենուն մտածմունքը՝ անոր դէմ ատելութիւն մ'է:

**ՕՐԿՕՆ.** Այդ ատելութիւնը իմ ձեզի ըսածներուս հետ ի՞նչ գործ ունի:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Երբ պզտիկ էիր, քեզ հարիւր անգամ ըսած էի, թէ առաքինութիւնը աշխարհիս մէջ միշտ հալածուած է. նախանձոտները կը մեռնին, բայց նախանձը երբեք չմեռնիր:

**ՕՐԿՕՆ.** Բայց այդ խօսքերը այսօրուան անցքին ի՞նչ օգուտ ունին:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Իրեն դէմ մէկ շատ սուտ պատմութիւններ շինած են քեզի:

**ՕՐԿՕՆ.** Արդէն ձեզ ըսի թէ ես աչօքս ամեն բան տեսայ:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Բամբասասէր մարդոց չարախօսութիւնը յետնակէտն հասած է:

**ՕՐԿՕՆ.** Հիմա բերնէս գէշ խօսք հանել տալու էք, մայր իմ: Ես ձեզ կ'ըսեմ, թէ աչօքս տեսայ այն յանդուգն յանցանքը:

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Լեզուն այնպիսի գէշ թոյն կը տարածէ, որ այս երկրի վրայ բան մի չկրնար անոր դէմ պաշտպանուիլ:

**ՕՐԿՕՆ.** Այդ՝ իմաստազուրկ նպատակակէտի վրայ յամառիլ է: Ես ինքս տեսայ, կ'ըսեմ, տեսայ, աչօքս տեսայ զինք, ինտո՞ր կ'ըսեն, տեսա՛յ: Պէ՞տք է

որ ձեր ականջներուն հարիւր անգամ հնչեցնեմ, ու քառապատիկ ձայնով պոռամ։

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Աստուած իմ, երեւոյթը շատ անգամ աչքերնիս կը խաբէ. տեսածնուս վրայօք պէտք չէ որ դատենք միշտ։

**ՕՐԿՕՆ.** Կը կատղիմ։

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Բնութիւնը՝ կեղծ կասկածներու ենթակայ է, և յաճախ բարիին վրայ՝ չար մեկնութիւն կը տան։

**ՕՐԿՕՆ.** Ուրեմն ես ալ, կնիկս գրկել ուզելու բաղձանքին՝ գթասիրական խնամքի մեկնութիւնը տալ պէտք եմ։

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Մարդիկը ամբաստանելու համար՝ պէտք է իրաւացի պատճառներ ունենալ, և պէտք էիր համբերէիր որ գործին վրայ ինքզինքդ հաւաստի ընէիր։

**ՕՐԿՕՆ.** Է՜հ, գրո՜ղը տանի։ Ինքզինքս աւելի ապահով ընելու միջո՞ցը կ՚ուզէիք։ Ուրեմն, մա՛յր իմ, պէտք էի սպասէի որ իմ աչացս առջև . . . ընէ՞ր։ Հիմա բերնէս անվայել խօսք մը պիտի հանել տաք։

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Վերջապէս շատ անմեղ եռանդեամբ սիրտը կ՚ըմբռնուի երբեմն. և բնաւ խելքս չեմ կրնար զգացնել, որ այս ըսուած բաներուն փորձն ընելու ուզած ըլլայ։

**ՕՐԿՕՆ.** Գացէ՛ք, այնքան բարկացած եմ, որ թէ որ մայրս չըլլայիք, չեմ գիտեր թէ ձեզ ինչ պիտի՛ ըսէի։

**ԴՈՐ.** (Օրկօնին) Ահա՛, Պարո՛ն, այս աշխարհի գործոց անդրադարձը, դուք բնաւին չէիք ուզեր հաւատալ, հիմայ ալ ձեզ չեն հաւատար։

**ԿՂԷ.** Ասանկ փուճ խօսքերով ժամանակնիս կը կորսնցնենք, զոր պէտք էինք հնարք մը գտնելու միջոցներուն գործածէինք։ Այն խաբեբային սպառնալեաց դէմ բնաւ քնանալ պէտք չենք։

**ԴԱՄ.** Ի՞նչ, իր յանդգնութիւնը մինչև այն կէտը հասնելո՞ւ էր։

**ԷԼՄ.** Իմ մասիս, չեմ կարծեր որ իր ամբաստանութիւնը կարելի ըլլայ, և իր ապերախտութիւնն ալ այս տեղ շատ ակներև է։

**ԿՂԷ.** (Օրկօնին) Բանի մը հաւատարմութիւն մ՚ունենար։ Միջոցներ պիտի բանեցնէ որպէս զի ձեզի դէմ՝ իր ջանիցը իրաւունք տայ. բաց յայսմանէ, գաղտնածածկութեան մի ծանրակշռութիւնը, ասանկ աղետաբեր բաւիղի մը մէջ՝ մարդս մտահոգութեան մէջ կը ձգէ։ Դարձեալ կ՚ըսեմ, իր ձեռք եղածովը զինուած ըլլալով՝ պէտք չէ երբեք որ զայն մինչև այն կէտը մղէք։

**ՕՐԿՕՆ.** Իրաւ է. բայց ի՞նչ ընել պէտք է։ Այն մատնչին ամբարտաւանութեան դէմ բարկութիւնս չկրցայ զսպել։

**ԿՂԷ.** Ինծի մնար, բոլոր սրտովս, ձեր երկուքնուդ մէջ տեղ, որ և իցէ խաղաղական կերպով, հաշտութեան միջոցներուն կը նայէի։

**ԷԼՄ.** Թէ որ գիտնայի որ իր ձեռքը այդպիսի զէնքեր ունի, այսքան խռովաղմուկի պատճառ չէի ըլլար. և իմ . . .

**ՕՐԿՕՆ.** (Դորինային, տեսնելով որ Պ. Լուայալ ներս կը մտնէ) Սա մարդն ինչ կ՚ուզէ։ Շո՛ւտ գնա հասկցիր։ Աղէկ ատեն գտան որ գան զիս տեսնեն։



## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՕՐԿՕՆ, ՏԻԿԻՆ ԲԷՐՆԷԼ, ԷԼՄԻՐԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴԱՄԻՍ, ԴՈՐԻՆԱ, Պ. ԼՈՒԱՅԱԼ։

**Պ. ԼՈՒԱՅ.** (Դորինային՝ թէատրոնին խորը) Բարեւ, քուրիկս. կ՚աղաչեմ, ձայն տուր Տիրոջդ որ հետը խօսիմ։

**ԴՈՐ.** Հիմա քովը մարդ կայ, և չեմ կարծեր որ այս պահուս մարդ մը տեսնելու կարող ըլլայ։

**Պ. ԼՈՒԱՅ.** Ես այս տեղ ձանձրութիւն տալու համար եկած չեմ. իմ գալուստս, կարծեմ, իրեն անհաճոյ չպիտի թուի, և այնպիսի խնդրոյ մը համար կը գամ որու համար շատ ուրախ պիտի՛ ըլլայ։

**ԴՈՐ.** Անուննիդ։

**Պ. ԼՈՒԱՅ.** Ըսէք միայն իրեն որ Պ. Թարթիւֆի կողմէ կը գամ, իր բարւոյն համար։

**ԴՈՐ.** (Օրկօնին) Անուշլեզու մարդ մի է, որ կ՚ըսէ թէ Պ. Թարթիւֆի կողմէ կը գայ, գործի պատճառով, որու համար շատ ուրախ պիտի՛ ըլլաք։

**ԿՂԷ.** (Օրկօնին) Պէտք է որ տեսնես թէ այս մարդը ո՞վ է, և ի՞նչ կրնայ ուզել։

**ՕՐԿՕՆ.** (Կղէանդրոսին) Գուցէ հաշտութիւն առաջարկելու կը գայ. ի՞նչ կերպ զգացմամբ վարուիմ իրեն հետ։

**ԿՂԷ.** Բարկութիւնդ բնաւին ոտք չելնէ, ու թէ որ յարմարութեան մի խօսք ընէ՝ ունկնդիր ըլլաս։

**Պ. ԼՈՒԱՅ.** (Օրկօնին) Բարեւ, Տէ՛ր։ Աստուած՝ պատժէ ձեզի դէշ ուզողը, և ձեզ օգնական ըլլայ որքան որ կը բաղձամ։

**ՕՐԿՕՆ.** (կամացուկ մը, Կղէանդրոսին) Այս քաղցրախօս սկսուածքը իմ գատողութեանս հետ կը համաձայնի և արդէն հաշտութիւն մի կը կանխագուշակէ։

**Պ. ԼՈՒԱՅ.** Ձեր համայն ընտանիք ինձ միշտ սիրելի եղած է, և ատենօք ես ձեր հօր ծառայն էի։

**ՕՐԿՕՆ.** Պա՛րոն, շատ ամօթով եմ և ներում կը խնդրեմ որ ձեզ չեմ ճանաչեր և անուննիդ չեմ գիտեր։

**Պ. ԼՈՒԱՅ.** Անունս՝ Լուայալ է, ընիկ Նորմանտիոյ, գաւազանակիր բարապան եմ, յոյժ կամաց։ Քառասուն տարիէ ի վեր, փառք Աստուծոյ, շատ պատուով այն պաշտօնը վարելու պատիւն ունեցած եմ. հիմա կը գամ, Տէր իմ, որ ձեր թոյլտուութեամբ ազդարարութիւն տամ ձեզ հրամանագրութեան մի . . .

**ՕՐԿՕՆ.** Ի՞նչ. հոս եկած ես որ . . .

**Պ. ԼՈՒԱՅ.** Տէ՛ր իմ, առանց կռիւ։ Այս՝ մի միայն զեկուցում մի է, հրաման մի՝ որ դուք և ձերինները հոսկէ հանուին, կարասիք դուրս պարպուին, և

ուրիշներու տեղ բացուի առանց երկարաձգման կամ յապաղման, ինչպէս որ հարկը կը պահանջէ ։

**ՕՐԿՕՆ.** Ե՞ս ասկէ ելլեմ;

**Պ. ԼՈՒԱՅ.** Այո՛, Պարոն, թէ որ կը հաճիք։ Հիմա տունը՝ ինչպէս որ արդէն տեղեակ էք, բարի Պ. Թարթիւֆին կը վերաբերի՝ առանց ընդդիմութեան։ Այսուհետեւ ձեր ստացուածոց տէր ու իշխանն է, զօրութեամբ այն դաշնագրութեան զոր ձեռքս ունիմ, որն որ ըստ օրինի ձեւակերպուած է, և մարդ բան չկրնար ըսել անոր դէմ։

**ԴԱՄ.** (Պ. Լուայալին) Անշուշտ այդ մեծ լրբութիւն մը է, որու վրայ կը հիանամ;

**Պ. ԼՈՒԱՅ.** (Դամիսին) Պարոն, ես ձեզի հետ գործ չունիմ։ (Օրկոնը ցուցնելով) Իմ գործս Պարոնին հետն է, որ թէ խօսք հասկցող է և թէ բարեբարոյ, և ճիշդ մարդու մը պաշտօնն աղէկ ճանչելով՝ բնաւ չուզեր՝ ուզէ որ արդարութեան դէմ կենայ։

**ՕՐԿՕՆ.** Բայց . . .

**Պ. ԼՈՒԱՅ.** Այո՛, Պարոն, գիտեմ որ միլիոնի մը համար իսկ ըլլար, գլուխ չպիտի վերցնէիք, և պիտի հանդուրժէիք, իբրև պարկեշտ մարդ, որ ինծի տրուած հրամանները հոստեղ գործքի դնեմ։

**ԴԱՄ.** Կրնայիր հոստեղ քո սև վերարկուիդ վրայ՝ Պարոն գաւազանակիր բարապան, գաւազան հրաւիրել։

**Պ. ԼՈՒԱՅ.** (Օրկոնին) Կը խնդրեմ, Պարոն, ըսէք ձեր որդւոյն որ կամ չխօսի կամ մէկ դի քաշուի, շատ պիտի ցաւէի, թէ որ պարտաւորէի որ ձեր անունը իմ դատական արձանագրութեանց մէջ դնէի ու նշանակէի։

**ԴՈՐ.** (մեկուսի) Այս Պ. Լուայալը՝ աներեւս անլուայլին մէկն է։

**Պ. ԼՈՒԱՅ.** Բոլոր բարի մարդոց համար մեծ համակրութիւն ունիմ, և չուզեցի, Պարոն, որ զձեզ դատագիրներով ամբաստանեմ միայն անոր համար որ զձեզ գոհ ընեմ ու ձեզի հաճելի ըլլամ, և այս կերպով՝ զերծ պահեմ զձեզ ուրիշ մէկն ընտրելու մտմտուքէն որ ձեր վրայ իմ ունեցած խնամքիս չափ փոյթ չունենալուն՝ կրնար ինձմէ նուազ քաղցրութեամբ յառաջվարել գործը։

**ՕՐԿՕՆ.** Եւ ասկից աւելի գէշ ի՞նչ կրնայ ընել մէկը՝ երբ կը հրամայէ մարդոց որ տուներնէն դուրս ելնեն։

**Պ. ԼՈՒԱՅ.** Ձեզ ժամանակ կը տրուի, Պարոն. ես մինչև վաղը գործը կ'երկարաձգեմ, որ ինձ հրամայուածը գործքի դնեմ։ Միայն թէ գիշերը հոս անցունելոյ համար՝ իմ տասն մարդոցս հետ այս տեղ գալու եմ, առանց դայթակղութեան և աղմուկի։ Բայց հարկ կ'ըլլայ, ձեւակերպութեան համար՝ թէ որ կը հաճիք, որ ձեր դրան բանալիները, պառկելէ առաջ, ինձ բերեն։ Մեծ խնամք պիտի տանիմ որ ձեր հանգստութիւնը չվրդովի, ու անվայել բան մ'ալ չպատահի։ Բայց վաղը, առտու կանուխ՝ պէտք է փոյթ ըլլաք՝ որ մինչև ամենէ փոքրիկ կահը՝ տունէն դուրս պարպէք։ Իմ մարդիկս, որոնց հուժկուներն հետս առած եմ, ձեզ պիտ' օգնեն, որ ամէն բան դուրս հանելու համար ձեզ ծառայեն։ Կարծեմ, որ իմ ըրածէս աւելի լաւ բան չկրնար ըլլուիլ. և ըստ որում ես ձեզի հետ մեծ քաղցրամտութեամբ կը վարուիմ, երդում կը ձգեմ



որ դուք ալ, Պարոն, պարտքերնիդ ճանաչէք, և իմ պաշտամանս պահանջմանց մէջ բանի մը դէմ չկենաք։

**ՕՐԿՕՆ.** (մեկուսի) Իմ ձեռքս մնացած հարիւր կլորիկ լուիճները մեծաւ հաճութեամբ կը հանէի կը տայի իսկոյն, թէ որ սա մարդուն քթին բերնին, ուզածիս պէս, կրցուելու չափ ուժգին բռունց մը կպցնելու կարելի ըլլար։

**ԿՂԷ.** (կամացուկ մը Օրկոնին) Թո՛ղ տուր, գործը մ'աւրեր։

**ԴԱՄ.** Այս անտանելի լրբութեան դէմ չեմ կրնար ինքզինքս զսպել, և ափս կը քերուի։

**ԴՈՐ.** Այդ աղուորիկ կռնակին, Պարոն Լուայալ, մէկ քանի գաւազանի հարուածներ գէշ չպիտի վայլէին։

**Պ. ԼՈՒԱՅ.** Այդ նախատական խօսքերը կրնային պատժուիլ, անուշիկս, գիտէ՞ք որ կանանց դէմ ալ կը վճռագրեն։

**ԿՂԷ.** (Պ. Լուայալին) Վերջ ընենք, Պարոն. ալ բաւական եղաւ։ Շնորհ ըրէք, սա թուղթը տուէք շուտ, ու մեզ հանգիստ թողէք։

**Պ. ԼՈՒԱՅ.** Մինչ ցկրկին տեսութիւն։ Աստուած զձեզ ամէնքդ ուրախ պահէ։

**ՕՐԿՕՆ.** Քե՛զ ալ շփոթէ, քեզի ղրկո՛ղն ալ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՕՐԿՕՆ, ՏԻԿԻՆ ԲԷՐՆԷԼ, ԷԼՄԻՐԱ, ԿՂԷԱՆԴՈՍ, ՄԱՐԻԱՆԱ, ԴԱՄԻՍ, ԴՈՐԻՆԱ։

**ՕՐԿՕՆ.** Աղէ՛ ուրեմն, մայր իմ, տեսա՞ք հիմա, ունի՞մ եղեր իրաւունք. և մնացեալին վրայ դատողութիւն ընելու էք ըլլալիք դատաւարութենէ։ Իր մատնութիւններուն տեղեկացա՞ք հիմա։

**ՏԻԿ. ԲԷՐՆ.** Բոլորովին ապշած ու շուարած եմ։

**ԴՈՐ.** (Օրկոնին) Փուճ տեղ կը տրտնջէք, փուճ տեղ զան կը պարսաւէք, չէ՞ք նայիր որ իր երկիւղած նպատակները կը հաստատուին անոնցմով։ Ընկերին սիրոյն մէջ իր առաքինութիւնը կը պսակուի. այն գիտէ որ ինչքը տեւպ զմարդ կը խանգարեն, և ձեր փրկութեան արգելք ըլլող ամէն բաները՝ անմեղ գթասիրութեամբ ձեզմէ կորզել կ'ուզէ։

**ՕՐԿՕՆ.** Գոցէ՛ բերանդ։ Դուն միշտ կ'ուզես որ բան մը խօսիս։

**ԿՂԷ.** (Օրկոնին) Երթանք նայինք ինչ խորհուրդ կրնանք ընտրել քեզի համար։

**ԷԼՄ.** Գացէ՛ք երևան հանեցէք ապերախտին խայտառակութիւնը։ Այս հնարաւորութիւնը՝ դաշնագրոյն զօրութիւնը կը ջնջէ. և մեր կարծեաց համեմատ՝ անոր ունենալու յաջողութեան համբերելով, իր անհաւատարմութիւնը շատ սատանայական երևալու է։

# ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԱՂԵՐԻՈՍ, ՕՐԿՕՆ, ՏԻԿԻՆ ՊԷՐՆԷԼ, ԷԼՄԻՐԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴԱՄԻՍ, ՄԱՐԻԱՆԱ, ԴՈՐԻՆԱ:

**ՎԱՂ.** Ցաւօք սրտի, Պարոն, կը գամ որ ձեզ վշտացնեմ, բայց անհրաժեշտ վտանգին սախպողականութենէ հարկադրեալ կը գտնուիմ: Ինծի հետ սլինա անկեղծ մտերմութեամբ կապուած բարեկամ մի, որ գիտէ թէ ինչ իրաւամբ ձեզ շահօգուտ ունենալ կը ջանամ, փափկազգաց կերպով մի, գաղտնադրուժ դաւուեցաւ առ ի շնորհս իմ, ի վեր հանելով գաղտնիք մի՝ զոր ծածուկ կը պահեն կառավարութեան գործոց մէջ, և ինձ այս կէտիս լուր մ'ազդարարեց, որկէ կը հետեւցնեմ թէ դուք անմիջապէս փախչիլ պէտք էք: Նենգաւորը որ շատոնց ի վեր զձեզ կը խաբէր, ժամէ մ'ի վեր զձեզ առ իշխանն կ'ամբաստանէ, և զձեզ մեղսակից կարծեցնել կ'ուզէ, անոր ձեռքը յանձնելով Տէրութեան յանցապարտի մի կարեւոր գզրոցը, որու, կ'ըսէ, հպատակի մ'ունենալու պարտաւորութեանց ներհակ՝ եղեռնալի գաղտնեացը խորհրդապահն եղած էք: Ձեզի վերընծայուած ոճիրին մանրամասնութեանց տեղեակ չեմ. բայց գիտեմ որ ձեր անձին դէմ հրաման մ'ելած է. և այս հրամանը լաւ գործքի դնելու համար, ինք յանձն առած է, որ զձեզ ձերբակալ ընելու մարդուն հետ ընկերանայ:

**ԿՂԷ.** Իր իրաւունքը զինուած է. և ահա այս կերպով է որ մատնիչը ձեր բոլոր ընչից տէր ըլլալ ուզելու կը յաւակնի:

**ՕՐԿՕՆ.** Այս մարդը, ճշմարիտ, չարագործ անասունին մէկն է:

**ՎԱՂ.** Ամենափոքր ժամանակի կորուստը ձեզ աղետաբեր կրնայ ըլլալ: Ես՝ զձեզ տանելու համար, կառքս դրան առջև կեցուցած և հետս հազար լուի՛ բերած եմ ձեզ: Ժամանակ չկորսնցնենք բնաւ. ձախողութիւնը շանթահար է, և այսպիսի յանկարծադիպութենէ՝ փախչելով միայն կը ճողոպրուի: Ես զձեզ ապահով տեղ մի զետեղելու համար պիտի առաջնորդեմ, և մինչև ձեր փախուստին վերջը ձեզ պիտի ընկերանամ:

**ՕՐԿՕՆ.** Բա՛րբէ, որքան երախտապարտ եմ ձեր պարտաւորիչ խնամոց, և ձեզմէ շնորհակալ ըլլալս՝ ուրիշ ժամանակի կը թողում. և կը հայցեմ Աստուծմէ որ ինձ ձեռնտու ըլլայ որ օրին մէկն այս վեհանձնական ծառայութեան երախտագէտ ըլլամ: Մնաք բարեաւ. հոգ տարէք, դուք՝ . . .

**ԿՂԷ.** Փախիր շուտ. մենք ինչ ընելուքնուս վրայ կը մտածենք, եղբայր իմ,

# ՏԵՍԱՐԱՆ Է.

ԹԱՐԹԻՒՖ, ՊԱՇՏՕՆԱԿԱԼ ՄԻ, ՏԻԿԻՆ ՊԷՐՆԷԼ, ՕՐԿՕՆ, ԷԼՄԻՐԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ՄԱՐԻԱՆԱ, ՎԱՂԵՐԻՈՍ, ԴԱՄԻՍ, ԴՈՐԻՆԱ:

**ԹԱՐ.** (Օրկօնը արգիլելով) Կեցի՛ր նայինք, Պարոն, կեցի՛ր, այդքան



շուտ մի՛ վազեր. շատ հեռու չպիտի կրնաս երթալ որ քու որջդ գտնես, և իշխանին կողմէ ալ՝ կալանաւոր եղած ես:

**ՕՐԿՕՆ.** Մատնիչ. դուն այս հարուածը վերջի համար պահած էիր. և այս յանկարծահարութեամբ է, ապիրատ, որ զիս կը կործանես, և ահա քու բոլոր նենգութիւններդ պսակուած են:

**ԹԱՐ.** Ձեր նախատինքը չեն կրնար զիս բնաւ զայրացնել. և ես ուսեալ եմ յերկնից որ ամեն բանի համբերեմ:

**ԿՂԷ.** Իր կրից զսպումը սքանչելի է, ճշմարիտ:

**ԴԱՄ.** Անզգամը ինչպէս անամօթութեամբ զերկինք ծաղր կ'ընէ:

**ԹԱՐ.** Ձեր բոլոր յուզմունքը չեն կրնար զիս ի գութ շարժել. և ուրիշ բան չեմ մտածեր, բայց եթէ իմ պարտքս ընել:

**ՄԱՐ.** Ասով կը յաւակնիս որ մեծ փառք մ'ըստանաս. և այս պաշտօնն ալ քեզի համար խիստ պարկեշտ զբաղմունք մի սեպես:

**ԹԱՐ.** Այս պաշտօնը շատ փառաւոր կրնայ սեպուիլ, քանի որ զիս հոս տեղ ղրկողին զօրութեան կողմէն է:

**ՕՐԿՕՆ.** Բայց միտքդ կը բերե՞ս անգամ մի, ո՛վ ապերախտ, որ իմ գթասէր ձեռքս զքեզ խղճալի վիճակէ մի դուրս քաշեց:

**ԹԱՐ.** Այո՛, գիտեմ ինչ օգնութիւն կրցայ ընդունիլ անկէ, բայց այժմ իշխանին շահօգուտը՝ իմ առաջին պարտքս է: Այս նուիրական պարտքին արդարացի բռնաբարութիւնը՝ սրտիս մէջ ամեն երախտագիտութիւն կը խեղդէ. և այսքան զօրաւոր կապերուն՝ կրնայի զոհել բարեկամ, կին, ծնողք և ինզինքս անգամ անոնց հետ:

**ԷԼՄ.** Զարանե՛նգը.

**ԴՈՐ.** Ի՛նչպէս նենգամիտ կերպով բոլոր սրբազան բաները պատրուակ ընել գիտէ:

**ԿՂԷ.** Սակայն, թէ որ դուն այնքան կատարեալ եռանդ ունէիր որ զքեզ կը յագեցնէ և որով կերպարանեալ կ'երեւիս, ինչո՞ր կ'ըլլայ, որ յայտնուելու համար, միտքը կը դնէ որ սպասէ և կնոջը ետեւէն ինկած ժամանակդ զքեզ յանկարծ բռնէ, և դուն զան ձեռք տալու որոշմունք չես ըներ՝ մինչև որ իր պատիւը չպարտաւորէ զինք որ զքեզ վռնտէ: Ես՝ իրեն քեզ պարգեւած բոլոր բարիքը իրմէ կորզելու պարտաւորելուդ վրայ չեմ խօսիր բնաւ. այլ՝ այսօրուան օրս զինք իբր յանցաւոր զրպարտելով՝ ինչո՞ւ կը հաւանէիր որ իրմէ բան մի ընդունիս:

**ԹԱՐ.** (Պաշտօնակալին) Պա՛րոն, այս գլխացաւ ձայներէն ազատէ՛ զիս, ու կ'աղաչեմ, որ քեզ տրուած հրամանը գործքի դնելու բարեհաճիս:

**ՊԱՇՏՕՆԱԿԱԼԸ.** Այո՛, անտարակոյս շատ ատեն ալ անցուցի, զայն կատարելու. և քու բերանդ ի դէպ ժամու կը հրաւիրէ զիս որ պարտքս կատարեմ. և զան գործադրելու համար՝ ա՛ս ժամուս ել ետեւէս բանտ եկուր, ու զքեզ պիտի բնակեցնեմ:

**ԹԱՐ.** Ո՞վ, ե՞ս, Պարոն:

**ՊԱՇՏՕՆ.** Այո՛, դուն:

**ԹԱՐ.** Ինչո՞ւ ուրեմն բանտ:

**ՊԱՇՏՕՆ.** Քեզի հետ հակաճառելու ատեն չունիմ: (Օրկօնին) Սիրտերնիդ հանդարտեցուցէք, Պարոն, այսպիսի խռովարեր ահայզէ մի: Այնպիսի իշխանի տակ կ'ապրինք որ դաւաճանութեան թշնամի է, իշխան մի՝ որոյ աչերը սրտից խորերը կը զննեն, և զորս նենգագիտաց վարպետութիւնը չկրնար պատրել: Իր վեհանձն սիրտը, շրջահայեաց ընտրողութեամբ յարդարուած՝ ամեն բանի վրայ միշտ շիտակ աչքով կը նայի. իր տեսութեան մէջ բան մի չի կրնար երբէք յանկարծական մուտ գտնել, և իր հաստատամտութիւնը ոչ մէկ չափազանցութեան մի մէջ կ'ինկնի: Բարեբարոյ մարդոց՝ անմահ համբաւ կը տայ.

բայց առանց կուրութեան՝ այս բարենախանձութիւնը կը փայլեցնէ, և անկեղծներու վրայ ունեցած սէրը երբեք իր սիրտը չգոցեր այն ամեն բանի՝ որով կեղծաւորները սարսափ կրնան պատճառել։ Այս մարդը՝ կառավարութեան մտքէն չէր անցներ որ բանուի որ բազմանենգ որոգայթներէ ինքզինք պաշտպանել կը ցուցնէ. Նախ՝ իր սրտին գաղտնիքը բանալով, իրենց ակներև յստակութեամբը բոլոր վատութիւնները երևան հանեց։ Զձեզ ամբաստանելու գալով՝ ինքզինք մատնեց. և վեհագոյն արդարութեան ուղիղ հարուածովը, իշխանը՝ անոր երևելի խաբեբայ մ'ըլլալը ճանաչեց, որ ուրիշ անուան մի տակ ինքզինք ծանուցած էր։ Այս մարդուն բոլոր չարագործութեանց երկայնբարակ մանրամասնութիւնները բազմահատոր պատմութեանց գրքեր կրնան լեցնել։ Իշխանը, վերջապէս, ասոր ձեզի դէմ ունեցած վատ ապերախտութիւնը և գաւաճանութիւնը տեսեց. այս ժանտագործութիւնն ալ միւսերուն կարգն անցուց և զիս իրեն հետ մինչև հոս ուրիշ մտօք չխրկեց, բայց եթէ իր անամօթութեան մինչև վերջին ծայրը երթալը տեսնելու և իրմով՝ ձեզ ամեն բանի իրաւունք ունենալ տալու։ Այո՛, ձեր այն ամեն թղթերը՝ որոնց ինք տէր է կ'ըսէ, կ'ուզէ որ այս մատնչէն կապտեմ և զանոնք ձեր ձեռք յանձնեմ։ Իր իշխանական զօրութեամբը դաշնագրութեան բոլոր կապերը կը խզէ որ ձեր բոլոր ինչքը անոր բաշխելու կը տրամադրէն։ Եւ կը ներէ ձեզ վերջապէս այն գաղտնի յանցանաց համար, որուն մէջ, բարեկամի մ'ապաւինութիւնը, զձեզ ինկնիլ տուած էր։ Ահա՛ այս է գնահատութիւնը զոր կրնայ տալ ձեզ՝ ատենօք իր իրաւանց կռթնելով ձեր ցուցուցած եռանդեան ի փոխարէն, որպէս զի ձեզ ապացուցանէ, թէ մոքերնէդ չանցած՝ իր սիրտը բարեգործութեան վարձահատոյց ըլլալ գիտէ. թէ արժանաւորութիւնը բան չկորսնցներ իր քով. և թէ չարէն աւելի լաւ՝ բարին կըյիշէ։

**ԴՈՐ.** Օրհնեա՛լ է Աստուած։

**ՏԻԿ. ՊԷՐՆ.** Հիմա շունչ կ'առնեմ։

**ԷԼՄ.** Բարերա՜ղդ յաջողութիւն։

**ՄԱՐ.** Ո՞վ կը համարձակէր որ ըսէ։

**ՕՐԿՕՆ.** (Թարթիւֆին՝ զոր պաշտօնակալը կը տանի) Աղէ՜ ուրեմն, տեսա՛ր հիմա, մատնիչ։

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՏԻԿԻՆ ՊԷՐՆԷԼ, ՕՐԿՕՆ, ԷԼՄԻՐԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԿՂԷԱՆԴՐՈՍ, ԴԱՄԻՍ, ՎԱՂԷՐԻՈՍ, ԴՈՐԻՆԱ։

**ԿՂԷ.** Ա՛հ, եղբայր իմ, կեցի՛ր, ու ընաւ անարժանութեանց մի՛ խոնարհեցներ ինքզինքդ. Թո՛ղ թշուառականը իր դառն վիճակին, և մի՛ յարիր իր խղճմտանքի խայթերուն որ զինք կ'ընկճեցնեն, առաւել բարեմաղթէ՛, որ աշխարհիս մէջ, իր սիրտը՝ առաքինութեան ծոցը երջանիկ դարձ մ'ընէ. իր մոլութիւնն ատելով իր կեանքը սրբագործէ՛. և երանի՜ թէ մեծ իշխանին անաչառութիւնը մեղմացնէ. երբ դուք ձեր կողմէ՝ իր բարութեանց դէմ ծունկի գալով փոխարինէք՝ ինչ որ այսպիսի մարդասէր վարմունքը կը պահանջէ։

**ՕՐԿՕՆ.** Այո՛, շատ աղէկ ըսիր։ Երթանք ուրախութեամբ իր ոտքն ինկնինք ու գոհութիւն յայտնենք իր սրտին՝ մեզ ցուցուցած բարութեանց համար. այս առաջին պարտքերնիս քիչիկ մի կատարելէն ետք՝ մեկ ուրիշ մ'իրաւացի խնամոց փոյթ տանելու աշխատինք Վաղերիոսի պէս վեհանձն ու անկեղծ սարփաւորին սէրը՝ ուրախալի հարսանեօք պսակելով։

### ՎԵՐՋ ԹԱՐԹԻՒՖԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0108414